

**ՊԱՏԱՍԽԱՆՈՂՆ Է
ՄԻՆԱՍ ԹԵՕԼԵՕԼԵԱՆ**



«Հորիզոն» Հրատարակչություն, Մոնթրեալ, 2026

Les Publications Arméniennes (1991)

3401 Olivar Asselin

Montréal, Québec

H4J 1L5

ISBN 978-2-9806031-3-6

Dépôt légal - Bibliothèque et Archives Nationales du Québec, 2026.

**ՊԱՏԱՍԽԱՆՈՂՆ Է
ՄԻՆԱՍ ԹԷՕԼԷՕԼԵԱՆ**

«Հորիզոն»-ի յաւելուած

Խմբագիր՝
ՎՐԷԺ-ԱՐՄԷՆ ԱՐԹԻՆԵԱՆ

«Հորիզոն» հրատարակչութիւն

Մոնթրէալ

2026

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐԱԾԱԿԱՆ	Էջ 5
ՄԻՆԱՍ ԹԷՕԼԵՕԼԵԱՆ - Կենսագրական գիծեր	Էջ 7
ՊԱՏԱՍԽԱՆՈՂՆ Է ՄԻՆԱՍ ԹԷՕԼԵՕԼԵԱՆ	Էջ 10
Անճանկանը՝ հաւաքականին դէմ առ դէմ	Էջ 10
Մեր կեանքը՝ Թէօլօլեանի պրիսմակին ընդմէջէն	Էջ 16
«Մեր հողերու որոտը» եւ Հայ դատը	Էջ 19
Սրբագրելի թերացումները	Էջ 23
Մամլոյ սպասարկուն եւ մեր մամուլը	Էջ 30
Մեր գիրն ու գրականութիւնը՝ խորհրդային կարգերու տակ	Էջ 32
Լեզու եւ ուղղագրութիւն...	Էջ 37
«Դար մը գրականութիւն» եւ անկէ անդին	Էջ 43
Ի ՅՈՒՇ - ՈԼՍՈԼԵԻՉ	Էջ 46

(Մինաս Թէօլօլեանի գունատր նկարները, բացի մէկէն, առնուած են զրուցավարին կողմէ)



ՆԵՐԱԾԱԿԱՆ

Քսաներորդ դարու հայ կեանքի ականաւոր, բացառիկ անհատականութիւններէն հանդիսացած է Մինաս Թէօլէօլեան՝ ուսուցիչ ու տնօրէն, հրապարակագիր ու խմբագիր, գրող ու գրականագէտ, նաեւ ազգային գործիչը, որուն յիշատակը թարմացնելու կը ծառայէ «Հորիզոն»-ի սոյն բացառիկը:

Ան կը բովանդակէ «Հորիզոն»-ի հինգ յաջորդական թիւերու «Գրական հորիզոն» բաժնի այն ատեն մեծադիր էջերով 1982 սեպտեմբեր 13-էն հոկտեմբեր 11 լոյս տեսած «Պատասխանողն է Մինաս Թէօլէօլեան» վերնագրուած այս հարցազրոյցը ու անոր ընկերացող կենսագրական գիծերը: Անոնք Մինաս Թէօլէօլեանի մանր ձեռագրով՝ 45 փոքր էջերու վրայ, գրաւոր ուղարկուած են ինծի:

Ընթերցողը չի կրնար չնկատել, թէ շուրջ չորս տասնամեակ ետք, որքան այժմէական կը հնչեն տակաւին այս արժանաւոր մտաւորականին մտքերը, որոնք խորաթափանց ակնարկով կը դառնան դէպի անցեալը, հմտօրէն կը վերլուծեն ներկան ու մարգարէական կարողութեամբ կը տեսնեն ապագան՝ այդ ըլլայ մեր ազգային-քաղաքական, մշակութային թէ լեզուական ոլորտներու մէջ:

Այս վերախմբագրուած տարբերակն է այդ առաջին հրապարակումին: Չէ փոխուած իր կողմէ որդեգրուած «ամէն» եւ «ճիշդ» բառերու տարածուած ուղղագրութիւնը (պահելով նոյնը՝ հարցումներուն ալ պարագային), այլապէս բաւական խմբագրում կատարուած է աւելի դիւրընթեռնելի դարձնելու համար ներկայ տարբերակը, իսկ կենսագրութեան աւարտին աւելցուած է Մ. Թէօլէօլեանի մահուան թուականը: Յատուկ շնորհակալութիւն կը յայտնեմ տիկ. Էլիզա Չաքմաքչեանին եւ այժմ արդէն ողբացեալ բժ. Արմենակ Եղիայեանին՝ իրենց անսակարկ օժանդակութեան համար այս մարզին մէջ:

Վերջաւորութեան աւելցուցած եմ Մինաս Թէօլէօլեանի մահուան առթիւ գրած յօդուածս՝ «Ուսուցիչը»:

Թէօլէօլեանի յիշատակին յարգանքի տուրք մը ըլլալէն անդին սակայն, այս հրատարակութիւնը կ'ուզէի որ հրաւէր մը ըլլար բոլոր անոնց, որոնք կը գնահատեն իր վաստակը, հրաւէր մը՝ գոյացնելու անհրաժեշտ նիւթական կոուլանները, որպէսզի հրատարակուին անոր անտիպ երեք ուսումնասիրութիւնները, որոնց կ'անդրադարձուի յաջորդ էջերուն մէջ:

ՎՐԷԺ-ԱՐՄԷՆ ԱՐԹԻՆԵԱՆ



ՄԻՆԱՍ ԹԷՕԼԵՕԼԵԱՆ

Կենսագրական գիծեր

Ծնած է 1913 նոյեմբեր 24-ին՝ Պարտիզակ, Նիկոմիդիոյ (Իզմիր) գուտ հայաբնակ գիւղին մէջ, սակայն հազիւ երկու տարի ետք, երբ ծնողքը տարագրուած են Գոնիա, ինք, տակաւին մանկիկ, գինուորական բժիշկ հօրեղբօր ու հօրաքրոջ հետ փոխադրուած է Իզմիր՝ ուր մինչեւ 1920 ապրել է ետք, աքսորէ վերադարձող ծնողքին հետ հաստատուած է Պոլիս:

1920 – 1927 ապրած են Օրթաքէօյ (Միջագիւղ), ուր յաճախած է Սրբոց թարգմանչաց նախակրթարանը: Այս վարժարանէն կը սկսին իր ծանօթութիւնն ու կապերը քանի մը հանրային գործիչներու եւ յայտնի մտաւորականներու հետ, որոնք մինչեւ իրենց մահը գուրգուրանքով հետեւած են պատանի եւ ուսանող թէօլէօլեանի սկզբնական քայլերուն՝ մամուլի մէջ, – Խոսրով Պապայեան՝ տնօրէն Թարգմանչաց վարժարանի, ազգային երեսփոխան, հանրային գործիչ եւ դաշնակցական նուիրեալ, որ Քեմալականներու երեւումէն ետք անցած է Միաց. Նահանգներ. Համասփիւռ Միրզախանեան (Համաս)՝ յեղափոխական իր գործունէութեամբ յայտնի խիզախ վասպուրականցին. Հրանտ Տէր Անդրէասեան, յայտնի մտաւորական եւ վաստակաւոր դասախօս, որ Պէզազեան եւ Կեդրոնական բարձրագոյն վարժարաններուն մէջ սերունդներ թրծեց՝ իբրեւ ուսուցիչ հայ լեզուի ու գրականութեան, նա՛եւ անգլերէնի. Օննիկ Պասմաճեան (Արեգ Տիրազան)՝ արձակագիր գրագէտ եւ վաստակաւոր ուսուցիչ-դաստիարակ: Ու տակաւին՝ Մինաս Շալեան (ուսուցիչ պատմութեան), Սիրանոյշ եւ Նոյեմի Թունուզեան քոյրեր, Թովմաս քհնյ. Շիկահեր եւ ուրիշներ, որոնք ներշնչելու եւ ոգի՛ ստեղծելու կոչումով դաստիարակչական գործի լծուած յիշատակելի անուններ եղած են պոլսահայ կեանքի 1920 – 1940-ական թուականներուն:

1927 – 1932, հետեւած է Փանկալթիի Վիեննական Մխիթարեան վարժարանի հայագիտական դասընթացքին եւ գիտական ճիւղերուն՝ մինչեւ 1932-ի յունիս ամիսը, եւ, ընթացաւարտ, 1932 – 1935 հրաւիրուած է դասախօսելու հայ լեզու եւ գրականութիւն՝ նո՛յն հաստատութեան 6-9-րդ կարգերուն մէջ:

Լեզուի եւ դասական ու նոր գրականու-

թեան իր ուսուցիչները եղած են Հայր Հմայեակ Համբարեան եւ Հայր Պետրոս տէր Պօղոսեան, իմաստասիրութեան ուսուցիչը՝ Գարեգին Գաւաֆեան, պատմութեան եւ տնտեսագիտութեան ուսուցիչը՝ Յովհ. Շահնազար (Պոլսոյ «Հայրենիք»ի հիմնադիրներէն), ուսողական գիտութիւններ՝ Համբարձում Յարութիւնեան (յայտնի բանաստեղծ Ջոհական, որ յայտնի է նաեւ Զօհրապ Կարօն անունով), Հրանդ Օրմանեան (գարմիկը Օրմանեան պատրիարքի), ու տակաւին աշխարհական եւ եկեղեցական դէմքեր՝ որոնց կարգին Վիեննականներու յետոյ աբբահայր հանդիսացած գերպ. Գրիգորիս Մանեան:

1935-ի մայիսէն մինչեւ 1936-ի նոյեմբեր, գինուորական իր պարտադիր պարտականութիւնը լրացնելէ ետք, 1936 – 1938, երկու տարի, պաշտօնավարած է Սոֆիայի (Պուլկարիա) Գէորգ Մեսրոպ ճեմարանին, ապա նաեւ Կոնստանցայի (Ռումանիա) ազգային վարժարանին մէջ՝ իբրեւ դաստիարակ-ուսուցիչ հայ լեզուի եւ գրականութեան:

Թէօլէօլեանի հանրային-կազմակերպական եւ ուսուցչական կեանքի առաջին դառն փորձառութիւնը կը գուգադիպի 1936-ի յունուարին, երբ հազիւ քանի մը ամիսէ ի վեր պաշտօնի ձեռնարկած՝ ճեմարանէն պաշտօնէ արձակուած երկու ուսուցիչներու կողմէ կը զրպարտուի պուլկարոստիկանութեան մօտ իբրեւ... «Թուրք Սպայից վարժարանը աւարտող կասկածելի անձ», հրահանգ կը ստանայ պուլկարական հողերէն հեռանալու:

Կեանքի դառն հեզանքներէն մէկը կայ թէօլէօլեանի ճակատագրուած այս դէպքին մէջ... Թէօլէօլեան 1935 թուականէն սկսեալ, այսինքն տակաւին Սոֆիա չմեկնած, Պոլսէն կապ հաստատած էր Գահրիբէի «Յուսաբեր»-ին ու անոր պատասխանատու խմբագիր Վահան Նաւասարդեանի հետ՝ կանոնաւորաբար աշխատակցելով թերթին, թրքական կեանքի եւ խորհրդահայ գրականութեան յատկացուած յօդուածներով, Արմէն Ամատեան եւ Վազգէն Վանանդեան գրչանուններով: Նոյն թուականներուն կը գուգադիպի նաեւ իր աշխատակցութիւնը Պոսթընի «Հայրենիք»-ին, իբրեւ

Թղթակից եւ Թրքական ու գրական նիւթերու յօդուածագիր: Սոֆիա հասնելէ ետք, բնակա- նաբար կապ կը հաստատէ նաեւ Պուլկարիոյ ՀՅԴ պաշտօնաթերթ «Ազատ խօսք»-ի խմբագ- րութեան հետ, որուն խմբագիրն էր Օննիկ Մխիթարեան («Վանայ հերոսամարտը» գործին հեղինակ ու վաստակաւոր դաշնակցական գոր- ծիչ), իսկ վարիչներէն մէկը՝ Գէորգ Հալաճեան (Թափառական), հեղինակը «Դէպի կախաղան» յուշագրական գործին: Հետագային (1938-ին) միայն կը պարզուի, որ զրպարտագիրը ստո- րագրող երկու դաշնակցականները, տեղական հակամարտութեանց հետեւանքով, «քաւու- թեան նոխազ» դարձուցած են Թէօլէօլեանը՝ զայն նկատելով մտաւորական մը, որ «եկած էր գործակցելու իրենց անձնապէս հակառակորդ դեկավարներու հետ...»: Պուլկար ոստիկանու- թեան յղուած զրպարտագրի պատճէնը ու տխուր դէպքի մանրամասնութիւնները քննութեան նիւթ դարձնելէ ետք, ՀՅԴ Բիւրոն արտաքսեց այդ երկու կուսակցականները իր շարքերէն: Կեանքի այս դրուագին պատմութիւնը հոս չի վերջանար սակայն, կը հասնի մինչեւ 1960- ական թուականներ, երբ զրպարտագիրը ստո- րագրող անձերէն մին, Գերմանիայէն Միացեալ Նահանգներ գաղթող տարագիրներու հետ կու գայ Տիթրոյիթ եւ Թէօլէօլեանի հետապնդում- ներուն վրայ գրի առնուած ընդարձակ նա- մակով մը կը խոստովանի իր արարքին յետին մանրամասնութիւնները. ա՛յլապէս հետաքրք- րական՝ սակայն սահմանուած... պատմութեան:

1936 – 1938 Թէօլէօլեան կը պաշտօնա- վարէ Կոնստանցայի ազգային վարժարանին մէջ, սակայն 1938-ի ամառնավերջին հարկադ- րաբար ու ակամայ կը վերադառնայ Պուլիս, որովհետեւ ռումանական կառավարութիւնը չի վերանորոգեր բնակութեան եւ պաշտօնավա- րութեան իր արտօնագիրը, իբրեւ Թրքահայա- տակի:

1938 – 1944, Պուլսոյ մէջ կ'ապրի երի- տասարդական տարիքի իր ամէնէն դառն տա- րիները: Թրքական ոստիկանութիւնը Սոֆիայի իր դեսպանատան միջոցով տեղեկացած ըլլա- րով Սոֆիայի դէպքին ու լսած ըլլալով որ ան «գործ ունեցած է Դաշնակներու հետ», գինք հարցաքննութեան, ապա նաեւ ուսուցչական իրաւունքէ զրկումի կ'ենթարկէ: Թէօլէօլեան շրջան մը կը պաշտօնավարէ Վահրամ Կեսարե- անի «Տիրոջը ձայնը» առեւտրական հաստա- տութեան մէջ՝ իբրեւ հաշուակալ եւ դիւանա- տան պաշտօնեայ, բայց երբ վրայ կը հասնի 1939 – 1944 տարիներու Երկրորդ աշխարհա- մարտը, իր տարեկիցներուն հետ երկու անգամ

եւս զօրակոչի կ'ենթարկուի, իբրեւ պահեստի զինուոր՝ բանակին մէջ մեկուսացուելով իբրեւ «կասկածելի եւ վնասակար տարր» (մուզըր էչ- հաս): Յուշագրային վէպի մը չափ նիւթ կարե- լի է գտնել այս վեց տարիներու իր կեանքին մէջ...:

1943-ի դեկտեմբերին ամուսնանալէ ետք Գոհար Չոպանեանի հետ (ներկայիս Թէ- օլէօլեան), 1944-ի յուլիսին, վերջին գինուորա- կանութեան շրջանը լրացնելէ քանի մը շաբաթ ետք, կը յաջողի երկրէն մեկնումի արտօնութիւն ձեռք բերել ու հոգելոյս Ջարեհ Ա. կաթողիկո- սի (այն ատեն եպիսկոպոս) եւ Պուլսոյ Մեսրոպ արք. Նարոյեան պատրիարքի կարգադրու- թեամբ՝ կ'անցնի Սուրիա, ուր պիտի ձեռնարկէր ուսուցչական պաշտօնի: Իր մեկնումէն քա- նի մը շաբաթ առաջ՝ կը վախճանի Նարոյեան պատրիարք:

Թէօլէօլեան, իր կնոջ՝ տիկ. Գոհար Թէ- օլէօլեանի հետ, 1944 – 1956 կը պաշտօնավարէ Հալէպի մէջ, 1944 – 1947՝ ուսուցիչ Հայկազ- եան վարժարանի, իսկ 1946 – 1956՝ խմբագիր ՀՅԴ Սուրիոյ շրջանի պաշտօնաթերթ «Արե- ւելք» օրաթերթի եւ տեսուչ ու հայ գրականու- թեան դասախօս Քարէն Եփփէ ճեմարանի (1947 – 1956):

1956-ին, «Յուսաբեր»-ի խմբագիր Վա- հան Նաւասարդեանի մահուան հետեւանքով, իբրեւ խմբագիր կը հրաւիրուի Գահիրէ, սակայն տարի մը միայն կը մնայ հոն: Պէյրութի Ս. Նշան բարձրագոյն վարժարանի տնօրէն Եղուարդ Տարօնեանի կաթուածահարութեամբ՝ կը ծագի հարկադրանքը նոր տնօրէնի մը, եւ Լիբանանի հայոց առաջնորդ Խորէն արքեպիսկոպոսի մի- ջամտութեամբ՝ Թէօլէօլեան հարկադրաբար կը հրաժարի խմբագրական իր պաշտօնէն, ստանձ- նելու համար այդ (ներկայ Խանամիրեան) վար- ժարանի տեսչութիւնը, զոր կը վարէ մինչեւ 1960-ի մարտ ամիսը:

1968 յուլիսին կու գայ Պոսթըն, ուր կը մնայ մինչեւ մահը: Հոն ան վարած է Հիւսիսա- յին Ամերիկայի արեւելեան շրջանի ՀՅԴ Կեդ- րոնական կոմիտէի քարտուղարութիւնը 1960 – 1968, իսկ Գուրգէն Մխիթարեանի մահէն ետք (1962) «Հայրենիք» օրաթերթի խմբագրու- թիւնը՝ մինչեւ 1979 ապրիլ:

Խմբագրական եւ ուսուցչական իր գոր- ծունէութեան առընթեր, Պուլսոյ մէջ ուսանողու- թեան թէ ուսուցչութեան տարիներէն սկսեալ, աշխատակցած ու խմբագրական պաշտօններ վարած է նաեւ Պուլսոյ «Նոր լուր», «Ժամա- նակ», մասնաւորաբար «Ազդարար», ապա նա- եւ «Մարմարա» (շաբաթաթերթ) թերթերուն



1954-ի շուրջ, Հալեպ, Քարէն Եփփէ ճեմարանի առաջին հունձքը՝ ուոքի, իսկ նստած՝ Եղուարդ Էլոյեան, Գոհար Թէօլէօլեան, Զարեհ եպս. Փայասլեան, Մինաս Թէօլէօլեան, Յասմիկ Նաճարեան

մէջ՝ 1928 – 1944:

Տասնըհինգ տարեկանին, իր առաջին ոտանաւորը հրատարակուած է «Նոր լուր» օրաթերթին մէջ՝ Հրանդ Ասատուրի մահուան առիթով: Նոյն թուականներուն (1933-էն սկսեալ) Արմէն Ամատեան եւ Վազգէն Վանանդեան գրչանուններով Պոլսէն աշխատակցած է «Յուսաբեր», «Յառաջ» եւ «Հայրենիք» օրաթերթերուն եւ գրական պարբերաթերթերուն: 1982-ը իր գրական, հրապարակագրային եւ ուսուցչական գործունէութեան 50-ամեակն էր:

Հանրային-կազմակերպական, պարտականութիւններով շրջած է արտասահմանեան դպրութիւններ:

Անջատ հատորով հրատարակուած իր գործերն են «Վահան Թէքէեան» (մենագրական փորձ, գրի առնուած եւ հրատարակուած 1932-ին, իբրեւ աւարտական կարգի աշխատասիրութիւն՝ Վիեննական Մխիթարեաններու վարժարանին մէջ), «Նախերգանք» (արձակ էջեր եւ քերթուածներ, Սոֆիա 1936), «Մթնոլորտ» (քերթուածներ, Հալէպ, 1944), «Քերականութիւն արեւմտահայ լեզուի» (երկու հատոր, 1950, Հալէպ, Ուսումնական խորհուրդի որոշումով), «Դար մը գրականութիւն» (Ա. տպագրութիւն, 2 հատոր, 1955 եւ 1956, Գահիրէ), «Պայքարը Հ. Յ. Դաշնակցութեան դէմ» (1962, Պոսթըն), «Հայկական արտասահմանը եւ Ազգ. սահմանադրութիւնը» (1968, Պէյրութ), «Դար մը գրականութիւն» Ա. հատոր, գրեթէ անփոփոխ, 1850-1920 (Բ. տպագրութիւն, Պոսթըն, 1974), Բ. հատոր, հիմնովին վերանայուած, սփիւռքեան գրականութիւնը 1920-1975 (Բ. տպագրութիւն, Պոսթըն, 1982): Հրատարակութեան համար պատրաստ երեք գործեր ունի՝ միջնադարեան տաղերգութեան եւ վանական դպրոցներուն մասին՝ «Դաստիարակչական ամբողջները՝ 10 – 14-րդ դարերուն», «Միջնադարեան հայ բանաստեղծութիւնը՝ ԺԲ.-ԺԶ. դարերուն» եւ «Հայերէնի հոլովոյթը՝ Ե. դարէն մինչեւ մեր օրերը»:

Մինաս Թէօլէօլեան մահացաւ Պոսթըն 1997 ապրիլ 18-ին:

Պատասխանողն Է Մինաս Թէօլէօլեան

Ընկ. Թէօլէօլեանի ճաշասենեակն ենք. մեր հարցազրոյցը կը վերանայինք, մանր-մունր սրբագրութիւններ կ'ընենք, նոր հարցեր կ'արծարծենք: Տիկին Թէօլէօլեան մտահոգ է. հիւրեր կը սպասուին. բայց անոնք ուշացան, իսկ մենք ալ պէտք է պարպենք այլեւս ճաշասեղանը, որ, ինչպէս ամէն օր, լեցուած է կոկիկ կերպով իրարու վրայ դրուած թերթերու եւ թուղթերու բազմաթիւ դէզերով:

- Քիչ մնաց. հիմա կ'աւարտենք:
- Պտուղ բերե՞մ, անօթի չէ՞ք. այս մարդիկն ալ դեռ չեկան,- կ'ըսէ ու անհանգիստ կը մտնէ խոհանոց, ապա ետ ճաշարան կու գայ ընկ՛. Գոհարը:

- Խնդիր չէ,- կը փորձեմ հանդարտեցնել զինք,- հիմա ուր որ է, կը հասնին:

Զրոյցը, որ պիտի հրամցենք մեր ընթերցողներուն արդիւնքն է քանի մը ամսուան երկուներէ: Երբ առաջին նամակս յղեցի ընկ. Մինասին, ոչ իր, ոչ ալ իմ մտքէս կ'անցնէր թէ ի՛նչ տարողութիւն կրնայ ստանալ մեր զրոյցը:

Նամակս ստանալուն պէս, երէց ընկերս հեռաձայնեց ինծի եւ հարց տուաւ թէ երկարութեան տեսակէտէն որեւէ սահմանափակում կա՞յ:

- Ո՛չ,- ըսի իրեն,- գրէ որքան եւ ինչպէս որ կ'ուզես:

Արդի՞ւնքը. 45 մանրատառ ձեռագիր էջեր: Իր պատասխանին կցուած նամակին մէջ, ընկ. Թէօլէօլեան կը գրէր.

- Տրանսսացին խօսք մը ունի. «tu l'as voulu»...

Ուաթըթաունի իր տան մէջ վերջնական ձեւին մէջ կը դնենք այս հարցազրոյցը որ կը հաւատամ թէ ընթերցողը մեծ հետաքրքրութեամբ պիտի կարդայ: Անոր հրապարակումը կը գուգադիպի նախ վաստակաշատ մտաւորականին, որ ընկ. Մինաս Թէօլէօլեանն է, գրական-հրապարակագրային-ուսուցչական գործունէութեան յիսնամեակին, ապա նաեւ իր «Դար մը գրականութիւն» մեծարժէք գործի Բ. հատորի երկրորդ հրատարակութեան լոյս ընծայման:

Անճնականը՝ հաւաքականին դէմ առ դէմ

Հ.- Ի՞նչ պարագաներու տակ կամ պայմաններու մէջ ընդգրկած էք ուսուցիչ-խմբագիր-գրականագետի տատասկոտ ասպարէզը: Ազդեցութիւններ, թէ՞ դէպքերու ընթացքը դեր ունեցած են: Ի՞նչ անուշ ու լեղի յիշատակներ ունիք այդ մարզերէն: Դառնութեամբ թէ գոհունակութեամբ տրամադրուած էք ձեր անցած ուղիին նկատմամբ եւ ինչո՞ւ: Ի՞նչ դժուարութիւններ ունեցած էք ամէն մարզի մէջ ու ձեր փորձառութիւնը ի՞նչ թելադրութիւններ ընելու կը մղէ ձեզ՝ նոյն ճանապարհը ընտրողներուն:

Պ.- Եթէ ճիշդ կ'ըմբռնեմ «ազդեցութիւններ» բառին իմաստը, կ'ենթադրեմ որ ուսուցչական եւ խմբագրական աշխատանքի հակումներուն մէջ հիմնական դեր ունեցած պէտք է ըլլան նախակրթարանի եւ երկրորդական վարժարանի ուսուցիչներս՝ իրենց մասնաւոր ուշադրութեամբ: Ամէն դպրոց եւ ամէն ուսուցիչ կերպով մը «կ'ազդէ». կրնայ զրոյց մը տալ, խառնուածք մը խմորել, ընդունակութիւն մը զարգացնել, երբեմն նաեւ քանդել կամ մեռցնել: Իմ հաստատումս, թէ 1920-ական եւ 1930-ական թուականներու ուսուցիչներս հիմնական դեր ունեցած պէտք է ըլլան ընդգրկած ասպարէզիս

մէջ, կու գայ չափահասութեան տարիներու այն անդրադարձումէս, որ անոնք շարունակած են ընկերանալ ինծի, ուսուցչական ամբիոններու վրայ թէ խմբագրական գրասեղաններու առջեւ. գտած եմ զիրենք կամ հանդիպած եմ իրենց ամէն անգամ որ մտած եմ իրենց դերին մէջ, ու մինչեւ այսօր, երբ առիթ կը տրուի ինծի անցեալը վերակոչելու, զանոնք կը տեսնեմ իրենց ներշնչող ներկայութեան մէջ, փոյթ չէ, թէ շատե՛րը մահացած ըլլան շատո՛նց...

Ուսուցանելու պաշտօն ունեցող այդ մարդիկը սոսկական «դասատուներ» չէին: Ո՛չ միայն դաստիարակներ էին, այլեւ «դայեակներ», մնացորդացը այն սերունդին, որ արեւմտահայութեան երբեմնի ոստանին փայլի թէ տրամուլթեան, փառքի թէ անկումի տարիներուն վկայ էր եղած եւ 1915 – 1920-ի ողբերգութեանէն իսկ կը մղուէր վաղուան յոյսը փնտռելու, նորընձիւղ պատանութեան մէջ...

Եթէ տասնհինգ տարեկանին համարձակութիւնը ունեցած եմ խմբագրատան մը սանդղակներէն բարձրանալու եւ ոտանաւոր մը յանձնելու «Նոր լուր» օրաթերթի խմբագրապետ Վահան Թօշիկեանին, կամ տասնինը տարեկանին յանդգնած եմ «Արձան» անունով

պարբերականի մը հրատարակութեան ձեռնարկել ուսանող ընկերներէս մէկուն հետ՝ ապահովելով աշխատակցութիւնը Զօհրապ Կարօնի (Զոհական), տոքթ. Եդ. Սիմօնեանի, Յակոբ Մարթայեանի (պատմագէտ-լեզուաբան), Արեգ Տիրազանի նման գրողներու, եւ 1932-ին Փարիզէն Երուանդ Տէր Անդրէասեան Պոլսոյ «Արեւելք»-ին մէջ «Նորերուն մէջ նորագոյն գրող մը» ողջունած է՝ կարգալէ ետք փարիզեան սերունդի մասին մըրտած մէկ յօդուածաշարքս նոյն թերթին մէջ, այս բոլորը վկայութիւններ են այն գուրգուրանքէն, այն «մասնաւոր ուշադրութենէն», զոր 1920-ական եւ 1930-ական թուականներու ուսուցիչները, մտքի ու գրչի մարդիկը ցոյց կու տային յայտնուող ընդունակութիւններու հանդէպ, ու ասո՛վ ալ, անշուշտ, իրենց ազդեցութիւնը կ'ունենային դէպի բաց ծով ելլելու տրամադիր կանաչ երիտասարդութեան վրայ:

Իմ պարագայիս, այդ ազդեցութիւնը շեշտականօրէն զգացած եմ 1933-ին, երբ Պոլսոյ «Ազգարար» օրաթերթի խմբագիր Մանուկ Ասլանեան օր մը հրաւիրած է զիս խմբագրատուն ու նկատել տուած է ինծի. «Տղա՛ս, դուն տաղանդ ունիս, բայց սխալ ճամբով կը գործես: Կը տեսնեմ, որ ամէն տեղ է անունդ. կը գրես ամէնուն, առանց ընտրութիւն մը կատարելու անոնց միջեւ: Ինչպէս հանրակիներ կան, կա՛ն նաեւ «հանրագիրներ». իսկ դուն, իմ կարծիքով, պէտք է նախ ընտրե՛լ գիտնաս, ճշդես տեղդ ու մնաս հոն: Հո՛ն ՄԻԱՅՆ: Երբ շրջանի մը մէջ 3-4 օրաթերթեր կան, անոնցմէ մէկը միայն պիտի ըլլայ բեմդ, ու այդ ընտրութիւնը ինքդ պիտի ընես, ըստ անձնական դատումիդ: Նկատելով որ մինչեւ այսօր «Ազգարար»-ին չես դիմած գրական փորձերդ հրատարակուած տեսնելու համար, կ'ուզեմ յայտնել քեզի թէ կրնաս աշխատակցիլ մեզի, եթէ փափաքիս: Մէկ պայման ունիմ. եթէ որոշես գալ, այս երկրին մէջ տարբեր թերթի չես գրեր այլեւս»:

Ովքե՞ր կրնան «ազդել» նորահաս ծիւերու վրայ: Ինչո՞վ կրնան ազդել: Ինչո՞ւ կ'ազդեն...: Հիմա, 68 տարեկանիս, կրնամ հաւանօրէն պատասխանել այս հարցումներուն՝ ծաւալելով ձեր հարցումի սահմաններէն շա՛տ անդին: Կը խոսափիմ այդ փորձութենէն, սակայն կ'ուզեմ ըսել, որ քսան տարեկանիս ալ բաւական հասուն էի՝ ըմբռնելու համար, թէ ի՛նչ կ'ուզէր ըսել խստաբարոյ այդ խմբագիրը, ժլատ այդ մարդը, որ անմատչելի կը նկատուէր՝ այդ օրերուն գրիչ շարժող նորերու կողմէ եւ համբաւ կը վայելէր իբրեւ «յոխորտ» եւ «վանողական» անձ...: «Ազգարար»-ը Պոլսոյ մէջ շարունակութիւնն

էր «Ճակատամարտ»-ի, ու լսած էի որ թերթին շուրջ խմբուած տեղաբնակ թէ արտասահմանեան աշխատակիցներ վաւերական արժէքի հասած դէմքեր էին: Պոլսահայ մտաւորականութեան, աշխարհական թէ հոգեւորական դեկավարութեան ընտրանին բոլորուած էր այս օրաթերթին շուրջ: Ընթերցողներու իր շրջանակը կը կազմէին օր տեսած, 1900 – 1920-ական թուականներու պոլսահայ հանրային մթնոլորտէն, մշակութային երբեմնի կենսունակութենէն հաղորդուած մարդիկ՝ արուեստագէտներ, բժիշկներ, ժողովրդային ընդհանուր համակրանք վայելող ժողովականներ, ուսուցիչներ...

1933 – 1936, մինչեւ Պոլսէն արտասահման մեկնումս, «Ազգարար»-ը եւ իր խմբագիրը եղան իմ գրական սկզբնական փորձերս ու մանաւանդ խմբագրական ընդունակութիւններս պատասխանատուութեան զգացումով մը զարգացնելու կոչուած բարոյական ազդակներ: Նոյն տարիներուն էր որ Մանուկ Ասլանեանի մղումով կապուեցայ Գահրիբէի «Յոսաբեր»-ին, Պոսթընի «Հայրենիք»-ին ու Փարիզի «Յառաջ»-ին: «Ազգարար»-ի կիրականօրեայ գրական թիւերու խմբագրական պատասխանատուութիւնը յանձնուած էր ինծի, ինչ որ առիթ տուած էր նաեւ թղթակցական կապերու՝ արտասահմանեան գրողներու հետ: Նշան Պէշիկթաշլեանի, Վահան Թէքէեանի, Վազգէն Շուշանեանի, Յ.Ճ. Սիրունիի եւ բազմաթիւ ուրիշ գրողներու հետ կապս կը սկսի այդ թուականէն:

Բացառութեամբ Շուշանեանի, որ դառնութեամբ եւ ըմբոստացումով լեցուած էր «Ազգարար»-ի եւ բոլոր Ազգարարներու դէմ (աւելի ուշ ինծի համար յստակ դարձան պատճառները իր վերապահութեան), իմ կողմէ յիշատակուած այս անունները իրենց անտիպներով կ'աշխատակցէին կիրականօրեայ թիւերուն: Թերթին կ'աշխատակցէին նաեւ, աւելի կանուխէն, Երուանդ Տէր Անդրէասեան (Ահուրամագտա գրչանունով), Արամ Հայկազ, Կարօ Մեհեան (Մոնագն եւ այլ գրչանուններով) եւ ուրիշներ...

«Ազդեցութի՞ւն», այո՛: Այս բոլորը հիմնական դեր ունեցած են ո՛չ միայն ուսուցչական եւ խմբագրական հակումներուս, այլեւ վստահօրէն գաղափարական եւ հանրային միտումներուս վրայ. դպրոցէն դուրս իմ ընթերցումներուն, արտասահմանեան մամուլի հետ շփման ճամբով համահայկական երեւոյթներու եւ իրադարձութեանց վերահասու մնալու կարելիութեան, թղթակցական կապերով մարդիկ, հաստատութիւններ, կազմակերպութիւններ, նկարագրեր, բարքեր, մեծութիւններ

ու փոքրութիւններ ճանչնալու իրողութեան «ազդեցութիւնն» ալ՝ ի՛ր կարգին...:

Գալով ձեր հարցումի երկրորդ կէտին, եթէ «դէպքերու ընթացք» բացատրութեամբ պարագայական ազդակներու կ'ականարկէք, այսինքն՝ առօրեայ կեանքէ թելադրուող պատճառներու, պատասխանս «ո՛չ» է:

Դէպքերու ընթացքը, այս առումով, որեւէ դեր ունեցած չէ իմ «ասպարէզի» ընտրութեան մէջ, եւ կ'ուզեմ շեշտել թէ ասպարէզի «ընտրութեան» հարց ալ չեմ ունեցած որեւէ ատեն: Ես զիս գտած եմ ճամբու մը եւ ասպարէզի մը մէջ, ուր տարած է զիս պատանեկան եւ երիտասարդական օրերու սէրս (չըսելու համար կի՛րքս)՝ գրի, գրքի, թերթի, գրականութեան, խմբագրական աշխատանքի հանդէպ: Յաճախ հարց տուած եմ ես ինծի, թէ ի՛նչ բան ուսուցչութիւնը սիրել տուած է ինծի: Ըսեմ մէկ տողով. հաղորդուելու պահանջը, լեզուական եւ գրական հետաքրքրութիւններս յաւիտենական ուսանողութեան ճամբով եւ ուսանողութեան հետ գոհացնելու ներքին կարօտները... Չեմ հաւատար որ սորվեցնելու եւ ուսուցանելու որեւէ մղում դեր ունեցած ըլլայ աւելի քան քառասուն տարիներու կրթական իմ գործունէութեան մէջ, այլ մի՛այն՝ ուսուցանելու, ուսանողութեան վայելքը ուսանողներու հետ բաժնելու ներանձնական պահանջը, որ այսօր ալ նոյն տիրականութեամբ կ'իշխէ... «հանգստեան կոչուած» մարդու իմ կեանքիս վրայ, աւա՛ղ, երբ այլեւս Մխիթարեան լիկէոններ, ճեմարաններ, Ս. Նշան բարձրագոյն վարժարան եւ դպրեմանքներ չկան՝ զգացնելու համար թէ պատանի սերունդ մը պատրաստ է ինծի հետ ճամբայ իյնալու դէպի Հայոց լեզուի եւ մշակոյթի քառասնեակները...

«Անուշ եւ լեզի յիշատակներու» խօսք կ'ընէք ու կ'ուզէք գիտնալ, թէ «գառնութի՞ւն, թէ՞ գոհունակութիւն է բաժինս՝ անցած ուղիէս, եւ ինչո՞ւ»:

Ձեր այս հետաքրքրութիւնը կրնամ գոհացնել, թերեւս, յայտնելով, որ միայն «անուշ» յիշատակներ ունիմ հիմա, այս տարիքիս, երբ յիսուն տարիներու հրապարակագրային խանդէ մը ետք, իբրե՛ւ թէ մեկուսացած իմ ամէնօրեայ խմբագրական-տպարանային միջավայրէն ու հեռուէն կը դիտեմ մեր թերթերուն, մեր մամուլի

մշակներուն ու մտքի եւ գրչի մարդոց առօրեայ հեւքը: Սակայն այս «կարճ ու կտրուկ» պատասխանը, պատասխան, որ որքան ալ «տրամաբանական» ըլլայ եւ գոհացնէ... Մարկոս Նաթանեանը, ինչպէս կը սիրէր ըսել, յաճախ, իմ երէց «արխատաշս»՝ Բենիամին Թաշեան,–

Ես զիս գտած եմ ճամբու մը եւ ասպարէզի մը մէջ, ուր տարած է զիս պատանեկան եւ երիտասարդական օրերու սէրս (չըսելու համար կի՛րքս)՝ գրի, գրքի, թերթի, գրականութեան, խմբագրական աշխատանքի հանդէպ: Յաճախ հարց տուած եմ ես ինծի, թէ ի՛նչ բան ուսուցչութիւնը սիրել տուած է ինծի: Ըսեմ մէկ տողով. հաղորդուելու պահանջը, լեզուական եւ գրական հետաքրքրութիւններս յաւիտենական ուսանողութեան ճամբով եւ ուսանողութեան հետ գոհացնելու ներքին կարօտները...

ինծի գոհունակութիւն չի պատճառեր, որովհետեւ «այոններն» ու «ոչերը» դատարանային պատասխաններ են եւ առհասարակ թիւր, սխալ, խեղանդամ հետեւութիւններու կը յանգին: Հարցում ուղղող մարդը շատ դիւրին դերի մը մէջ է. քիչեր կան, որոնք հարցումը ձեւակերպած ատեն կը գիտակցին, որ հոր փորելու, առնուազն խորունկ ակօս մը բանալու դերին մէջ են: Ձեր հարցումը իմ մէջ աշխարհ մը կը բանայ «անուշ» ու «լեզի» վերադիրներուն տակ ինկող մարդոց, դրուագներու, ապրումներու, փորձառութեանց, որոնք, ինծի հետ որոշ աղերս ունենալով հանդերձ, տիրականօրէն անանձնական բնոյթ ունին. մե՛ր կեանքին, մե՛ր մամուլին, մե՛ր գրականութեան, մե՛ր հրապարակագրութեան կապուած են, ու ինչ որ հատորի մը ծաւալով ու տարողութեամբ ատաղճ կրնան հայթայթել,– պէտք է շատ աւելի բարձրաձայն ու լրիւ ըսուին՝ քան «հարցազրոյցներու» ընթացքին թողութիւն յանձնուած եւ առաջին ու երկրորդ դէմքերով միայն ձեւ առած նախադասութիւններ...

Մի՛ վախնաք: Պիտի չփորձուիմ ծալքեր բանալու կամ պատասխանի իրաւունքս չարաշահելու շաբաթաթերթ «Հորիզոն»-ի մէջ: Այսքանը ըսի, որպէսզի չենթադրէք, թէ դառնութիւններ, յուսախաբութիւններ, հիասթափութիւններ չեմ ունեցած: Կեանքի ո՞ր մարզին եւ աշխատանքի ո՞ր ասպարէզին մէջ մարդիկ «լեզի» յիշատակներ չունին: Եւ ինչո՞ւ պէտք չէ ունենան: Իմ պարագայիս դառնու-

Թիւնները ո՛չ միայն պատահական, վայրկեաններու, ժամերու կամ օրերու մէջ սահմանափակուող անհատական խռովքներ եղած չեն, այլեւ կէս դարու իմ գրական-հրատարակարային եւ ուսուցչական-հանրային տեսչիս մէջ եղած են «անուշին» զուգահեռ ու մի՛շտ ներկայ ընդհանրական տրամութիւններ, կրնամ ըսել... շնչահեղձութիւններ: Երբ մարդ կը գիտակցի թէ հայ է, կը ճանչնայ սփիւռքեան մարդուն վերապահուած պայմանները մտաւոր աշխատանքի դաշտերուն մէջ ու հակառակ այս ճանաչումին չի դադրիր սիրելէ գինք դէպի խմբագրական խեղճուկրակ սեղաններ, ուսուցչական անշուք ամբիոններ եւ հանրային փշոտ ամթոռներ առաջնորդող իր ներքին մղումները՝ իր «ուղիին» մէջ եղբայրացած կը գտնէ «անուշն ու լեղին»:

Ուրեմն, պատասխանս՝ շատ ամփոփ:

Սիրուած, փնտռուած, գիտա՛կցաբար բացուած կեանքի որեւէ ճանապարհի մէջ դառնութիւնները համեմն են անուշութիւններու: Երբ կը հասնի դէպի ետ նայելու եւ յիշելու, յիշատակներով դէպի սկիզբ սեւեռելու եւ «անցեալ» մը վերագնահատելու պահը, միայն «անուշն» է որ կը գտնէ: Կը կարծեմ (կ'ենթադրեմ՝ քանի որ ուրիշներ ինձմէ ԱԻՆԼԻՆ կրնան ունեցած ըլլալ), որ ես աշխարհի ամէնէն երջանիկ մարդոցմէ մէկն եմ եղած «անցած ուղիիս մէջ», որովհետեւ յաջողած եմ մնալ յաւիտենական սիրողը, յաւիտենական ուսանողը, յաւիտենական որոնողը եւ օրուան գրեթէ բոլոր իր ժամերը աշխատանքի տենդով մը լեցնող մտքի ու գրչի աշակերտը...

Հիմա կրնամ պատասխանել նաեւ ձեր հարցումի վերջին մասին՝ «Ի՞նչ դժուարութիւններ ունեցած էք ամէն մարդի մէջ ու ձեր փորձառութիւնը ի՞նչ թելադրութիւններ ընելու կը մղէ ձեզ՝ նոյն ճանապարհը ընտրողներուն»:

Թոյլ տուէք ինձի, որ սա ձեւով բանաձեւեմ գաղափարներս:

Մտքի աշխատանքով գործող ոեւէ անձ, եթէ սխալ մարդի մէջ ինկած չէ «արկածով», չի կրնար դժուարութիւններու մատնուիլ, եթէ նոյնիսկ իր աշխատանքին առնչուող յարաբե-

րական, շրջապատային կամ արտաքին պայմաններուն է որ կ'ակնարկէք: Դժուարութիւնները հետեւանքն են առաւելապէս այն մարդոց, որոնք՝ մարդկօրէն սխալելով՝ յառաջացած են կողմնակի արահետներէ, այսպէս կոչուած «սխալ ճամբաներէ»: Կարծած են սիրել գո՛րծ մը՝ որուն պարտադրած մտքի, բազուկի, սրտի եւ հոգիի պատրաստութիւնը չունին: Ընտրած են այս կամ այն զբաղումը՝ որովհետեւ իրենց դատումը ըսած է իրենց, թէ ա՛յդ ճամբով միայն կրնան հարստանալ, կրնան անհատական կամ ընկերային դիրք մը ապահովել իրենց, այդ ուղիով միայն «յաջողիլ կեանքի մէջ», գերծ մնալ վերիվայրումներէ, «խաղաղ անցնիլ, անցա՛ւ անցնիլ» քառասուն, վաթսուն կամ ութսուն տարիներով սահմանելի ժամանակով մը հաշուած, սկիզբ ու վախճան ունեցող ճանապարհէ մը: Կան շատե՛ր ալ, որ զոհն են իրենց յաւակնութիւններուն, մեծամտութիւններուն եւ փառասիրութեանց,՝ այսինքն՝ մարդէակէն անկարելի բարձրանալու, անդեղեւ յառաջանալու եւ նպատակ մը իրագործելու տենչը, ambition-ը, շփոթած են... միջոցներու մէջ խտրի չգնելու գինով «տեղ հասնելու» մարմաջին հետ, ինչ որ, բնականաբար, հող պատրաստած է տագնապներու, ցնցումներու, բախումներու, «դժուարութեանց»:

Կ'ուզեմ ըսել, թէ «գործի» աշխարհին ու ընկերային կեանքի մէջ «դժուարութիւնները» առհասարակ անխուսափելի են, որովհետեւ մարդիկ ի վերջոյ առանձին չեն ապրիր, նոյն «հողէն» ստեղծուած չեն, «Աստուծոյ շունչը» չեն կրեր միշտ իրենց վրայ եւ մտքի ու հոգիի նոյն անդրադարձներով, reflex-ներով չեն ապրիր: Կեանքի իրականութիւնն է ասիկա, եւ զարմանալի ոչինչ կայ մարդկային ընկերութեան յատուկ աններդաշնակութիւններու, անհաւասարութիւններու, անհամաձայնութիւններու կամ հակասական երեւոյթներու մէջ. հետեւաբար նաե՛ւ անոնցմէ ծագում առնող «դժուարութիւններու» մէջ...

Պարագան որոշ չափով կը տարբերի «մտքի» աշխարհին մաս կազմող մարդոց համար, որոնց փառասիրութիւնները, ambition-

Գրագէտը, խմբագիրը, ուսուցիչը, արուեստագէտը, պարզ խօսքով՝ «մտքի մարդը», առաջին գծի վրայ «ինքզինք իրականացնող», մարդկային իր արժանաւորութեան հանդէպ պատասխանատուութեան զգացումով ապրող անհատն է, որ առաջին եւ հիմնական տենչ կը դաւանի մտքի ու սրտի իր մղումներուն հաւատարիմ մնալ, զարգացնել զանոնք՝ առանց հաւատալու, թէ բարձրացած եւ հասած է արդէն «գագաթին» եւ կրնայ այլեւս յաղթանակի ու փառքի դափնիներուն սպասել:

ները, յաջողութեան եւ գոհացման ձգտումները, պահանջներն ու նպատակները, բայց մանաւանդ երջանկութեան համամարդկային եւ արդար իտէալը՝ ՄԻԱՅՆ նիւթական ապահովութեան հեռանկարով, անհատական կամ ընտանեկան բարօրութեան առաջադրանքով պայմանաւորուած չեն: Գրագէտը, խմբագիրը, ուսուցիչը, արուեստագէտը, պարզ խօսքով՝ «մտքի մարդը», առաջին գծի վրայ «ինքզինք իրականացնող», մարդկային իր արժանաւորութեան հանդէպ պատասխանատուութեան զգացումով ապրող անհատն է, որ առաջին եւ հիմնական տենչ կը դաւանի մտքի ու սրտի իր մղումներուն հաւատարիմ մնալ, զարգացնել զանոնք՝ առանց հաւատալու, թէ բարձրացած եւ հասած է արդէն «գագաթին» եւ կրնայ այլեւս յաղթանակի ու փառքի դափնիներուն սպասել: Իր այս մղումին, գրեթէ բնագրական հակումին մէջ՝ ան յաճախ ժամանակ ու առիթ չի գտներ անդրադառնալու, թէ կեանքը նա՛եւ նիւթական իրականութիւն մըն է. մարդկային ընկերութիւն մը կայ իր շուրջ, եւ ինք, որքան ալ հարուստ ներաշխարհ ունենայ եւ կարենայ գոհանալ այդ ներքին հարստութեամբ, նա՛եւ իր հողեղէն իրականութիւնը պահանջներ ունի՝ մեր հանրային ու մտաւոր կեանքի մարգերուն մէջ, աշխատանքի սեղաններուն առջեւ, գրատախտակներու քով կամ բեմերու վրայ, երբեմն նոյնիսկ [զինք դարձնելով] անփոյթ ու անտարբեր՝ անհատական եւ ընտանեկան իր կեանքին հանդէպ: Երջանիկ են, երբ կարօտ չեն, փոյթ չէ՛, որ զրկուած ըլլան «աւելիէն»: Երջանիկ են իրենց գործով, փոյթ չէ՛, որ այդ գործը արժէքի եւ գնահատութեան տարբեր չափանիշերով կշռուած ըլլայ յաճախ: Էականը, իրենց համար, մտքի մարդու անկախութիւնն է, սեփական հաւատքի եւ համոզումներու ազատութիւնը, յանուն արժէքներու՝ ծառանալու եւ պայքարելու անկաշկանդ կարելիութիւնները:

Անշուշտ, ես ինձմէ՛ կը մեկնիմ այս հաստատումներուն մէջ, երբ կը հաւատամ, որ մտքի մարդը «գոյապայքարի» հարց կրնայ ունենալ ա՛յն պարագային միայն, երբ իր անկախութեան

դէմ վտանգ կը գտնէ, երբ իր գործին հանդէպ խոչընդոտներ կը ստեղծուին, երբ իր թափը կը կասի՝ յարաբերական ու արտաքին պայմաններու անդրադարձով: Հո՛ս, այս պարագային, մտքի մարդոցմէ շատեր հարկին տակ գտնուած են իրենց դժուարութիւններուն հետ «դաշինք» կնքելու, ընկճուելու երբեմն, տխրելու յաճախ, սակայն երբե՛ք զիջելու կամ պարտուելու: Յատկապէս հա՛յ մտքի մարդը յեղափոխականի խառնուածք պէտք է ունենայ, իր անհատական «գոյապայքարի» հարցը արժանաւորութեան հարց պէտք է դաւանի:

Անձնապէս, քիչ անգամ «գոյապայքարի» առջեւ գտած եմ ես զիս, նախ՝ որովհետեւ չեմ ուզած ըլլալ անոնցմէ, որոնք իրենց շրջապատէն յաւելեալ ակնկալութիւններ ունին, եւ երկրորդ՝ որովհետեւ ծառայած եմ միշտ այն համոզումին, որ գոյապայքարի կրնան մտքի մարդուն աշխատանքը խթանող ազդակներ ըլլալ:

– Ի՞նչ դժուարութիւններու մասին է խօսքը.

– Պարագայական եւ առօրեայ կեանքի հետ կապուած, այլեւ հոգեկան նեղութիւններ, յուսախաբութիւններ, եւ այլն: Անյաղթահարելի միակ գոյապայքարի, որուն կրնայ մատնուիլ մտքի մարդը, վատութեան եւ ուրացման երեւոյթն է բոլոր անոնց կողմէ, որոնք աչք ունին, բայց չեն տեսներ, կը տեսնեն՝ բայց չեն ճանչնար, կը ճանչնան՝ բայց չեն ընկալեր, կ'ընկալեն՝ բայց ժխտած ըլլալու սիրոյն կը ժխտեն...

Եթէ կարելի է «փորձառութիւն» նկատել կրթական, գրական եւ հրապարակագրային տենդիս գործնական արտայայտութիւններով իրագործուած աշխատանքը, «նոյն ճանապարհը ընտրողներուն» կը թելադրեմ նախ անխաբ ճանաչումը ունենալ իրենց ժողովուրդի ներազգային եւ յարաբերական պայմաններուն, գիտակցի՛լ իրենց արժէքին, սակայն չունենալ այն յաւակնութիւնը, թէ արժէքներու հանդէպ ուրիշներ պէտք է խոնարհին: Համեստութիւնը եւ խոնարհամտութիւնը անսխալ ցուցանիշներն են արժէքի, ու մտքի մարդը պէտք է չունի բարձրութեանց

Եթէ կարելի է «փորձառութիւն» նկատել կրթական, գրական եւ հրապարակագրային տենդիս գործնական արտայայտութիւններով իրագործուած աշխատանքը, «նոյն ճանապարհը ընտրողներուն» կը թելադրեմ նախ անխաբ ճանաչումը ունենալ իրենց ժողովուրդի ներազգային եւ յարաբերական պայմաններուն, գիտակցի՛լ իրենց արժէքին, սակայն չունենալ այն յաւակնութիւնը, թէ արժէքներու հանդէպ ուրիշներ պէտք է խոնարհին:

վրայ սաւառնելու՝ որպէսզի տեսնեն զինք, սիրեն կամ ատեն զինք, յարգեն ու գնահատեն: Հայ կեանքի մէջ, մտքի մարդուն միակ գոհացումը իր արժանաւորութեան ձգտումը գործի վերածելու ճիգն է, այն պայմանով որ, ինչպէս ըստի, երբեք չյանգի այն եզրակացութեան, թէ հասած է արդէն այդ «գագաթին»:

Հ.- Իրրեւ ամուսին ու հայր՝ գտնուեցա՞մ մեծ զոհողութիւններու հարկին տակ, մասնաւորաբար կուսակցականի եւ մտաւորականի ձեր աշխատանքներուն հետեւանքով: Ինչպէ՞ս յաջողեցա՞մ ձեր յանձնառութիւնները յարգել, կամ յաջողեցա՞մ: Կրցա՞մ ձեր կնոջ ու զուակներուն տրամադրուիլ՝ գէթ նուազագոյն չափով:

Պ.- Ամուսնական կեանքը եւ մայրական թէ հայրական պարտաւորութիւնները, առհասարակ, իրենց բացասական, (եթէ ծանր է բառը՝ ըսենք «աննպաստ») անդրադարձումով ճանչցուած են «կուսակցականութեան» եւ «մտաւորականութեան» դիտանկիւնէն, թերեւս անոր համար, որ բոլորն ալ նուիրում եւ գոհաբերութիւն կը պահանջեն, իսկ «նուիրումը» կամ «ընծայումը» անբաժանելի է: Կարելի չէ տիպար ամուսին կամ հայր, մայր ու միանգամայն... կուսակցական կամ մտաւորական ըլլալ: Հինէն ի վեր արմատացած համոզում է այս, եւ այս համոզումին հետեւանք է եղած նա՛եւ կուսակրօնութիւնը եկեղեցականութեան կամ հոգեւորականութեան մէջ: Աստուծոյ եւ Քրիստոսի պաշտօնեան չի կրնար իր կեանքը ուրիշի մը կապել, որովհետեւ «ոչ կարէ մարդ ծառայել երկու տերանց»: Պատկերը նոյնն է եղած նաեւ հայ ազատագրական եւ յեղափոխական կեանքին մէջ: Ֆիդային իր մոսիսին հետ ամուսնացած էր, տուն չունէր, քուն չունէր, «Թափառիկ» կ'ապրէր, իսկ արդէն իսկ ամուսնացած կամաւորը կամ հայդուկը՝ կին ու զաւակ լքելէ ետք միայն կրնար թեկնածու դառնալ ամբողջական ընծայումի կամ գոհաբերութեան, ինքնուրացումի:

Ձեր հարցումը, իր ձեւով, կը մղէ զիս ենթադրելու թէ դուք իմ մէջ «մտաւորական» ու «կուսակցական» բերած էք առաջին գծի վրայ, եւ, բնականաբար, հետաքրքրուած էք այն հարցականով, թէ արդեօ՞ք «Թերի» ամուսին մը կամ «հայր» մը եղած եմ իմ կեանքիս մէջ...

Անկախաբար այն իրողութեանէն, որ ես զիս երբեք մտաւորական չեմ նկատած (ու չեմ), այլ թերեւս մտքի մարդ մը (աս երկուքը բոլորովին տարբեր բաներ են), կ'ուզեմ նկատել տալ ձեզի, թէ անձնական իմ փորձառութիւնը զիս կը մղէ հերքելու այն կարծիքը, ըստ որուն ամուսնական կեանքը կրնայ աննպաստ անդրադարձ ունենալ

մտքի եւ գրչի մարդուն բոլորանուէր աշխատանքի տրամադրութեան վրայ: Ընդգծելով դարձեալ թէ կը մեկնիմ ինձմէ՛՝ կ'ուզեմ շեշտել որ ամուսնական կեանքը, ընդհակառակն, դրականօրէն կ'անդրադառնայ կուսակցական մարդուն, ուսուցիչին, գրագէտին եւ հրապարակագրին առօրեայ տենդին վրայ:

Անշուշտ, կա՛ն տիրութեան, մտահոգութեան, ցաւի եւ անստուգութեան օրեր ընտանեկան յարկերու տակ: Կան նոյնիսկ պարագայական ցնցումներ եւ հոգեպէս ճնշիչ պատահարներ, զորս կեանքը կը բերէ իրեն հետ, ամուսնացած ըլլաւ թէ ամուրի: Սակայն, երբ ամուսնութեամբ հաստատուած կապ մը մտաւոր ու հոգեկան միութեամբ, կամըջումի եւ փոխադարձ յանձնառութիւններու ծիածանով պսակուած է՝ «գոհողութիւններու ՀԱՐԿ» չ'ստեղծեր: Զոհողութիւնը կու գայ ինքնին, իբրեւ գիտակցուած, մէկէ աւելի մարդէակներու կեանքը ներդաշնակող ներբուխ տրամադրութիւն, առանց մասնաւոր փոյթի, առանց նոյնիսկ «գոհողութիւն» մը ըլլալու իր ինքնութիւնը զգալի դարձնելու:

Ուրիշներու պարագայով չեմ զբաղիր. սակայն քանի որ հարցումը ուղղուած է ինձի, կ'ուզեմ պատասխանել. քառասունի մօտ տարիներու ամուսնական կեանքը «գոհաբերութեան» որեւէ հարց ստեղծած չէ ինձի համար: Պարագան կրնայ հիմնովին տարբեր եղած ըլլալ կնոջ համար, որուն անունով խօսելու իրաւունքը չունիմ: Կրնամ ըսել առնուազն, թէ «գոհաբերուած ըլլալու» տպաւորութիւնը չէ տուած ինձի, հաւանօրէն... չանհանգստացնելու համար զիս աշխատանքներուս մէջ, որոնք, անդրադարձած եմ անշուշտ, մոլութեան չափին հասած են յաճախ: Կուսակցականի, նա՛եւ մտքի ու գրչի մարդու զբաղումներս ապրում եւ հաճոյք եղած են ինձի համար, յանձնառութիւններս յարգել ուզած եմ միշտ, սակայն չեմ յաջողած զանոնք բերել ու հասցնել այն չափին եւ տարողութեան, որուն ձգտած եմ միտքս ու հոգիս:

Իբրեւ ամուսին ու հայր, վստահօրէն՝ թերացած կամ սխալած եմ յաճախ: Լարուած ու կեդրոնացած աշխատանքներէ ետք անդրադարձած եմ, թէ անտեսած եմ անոնց հետ աւելի ըլլալու, աւելի զբաղելու, տարբեր ժամանցներու ալ ժամանակ տրամադրելու պարտականութեանս մէջ: Անձնասիրութիւն մը, որ մեղք չէ թերեւս, սակայն աւելի ծանր կը ճնշէ երբեմն: Բայց «կնոջ ու զաւակներուն տրամադրուիլ» բացատրութիւնը կ'արգիլէ՞ արդեօք աւելցնելու այստեղ, իբրեւ պատասխան ձեր հարցումի վերջին մասին, թէ անոնք՝ կին ու զաւակներ, «տիպար ամուսին» ու «տիպար հայր» մը գտած են իմ մէջ...

Մեր կեանքը՝ Թեօլեօլեանի պրիսմակին ընդմէջէն

Հ.- Իբրեւ մէկը անոնցմէ, որոնք մօտէն ու երկար ատենէ ի վեր հետեւած են հայրենիքի եւ Սփիւռքի մեր կեանքին, ի՞նչ կը մտածէք սա երկու կէտերուն մասին.

ա.- Ո՞րն է հայ կեանքին սպառնացող մեծագոյն վտանգը.

բ.- Սփիւռքեան հայ կեանքի ո՞ր երեւոյթները ամէնէն աւելի փառաբանական կը նկատուի (ուստի՝ զօրացման արժանի) եւ որո՞նք ամէնէն աւելի բացասական (հետեւաբար՝ փոփոխութեան կարօտ).

Հաստատելու համար, որ ուժացման եւ ճուրղմի փաստին հետ նա՛եւ կենսունակութեան, վերապրումի, ինքնապահպանումի եւ ստեղծագործութեան ատակ ժողովուրդ մը նկատուելու շօշափելի ապացոյցներն ենք տուած: Չեմ ուզեր մանրամասնութիւններու մէջ մխրճուիլ, անուններ, նուաճումներ եւ իրագործումներ յիշատակելու համար: Ըսի այսքանը՝ դիտել տալու համար, թէ հին եւ ժամանակակից գաղթականութիւններու ապրելակերպերուն միջեւ հիմնական տարբերութիւն մը կայ:

Սփիւռքեան Հայ իրականութեան մեծագոյն վտանգը պէտք է նկատեմ քաղքենիացումը, թէեւ կ'անդրադառնամ, որ այդ բառը լրիւ չի պարփակեր մեր ցրօնքին սպառնացող ապասերիչ, ջլատիչ եւ ազգօրէն սպանիչ ազդակները: Էական կը գտնեմ ամէն բանէ առաջ նկատել տալ, որ Հայուն «քաղքենիացումը» պէտք է ըմբռնել «Հայութենէ հրաժարումի» ամբողջական տրամադրութեամբ մը, որ կ'ենթադրէ հաւաքական մեր իրավիճակէն, ընդհանրական հարցերէ եւ համազգային սեւեռումներէ ինքնանջատում՝ ի խնդիր եսական կամ նեղ-«ընտանեկան» անհոգութեան, ապահովութեան եւ բարօրութեան:

Պ.- Եթէ անսխալ ու ամբողջ կ'ըմբռնեմ էութիւնը ձեր հարցումին, սփիւռքեան Հայ իրականութեան մեծագոյն վտանգը պէտք է նկատեմ քաղքենիացումը, թէեւ կ'անդրադառնամ, որ այդ բառը լրիւ չի պարփակեր մեր ցրօնքին սպառնացող ապասերիչ, ջլատիչ եւ ազգօրէն սպանիչ ազդակները: Էական կը գտնեմ ամէն բանէ առաջ նկատել տալ, որ Հայուն «քաղքենիացումը» պէտք է ըմբռնել «Հայութենէ հրաժարումի» ամբողջական տրամադրութեամբ մը, որ կ'ենթադրէ հաւաքական մեր իրավիճակէն, ընդհանրական հարցերէ եւ համազգային սեւեռումներէ ինքնանջատում՝ ի խնդիր եսական կամ նեղ-«ընտանեկան» անհոգութեան, ապահովութեան եւ բարօրութեան: Այս տրամադրութիւնը շատերու մէջ իրենց կեանքը վարելու կերպին հետեւանք է, ուրիշներու մօտ՝ «կեանքի իմաստասիրութիւն», գիտակցուած կենցաղավարութիւն: Մենք տասնհինգ դարերու փորձառութիւն մը ունինք անդաստակական կեանքի գաղթականութեան, տեղաշարժի, թափառիկ ու պանդխտական կեցութեան, կամաւոր եւ ակամայ արտագաղթերու: Եւրոպական թէ ասիական բոլոր երկիրներու տակ ցանուցիր մեր համրանքը իր «պատմութիւնը» ունի այդ 1500 տարիներու ժամանակային դրուագներուն մէջ, ու կ'արժէ ուսումնասիրել այդ պատմութիւնը՝

Երէկ՝ մեր անգիտութիւնը (չըսելու համար տգիտութիւնը, անգրագիտութիւնը, գիւղացիական խառնուածքը, քաղաքակրթական եւ մշակութային պատրաստութեան մակարդակի տարրականութիւնը, կրօնապաշտութիւնը, հալածանքներու, կոտորածներու եւ զրկանքի հակազդեցութիւնները եւ այլն) մահացու եւ խորտակիչ համեմատութիւններու չհասցուց անհայրենիք կեանքի բացասական ներգործութիւնները ազգային գոյապահպանումի մեր դատին վրայ: Ապահովաբար, մեծ թիւ կորսնցողները օտարացման ճամբով, ջարդերու հետեւանքով, ձուլման երախի մէջ. սակայն վերապրեցանք:

Այսօր՝ մեր ֆիզիքական ապահովութեան, մշակութային եւ քաղաքակրթական անհամեմատօրէն բարձր կարելիութիւններուն, նիւթական բարօրութեան, կենսունակ ու ծաղկուն Հայրենիք մը ունեցած ըլլալու, ըստ ամենայնի բարձրորակ եւ յանձնառու նոր ու նորագոյն սերունդներով «հարստացած» ըլլալու փաստին հակառակ՝ շատ աւելի մտահոգ ըլլալու պատճառներ ունինք Սփիւռքի գոյատեւման հարցին մէջ, որովհետեւ 20 եւ 21-րդ դարերը բաղադրութեան եզր չեն կրնար դառնալ չորրորդէն մինչեւ 18-րդ կամ 19-րդ դարերու մեր գաղթականութեանց տոկունութիւնը կշռադատումի

ենթարկելու տեսակետով: Կ'ապրինք թեքնո-լոճիի [գիտարհեստի] դարը, ճարտարարուեստականացած քաղաքակրթութեան մը դարը, որ հիմնական յեղաշրջումներու ուղի հարթեց ո՛չ միայն քաղաքակրթական-մշակութային մարզերու եւ մարդկային առարկայական իրականութեան, այլեւ մտայնութեանց, մտածողութիւններու, կենցաղային ու ընկերային համայնութեանց մէջ:

Թիւրիմացութեան տեղի չտալու համար, այստե՛ղ իսկ կ'ուզեմ ընդգծել հիմնական կէտը. Սփիւռքի գոյատեւման դատը շատ աւելի մտահոգիչ դարձած է ա՛յն պատճառաւ, որ ազգային ինքնապահպանումի եւ ազգային դատի մեր զոյգ ու անբաժանելի պայքարներուն անզանցառելի կարգ մը պահանջները չեն հաշտուիր տարացիր մեր կեանքի շրջապատային, կենցաղային, ընկերային, քաղաքակրթական եւ առօրեայ հարկադրանքներուն հետ: Մեզմէ ամէն մէկը երկուութեամբ մը (dualité) կ'ապրի Հայու եւ սոսկական քաղաքացիի իր զոյգ պատկանելիութիւններով ու ենթակայ է անոնց ընդհանրապէս հակադիր մղումներուն: Թէեւ մեզմէ քիչեր համարկումի ճամբով կը յաջողին հաւասարակշռութիւն մը, ներդաշնակութիւն մը ստեղծել իրենց այդ երկու ինքնութիւններուն միջեւ, սակայն հայկական համրանքի բացարձակ մեծամասնութիւնը ամէնօրեայ հոսանքին անձնատուր հաւաքականութիւն է:

Չխորացնենք հարցին ըստ էութեան քննութիւնը:

Սփիւռքեան գոյապահպանումի մեծագոյն վտանգը՝ «հայութեան» աստիճանական մաշումն է եւ տեղատուութիւնը «քաղաքացիութեան» անդիմադրելի հոսանքին առջեւ:

Բարօրութիւն, ապահովութիւն, հաճոյք՝ երեք աներկրորդելի մղումներ են, այսօր, տարասփիւռ հայութեան կեանքին մէջ. երեք գերագոյն մղումներ, որոնք նահանջի, համակերպութեան եւ դասալքութեան պարտադրանք մը կը ստեղծեն հայ մարդուն համար, երբ հարկ կը ծագի նախընտրութիւն մը ընելու անոնց ու «զոհաբերութեան» միջեւ: «Քաղքենիացում» բառը գործածեցինք ա՛յս իմաստով: Չենք խօսիր այդ նո՛յն «քաղքենիացումէն» բխող տարբեր չարիքներու մասին, որոնք խառն ամուս-

նութիւններն են, մայրենի լեզուէն կամովին խզուելու համակերպութիւնն է, մայրենի լեզուին հաղորդուելու ճիգին եւ ձգտումին բացակայութիւնն է, ազգային-հաւաքական մեր կեանքին հանդէպ անտարբերութիւնն է եւ... «մասամբ սոցին»:

«Քաջալերական երեւոյթնե՞ր»: Ինչո՞ւ չէ:

Եթէ, հակառակ գոյութիւն ունեցող «մեծագոյն վտանգին», յուսահատելու իրաւունք չենք զգար՝ նոր եւ նորագոյն սերունդներու որոշ մէկ մասին (չեմ ուզեր գործածել «ընտրանի» բառը) յանձնառութեան աննախընթաց տրամադրութիւնն է: Մղուած եմ ենթադրելու, թէ հայ պատանութիւնն ու երիտասարդութիւնը, յեղափոխական համեմատութիւններու հասած իր յանձնառութիւններով, մղուած է հակազդելու հայ կեանքի սփիւռքեան իրականութեան մէջ հաստատելի ընդարմացումի, թմրութեան, համակերպումի եւ կրաւորականութեան տրամադրութիւններուն, «ճակատագրապաշտութեա՛ն»:

Չեմ ժխտեր դարու ոգին, ժամանակին դերը: Յեղափոխականութիւնը մեր օրերու կրօնքն է՝ իբրեւ ճակատում կեղծիքի, նենգութեան, բռնութեան, թանձր պահպանողականութեան, անարդարութեան, անիրաւումներու եւ տմարդութեանց դէմ: Յուսահատելու իրաւունք պիտի ունենայինք, եթէ հայ երիտասարդութիւնը գործուն ուժի չվերածուէր եւ առաջին գիծերու վրայ այդ ճակատումին մասնակից չդառնար, 19-րդ դարու ազատագրական պայքարի

դրուագին վրայ գումարելու համար 20-րդ եւ 21-րդ դարերու յեղափոխական պայքարը:

Այս տեսակետով, հայկական սփիւռքը փոխանցման շրջան մը կ'ապրի եւ փոխանցման շրջաններու յատուկ «պղտորութիւններ» ի յայտ կը բերէ: Կը տեսնենք, օրինակ, որ ոմանք մտահոգուելու պատճառներ կը տեսնեն «յեղափոխականացման» եւ «քաղաքականացման» շարժումներուն մէջ. ուրիշներ՝ յաւակնոտութեան եւ արկածախնդրութեան հակումներ կը մատնանշեն:

Չենք պնդեր, որ սխալներ չեն գործուիր, անխորհուրդ եւ անիմաստ զեղումներ չեն պատահիր ու երբեմն սխալ թիրախներ չեն ընտրուիր: Կ'ան շեղումներ եւ սայթաքումներ՝ «յե-

Չենք խօսիր այդ նոյն «քաղքենիացումէն» բխող տարբեր չարիքներու մասին, որոնք խառն ամուսնութիւններն են, մայրենի լեզուէն կամովին խզուելու համակերպութիւնն է, մայրենի լեզուին հաղորդուելու ճիգին եւ ձգտումին բացակայութիւնն է, ազգային-հաւաքական մեր կեանքին հանդէպ անտարբերութիւնն է եւ... «մասամբ սոցին»:

ղափոխութիւն» եւ «յեղափոխականութիւն» իմացումներու գործնական արտայայտութեանց մէջ. կա՛ն ապաստաններ ալ, որոնք կրնան յանգիլ նորանոր խաթարումներու: Սակայն կ'ուզենք նկատել տալ, թէ ամէնէն սուրբ ու մաքուր, ամէնէն գաղափարական եւ անանձնական յանձնառութեանց մէջ անգամ, վրիպումներն ու սայթաքումները պատահական երեւոյթներ են: Կարեւորը այն է, որ բարոյական ուժերը չզարդրին հակակշիռ ունենալէ մեր գործունէութեանց վրայ եւ յեղափոխութիւնը բարոյականէ՛ մը, գաղափարականէ՛ մը, հաւաքական ազնիւ ու արդար նպատակէ մը խթանուի:

Կանգ առնեմ այս կէտին վրայ ու չանտեսեմ ձեր հարցումին մէջ «հայրենիքի կեանքին» մասին եղած ակնարկութիւնը:

Նոր պատասխանատուութիւններու եւ նոր յանձնառութեանց պատրաստ երիտասարդութեան մը գործուն ներկայութիւնը՝ հիմնական ապահովութիւններէն մէկն է Սփիւռքի գոյատեւման դատին: Սակայն սփիւռք-հայրենիք եզրերով սահմանելի ազգային գոյատեւման դատը կ'ակնկալէ, կը հարկադրէ՛, որ մեր մէն մի քայլին մէջ մտահան չդարձնենք ամբողջական հայրենիքի եւ ամբողջական հայութեան վախճանական նպատակը՝ տեսլականը: Ամէն ատենէ աւելի հրամայական պահանջ է, մեզի համար, ապրիլ ու գործել այն հաւատքով՝ որ աշխարհագրական անջատումը անանցանելի պատնէշ մը չէ Հայութեան երկու գօտիներու ազգային միութեան համար, եւ եթէ տարբերութիւն մը կայ հին ու նոր սփիւռքներու միջեւ (ի նպաստ այդ ազգային միութեան)՝ հայրենակա՛ն իրականութիւնն է: 1920-ական թուականներէն ի վեր, մենք մեր ազգային կուսակցութիւններով, մեր գաղափարական տարակարծութիւններով, գործունէութեան եղանակներու տարբերութիւններով եւ հանրային ճակատներու վրայ գոյութիւն ունեցող բոլոր վէճերուն հակառակ՝ հայրենիքի եւ հայրենաբնակ ժողովուրդի հանդէպ մեր կեցուածքին մէջ ո՛չ մէկ աններդաշնակութիւն ունեցած ենք իբրեւ Սփիւռք: Արուեստական, կեղծ, անհիմն, շինծու եւ մասնակի նկատումներէ թելադրուած պնդում է ոմանց այն վերագրումը, թէ կան Հայաստանը «սիրող» ու «չսիրող» հատուածներ, հայրենիքը «ճանչցող» ու «չճանչցող» հայեր: Արտասահմանեան կեանքի

ամէնէն նուաստացուցիչ, ամէնէն ամօթալի, ամէնէն ստորին երեւոյթներէն մէկն են եղած ժամանակակից քանի մը տասնամեակներու այդ բնորոշումները, ու հիմա չենք ուզեր պարզել, թէ մեր երկրի կուսակցատիրութիւնը ինչո՞ւ կնքահայրը եղած է այդ պիտակումներուն: Այո՛, ես մէկն եմ եղած անոնցմէ, հիներու եւ նորերու մեծ զանգուածին մաս կազմող այն շարքի

1920-ական թուականներէն ի վեր, մենք մեր ազգային կուսակցութիւններով, մեր գաղափարական տարակարծութիւններով, գործունէութեան եղանակներու տարբերութիւններով եւ հանրային ճակատներու վրայ գոյութիւն ունեցող բոլոր վէճերուն հակառակ՝ հայրենիքի եւ հայրենաբնակ ժողովուրդի հանդէպ մեր կեցուածքին մէջ ո՛չ մէկ աններդաշնակութիւն ունեցած ենք իբրեւ Սփիւռք:

տերէն, որոնք ազգային-գաղափարական իրենց համոզումներուն ճամբով հակադրուած են Հայաստանի կուսակցական իշխանութիւններու ընկերային-տնտեսական, ապագային-միջազգայնական եւ առհասարակ քաղաքական-պետական կարգուսարքին: Սակայն ո՛չ կուսակցութիւնը, որուն կարգին՝ ո՛չ ալ ես, բոլոր մը իսկ վարանք կամ տարակոյս ունեցած ենք այն մասին, որ հայրենաբնակ մայր զանգուածը մեր ժողովուրդի վարչակարգային իր համակերպումին զոհած է ազգային իր իմացումները, տենչերն ու ապրումները, ձգտումներն ու համահայկական երազները՝ նուազագոյն չափով իսկ: Ընդհակառակն, տիրող պայմաններուն իսկ բերումով, ամրացած ու արմատացած է իր ներկային եւ ապագային առնչուող բոլոր տեսիլքներուն մէջ: Չեմ երթար աւելի հեռու՝ ընդգծելու համար հայրենական իրականութեան ներշնչող, վերանորոգիչ եւ արիւնատու դերը՝ սփիւռքեան հայ կեանքի մէջ: Հայաստանի շինարարական, մշակութային եւ արտադրական-արդիւնաբերական նուաճումներուն փառքը հիւսելու աժան դպրութեան չեմ հաւատար: Այդ փառքը չի կարօտիր փառաւորումի կամ ներբողի. սակայն կը հաւատամ, որ հայրենի իրականութեանէն ամէն մեկուսացում հայուն համար ախտանիշ մըն է ապաստանի կամ ազգային նահանջի:

Եթէ կայ լրումի եւ իրականացման սպասող քայլ մը սփիւռք-հայրենիք անքակտելի միութեան մէջ՝ Հայաստանի կուսակցատիրական դեկավարութեան ակամայ եւ հարկադրական վերապահութիւններուն բարձման, սրբագրութեան եւ ջնջումի նախաձեռնութիւնն է, որպէսզի ինք-

նին քանդուին նաեւ արուեստական պատնէշները, քարոզչական մղումով ստեղծուած անհանդուրժողութիւններն ու նախապաշարումները: Այս հիմնական պահանջի իրագործումը կախում ունի համամիութենական Կոմկուսի կամքէն, տարբեր խօսքով՝ Խորհրդային Միութեան արտաքին յարաբերական կեանքի յատուկ քաղաքականութեան բարեշրջումէն: Անձնապէս, մօտ չեմ տեսներ նման բարեշրջում մը եւ մեկնելով ցարդ ի գօրու լինիսեան սկզբունքներէ եւ տակաւին իրագործելի առաջադրանքներէ, կը

կարծեմ, թէ երկա՛ր ժամանակ պիտի շարունակուին պարբերական սեղմումներն ու անբնականոն վիճակները:

Հարկ կա՞յ ըսելու թէ, ի՛նչ որ ալ եղած ըլլան տիրող պայմանները, հայրենիքի հետ Սփիւռքի կապը եղած է, կը մնայ ու պէտք է մնայ «ամբողջական հայրենիք, ամբողջական հայութիւն» վախճանական նպատակէն թելադրուող կենդանի, ամէնօրեայ եւ ապրումով ու գործով պայմանաւորուած վերաբերումի ընթացք մը:

«Մեր հողերու որոտը» եւ Հայ դատը

Հ.- Ձեր կարծիքով ո՞րն է լաւագոյն ուղիւն Հայ դատի հետապնդման, կամ՝ կրնա՞նք իսկապէս Հայ դատ հետապնդել այսօր: Ի՞նչ կը մտածէ՞ք Մշակոյթ-Հայ դատ առնչութեան մասին: Համաձայն է՞ք որ Հայաստան, իր գոյութեամբ իսկ, գլխաւոր կոռուսը՝ հիմնաւարն ու կիզակէտն է Հայ դատի:

Պ.- Վստահ եմ, որ երբ «լաւագոյն ուղիի» հարց կը դնէք, ներքնապէս կասկած կամ վերապահութիւն ունիք Հայ դատի հետապնդման մէջ

Անկասկած, գիտէք նաեւ, որ հայութիւնը որեւէ ատեն իր Դատի հետապնդման «լաւագոյն ուղին», այսինքն՝ ապահով, կտրուկ ու վճռական ճամբան ընտրելու իրաւունքը չէ զգացած, որովհետեւ չէ ունեցած արմատական քայլերու համար էական երեք տուեալները՝ ուժ (գօրութիւն), պետութիւն, քաղաքական-միջպետական նպաստաւոր իրադրութիւն: Մեր դատին «թիրախը» Թուրքիան է. սակայն ոչ միայն Թուրքիան, այլեւ անխտիր որեւէ պետութիւն չի գիշիր,

եթէ իրաւատէրը ի վիճակի չէ բռնի ուժով իր իրաւունքը պարտադրելու: Պարապ, սնամէջ խօսքեր են «իրաւունք», «արդարութիւն», «խաղաղ համակեցութիւն», «փոխադարձ յարգանք» եւ «գործակցութիւն». եւ եթէ ուրիշներ պատճառ ունին նման բառերով խաղալու եւ շնական հեգնութեամբ յոյս ու հաւատք ներշնչելու բարեմիտ ժողովուրդներուն,

Մեր դատին «թիրախը» Թուրքիան է. սակայն ոչ միայն Թուրքիան, այլեւ անխտիր որեւէ պետութիւն չի գիշիր, եթէ իրաւատէրը ի վիճակի չէ բռնի ուժով իր իրաւունքը պարտադրելու: Պարապ, սնամէջ խօսքեր են «իրաւունք», «արդարութիւն», «խաղաղ համակեցութիւն», «փոխադարձ յարգանք» եւ «գործակցութիւն». եւ եթէ ուրիշներ պատճառ ունին նման բառերով խաղալու եւ շնական հեգնութեամբ յոյս ու հաւատք ներշնչելու բարեմիտ ժողովուրդներուն, գոնէ մեզի ներելի չէ ոչխարամիտ լաւատեսութիւնը:

մեր ազգային կուսակցութեանց եւ ընդհանրապէս այդ «հետապնդման» աշխատանքներուն մասնակից սփիւռքեան զանգուածներու, միութեանց ու կորիզներու կողմէ գործադրուող միջոցներու կամ «ուղիներու» հանդէպ: Առա՛նց այդ վերապահութեան ալ ամէն հայ մղուած է այդ «լաւագոյն ուղիի» փնտռութիւն, որովհետեւ... սպառած է իր համբերութիւնը, ի տես յայտնաբերուող քար անտարբերութեան, մանաւանդ ուրացումներուն՝ մեծերուն թէ փոքրերուն կողմէ հաւասարապէս, թշնամիներուն թէ բարեկամներուն կողմէ՝ ա՛նխտիր, Արեւմուտքի թէ Արեւելքի կողմէ՝ նո՛յն նկատումներով եւ հաշիւներով:

րուն, գոնէ մեզի ներելի չէ ոչխարամիտ լաւատեսութիւնը: Հայ դատի հետապնդման «լաւագոյն ուղին» կախում ունի գիտական ու մարդկային հզօրանքէն, ապա՛ միայն քաղաքական եւ դիւանագիտական յարակից աշխատանքներէն, որոնց մասին խօսիլ անիմաստ է հիմա:

Բոլորովին տարբեր է պարագան «Հայ դատի հետապնդում» բացատրութեան համար, որուն կ'ուզեմ անգրադառնալ՝ պատասխանելով ձեր հարցումին («Կրնա՞նք իսկապէս Հայ դատ հետապնդել այսօր»):

Ձեր հարցումին մէջ երկու բառեր՝ «իսկապէս» եւ «այսօր», կը մղեն զիս ենթադրելու, որ դուք ունի՛ք արդէն պատասխանը ձեր հարցու-

մին, բայց կ'ուզէք, որ ուրիշ մըն ալ, ուրիշներ ալ, հաւանօրէն բովանդակ հայկական սփիւռքը միանան ձեր այն համոզումին, թէ միջազգային ներկայ իրադրութեանց մէջ «ՀԱՅ ԴԱՏԻ ՀԵՏԱՊԵՆԴՆԻՄ» տարազին բնոյթն ու տարողութիւնը չի կրնար ըլլալ ա՛յն, ինչ որ մեր ժողովուրդը կ'ուզէ գտնել ու տեսնել, ինչ որ այդ Դատի քաղաքական առումով գործնական ընթացքը կը պահանջէ:

Եթէ սխալ չէ իմ այս ենթադրութիւնը, եթէ... սխալ է նոյնիսկ, ապա ուրեմն կ'ուզեմ հիմնական քանի մը կէտեր յստակ դարձնել մեր զրոյցին մասնակից ընթերցողներու համար.

Առաջին կէտ.

Եթէ «Իսկապէսի» եւ «այսօրուան» մասնաւորութիւնները անտեսեմ ու հարցումը վերածեմ «կրնա՞նք Հայ դատը հետապնդել» ձեւին՝ պատասխանս սա՛ է.

«Հետապնդել»՝ ո՛չ թէ լուծման վախճանական նպատակէտի գործնականացումը իրագործելի անմիջական հանգրուան համարելով, ինչ որ աններելի պատրանք է, չըսելու համար ցնո՛րք. այլ «հետապնդել»՝ Հայութեան պահանջատիրական գիտակցութիւնը ամէնօրեայ կենդանի սեւեռում դարձնելու առաջադրանքով: «Հետապնդել»՝ այդ Դատի պատմական, իրաւական, քաղաքական, ազգային ու հողային էութիւնը՝ ապրող երէց թէ կրտսեր սերունդներուն համար «մարսուած», իւրացուած եւ ազգային-քաղաքական առողջ մտածողութեան վերածուած տեսնելու հետամտութեամբ: «Հետապնդել»՝ բովանդակ Հայկական սփիւռքը գորակոչի ենթարկելու համար հանրային կազմակերպումի, ազգային միութեան ու գործակցութեան, ընկերային-տնտեսական զօրացման միջոցներու ապահովման ի խնդիր: «Հետապնդել»՝ յարաբերական ու արտաքին ճակատներու վրայ հետաքրքրութիւն ստեղծելու համար հանդէպ մեր Դատին, քարացած անտարբերութիւնները ցնցելու եւ միջազգային հանրային կարծիքը կեդրոնացնելու համար պատմա-քաղաքական այն բոլոր իրադարձու-

«Հետապնդել»՝ այդ Դատի պատմական, իրաւական, քաղաքական, ազգային ու հողային էութիւնը՝ ապրող երէց թէ կրտսեր սերունդներուն համար «մարսուած», իւրացուած եւ ազգային-քաղաքական առողջ մտածողութեան վերածուած տեսնելու հետամտութեամբ: «Հետապնդել»՝ բովանդակ Հայկական սփիւռքը գորակոչի ենթարկելու համար հանրային կազմակերպումի, ազգային միութեան ու գործակցութեան, ընկերային-տնտեսական զօրացման միջոցներու ապահովման ի խնդիր:

թեանց, դիւանագիտական նենգութեանց եւ միջպետական շահերէ թելադրուած խաղերուն վրայ, որոնք հնարաւորութիւն ընծայեցին Օսմանեան կայսրութեան թէ իթթիհատականներու եւ անոնց ժառանգորդներուն՝ ցեղասպանութեան ճամբով «թաղելու» Հայկական հարցը: «Հետապնդել»՝ այժմեան պայմաններու եւ պահանջներու համակողմանի քննարկումով, ծրագրումով եւ հետեւողականութեամբ դարմանելու համար 1920 – 1950 երեսնամեակի մեր խարխափումներն ու վարանումները եւ, անյապաղ, Հայ դատի վրայ կեդրոնացնելու համար ուշադրութիւնը միջազգային ուսանողութեան, ակադեմականներու, պետական եւ քաղաքական դէմքերու, մամուլի, մտաւորականութեան, միջեկեղեցական կազմակերպութիւններու...

Կրնամ շարունակել վստահօրէն կրնա՛յ շարունակել ոեւէ Հայ անհատ, որ տան պատուհանը լա՛յն բացած է դրկից թէ հեռաւոր բոլոր բարեկամներուն եւ թշնամիներուն վրայ, ի վիճակի է սեւեռելու օտար հորիզոններուն եւ ընդհանուր գաղափար մը ունի առարկայական իրականութեան մասին:

Մեր ժողովուրդը հոգեբանօրէն մղուած է ակնկալելու, որ «Հայ դատ հետապնդելու» կարգախօսը իր իմաստով պարփակէ նաեւ անոր կարգադրութեան կամ լուծման փաստական իրողութեան ապահովութիւնը, եւ երբ տասնամեակներ ամբողջ այդ նպատակի իրագործումը չի տեսներ, բնականաբար հիասթափ կը դառնայ եւ կը յուսահատի:

Պիտի չմեղադրենք զինք այս հոգեվիճակին համար: Ու պիտի ըսենք, պիտի պարզենք իրեն, թէ նման ապահովութիւն մը տալու իրաւունք չենք զգար, գոյութիւն ունեցող պայմաններուն մէջ: Աւելի՛ն. պիտի շեշտենք, թէ Հայ դատի «հետապնդումը» քարոզչական սահմաններէ անդին, գործնական արդիւնաւորումի յանգելու տեսակէտով որեւէ երաշխիք չունի ներկայիս:

Քաղաքական դատերը ժամանակային տեւողութիւններով չէ, որ կը հասունանան ու կը ծաղկին, ո՛չ ալ դատին պատմականօրէն եւ իրա-

Լականօրէն անժխտելի հիմերով: Յատկապէս մեր ցրօնքին համար էական նշանակութիւն ունին միջազգային իրադրութիւնները՝ Թուրքիոյ, Խորհրդային Միութեան, Միացեալ Նահանգներու եւ ընդհանրապէս Միացեալ Ազգերու անդամ բոլոր պետութեանց յարաբերութիւնները: Ե՞րբ, իրերու ի՞նչ դասաւորումով եւ դէպքերու ո՞ր ընթացքով կը ստեղծուի «լաւագոյն ուղին» ընտրելու հնարաւորութիւնը, ի վիճակի չենք ճշդելու: Սակայն, սխալած չենք ըլլար հաւանօրէն, եթէ, մեկնելով օրուան կացութենէն, հաստատենք իրատեսօրէն, որ այդ հաւանականութիւնը շատ հեռու է տակաւին:

Երկրորդ կէտ.

Հայ դատի գործնական նկատառումը ու աւելի հեռաւոր կարելիութիւններով՝ արդիւնաւորումը, կախում ունի, առաջին գծի վրայ, Թուրքիա-Խորհրդային Միութիւն (եւ դաշնակիցներ) յարաբերութիւններէն, աւելի անվրէպ բնորոշումով մը՝ այս երկիրներու փոխադարձ շահերու, բարեկամութեան թէ մրցակցութեանց մօտաւոր կամ հեռաւոր հոլովոյթէն: Վաղը բոլորովին տարբեր պայմաններ կրնան ստեղծուիլ, ու տարբեր «դռներ» կրնան բացուիլ կամ փակուիլ: Սակայն, միշտ մեկնելով այսօր գոյութիւն ունեցող պայմաններէ եւ տուեալներէ՝ լաւատեսութեան որեւէ հիմ չենք կրնար տեսնել:

Անձնապէս մղուած եմ հաւատալու, թէ Հայ դատի հետապնդման քարոզչական ու յարակից աշխատանքներուն մէջ «լաւագոյն» վերադիրով բնորոշելի ճիգ մը պիտի ըլլայ աւելի սերտ կապեր հաստատել Երրորդ աշխարհի պետութեանց, Ընկերվարական շարժումի յառաջապահ մեծ թէ փոքր երկիրներու, բայց մանաւանդ Թուրքիոյ ներկայ ցեղապաշտ-թուրանական դեկավարութեանց հակադրուած ուժերու հետ, ո՛չ թէ անոր համար, որ «բանալին» անպայման անոնց ափին մէջ է, այլ անոր համար միայն, որ մեր Դատի գործնական նկատառութեան հնարաւորութիւններ կրնան ստեղծուիլ, երբ թրքական բռնատիրութիւնը ներսէն ցնցուի եւ այս կամ այն ձեւով սեղան բերէ վարչակարգային, ցեղաբանական կամ ըն-

կերային առումով հիմնական փոփոխութիւններու պահանջ մը:

Ըսել կ'ուզեմ, Մեծերէն որեւէ ակնկալութիւն շատ աւելի անմատչելի հեռանկար է, քան Թուրքիոյ ներքին-անջատողական, դժգոհական եւ հակապետական հոսանքներուն պայքարով ենթադրելի որեւէ շրջում այդ երկրի կացութեան մէջ:

Երրորդ աշխարհի ե՛լ ընկերային, ե՛լ քաղաքական, ե՛լ ոչ-յանձնառու կեցուածքով ըմբռնելի տրամադրութիւնները եւս կրնան կողմնակի նպաստ մը դառնալ քարոզչական մեր աշխատանքներու յաւելեալ արդիւնաւորումին:

Ոմանք, գիտե՛մ, յուսադրուած են Խորհրդային Միութեան «հաւանական» նախաձեռնութիւններով, ի նպաստ հայապատկան հողերու հայութեան վերադարձին՝ Սովետական Հայաստանի կցումին: Արդար, թերեւս նաեւ առողջ տրամաբանութիւն մը: Պէ՛տք է այդպէս ըլլայ: Բայց, միշտ անձնական տեսակէտ մը յայտնած ըլլալու համար կ'ուզեմ դիտել տալ, թէ խորհրդային «չուանին» վրայ վստահութիւն չունիմ:

Հաւատացած եմ, որ Հայ դատի հովանաւորութիւնը Խորհրդային Միութեան պարտքն է, իբրեւ կեդրոնական հեղինակութիւնը Միութեան բաղկացուցիչ հանրապետութիւններու: Կը հաւատամ նաեւ, որ խորհրդային նման նախաձեռնութիւն մը հիմնական կշիռ ունի: Սակայն չեմ հաւատար, որ Սովետները հայապատկան այդ հողերը Հայաստանի կը վերադարձնեն անպայման: Եթէ որեւէ փոփոխութիւն տեղի չունենայ Մոսկուայի եւ իսլամ ժողովուրդներու հանդէպ խորհրդային կեցուածքին մէջ,

հ ա մ ա յ ն ա վ ա ը
Կոմկուսը պիտի չուզէ հողային ամբողջականութեան հասած Հայաստան մը ստեղծել Թուրքեւ-խորհրդային սահմաններու վրայ: Ատրպէյճանը եւ ասիական Ռուսիոյ իսլամական հանրապետութիւնները տիրական

Հայ դատի գործնական նկատառումը ու աւելի հեռաւոր կարելիութիւններով՝ արդիւնաւորումը, կախում ունի, առաջին գծի վրայ, Թուրքիա-Խորհրդային Միութիւն (եւ դաշնակիցներ) յարաբերութիւններէն, աւելի անվրէպ բնորոշումով մը՝ այս երկիրներու փոխադարձ շահերու, բարեկամութեան թէ մրցակցութեանց մօտաւոր կամ հեռաւոր հոլովոյթէն:

հեղինակութիւն ունին այսօր Քրեմլի վրայ, որ պիտի չուզէ արդէն իսկ «կասկածելի» այդ ժողովուրդները հրահրել իրենց կրօնամոլ-ազգայնական ձգտումներուն մէջ...

Չմոռնա՛նք, որ 1940-ական թուականնե-
րուն ալ փայփայած ենք Մոսկուայի նախա-
ձեռնութեամբ Հայ դատ «լուծելու» երազ մը,
սակայն Վիշինսքիները պաշտօնապէս... Վրաս-
տանի՛ անունով պահանջած են Կարսն ու հա-
յապատկան հողերը:

Երրորդ կէտ.

Հարց կու տաք, թէ ի՞նչ կը մտածեմ «Մշա-
կոյթ-Հայ դատ» առնչութեան մասին ու համա-
ձա՞յն եմ որ Հայաստան, իր գոյութեամբ իսկ,
գլխաւոր կուուանը, հիմնաքարն ու կիզակէտն է
Հայ դատի:

Ահաւասիկ իմ պատասխանը:

Մշակոյթի եւ Հայ դատի առնչութիւնը
կարելի չէ կասկածի ենթարկել՝ մասնաւորաբար
այդ Դատի քարոզչական մարզերուն վերաբեր-
եալ աշխատանքներու շրջագծին մէջ: Յատկա-
պէս մեր օրերուն՝ մշակութային մակարդակ,
մշակութային դիմագիծ եւ մշակութային կա-
րողականութիւն հիմնական դեր ունին իրա-
ւատէր ժողովուրդներու ազգային-ընկերային
արժանաւորութիւնը ինքնապարտադիր ուժի
վերածելու համար՝ յաջս միջազգային հանրա-
յին կարծիքի: Մենք շատ ո՛ւշ մնացինք մեր
մշակոյթով ներկայանալու համար Եւրոպա-
յի, ինչպէս նաեւ այն բոլոր ժողովուրդներուն,
որոնք վերջին քսան տարիներուն իրենց անկա-
խութեան տիրացան:

Բաղդատաբար նոր ժամանակներու մէջ է
որ մշակութային մեր ժառանգութիւնը բերած,
զետեղած ենք հայաճանաչումի յատուկ մեր
նախաձեռնութեանց առաջին գիծերուն վրայ,
եւ, կը կարծեմ, յաջողած ենք միջազգային
մտաւորական, երիտասարդական եւ ժողովրդա-
յին շրջանակներու մէջ լայն հետաքրքրութիւն
ստեղծել Հայոց, Հայ մշակոյթի եւ... Հայ Դատի
հանդէպ: Սփիւռքեան ժողովուրդ մը, այս պա-
րագային Արտերկրի հայութիւնը, որ իր Դատը
հետապնդելու համար սահմանափակ միջոցներ
միայն ունի, մշակութային նախաձեռնութեանց
շատ աւելի լայն ծաւալ ու թափ պէտք է տայ:
Բոլոր գլխաւոր լեզուներով՝ Հայը, Հայ մշակոյ-

թը, Հայոց պատմութիւնն ու Հայ Դատը արժա-
նի լրջութեամբ եւ գիտական-ակադեմական
տարողութեամբ պէտք է ծանօթացուին միջազ-
գային հանրային շրջանակներուն: Ըսեմ անցո-
ղակի, որ բաղդատաբար անցեալին, անհամե-
մատօրէն ծաւալուն աշխատանք կատարուած է
վերջին 20 տարիներուն, սակայն բաղդատաբար
ներկայ պահանջներու՝ անբաւարար է իրա-
գործուածը:

Չորրորդ կէտ.

Գալով հարցումի վերջին կէտին, աւելորդ,
նոյնիսկ անտեղի կը նկատեմ հարցականը՝ Հա-
յաստանը Հայ դատի «հիմնաքար» նկատելու
հարցին մէջ: Ո՛չ միայն անոր համար որ ամէն
դատ շօշափելի, առարկայական եւ իրողա-
կան հիմ մը պէտք է ունենայ, «կիզակէտով»
մը պէտք է ներկայանայ, այլեւ ու մանաւանդ
անոր համար, որ այդ դատի պաշտօնական եւ
իրաւասու տիրոջ՝ հայ ժողովուրդի կէսը կամ
կէսէն աւելին, հայրենի հողերուն վրայ ու մեզ-
մէ աւելի վճռականօրէն պահանջատէր (փոյթ
չէ, որ գործնական նախաձեռնութեանց կարե-
լիութիւններէն գուրկ) կը մնայ իր հողերուն:

Մինչեւ 1965 ունէ՛ինք այդ անխախտ հա-
ւատքը եւ ազգային այդ պահանջատիրութեան
արտայայտութիւնն ալ կը տեսնէինք հայրե-
նաբնակ երէց թէ կրտսեր սերունդներու զրա-
կան-մշակութային վաստակին եւ հայրենական
կեանքի ներքին-միութենական իրադարձու-
թեանց մէջ: Զո՛ւր չնահատակուեցան Չարենց-
ներն ու Խանջեանները...

1965-էն ասդին՝ «մեր հողերու» որոտը
շատ աւելի տիրական է եւ շօշափելի: Հարկ կա՞յ
վերջին 15 տարիներու ժամանակային յաջոր-
դական հանգրուաններուն մէջ մատնանշելու
Հայ դատով ըմբռնելի իրագործումները, Սար-
դարապատի եւ Բաշ Ապարանի յուշակոթողնե-
րով առարկայացած պահանջատիրական կամքն
ու վճռականութիւնը. չեմ կարծեր:

Կը կարծեմ, սակայն, որ այս իրողութիւնը
Սփիւռքի համար պէտք չէ նկատուի ապահո-
վութիւն մը այն մասին, թէ՛ «Հայրենիքը պիտի

**Մշակոյթի եւ Հայ դատի առնչութիւնը կարելի չէ կասկածի ենթարկել՝ մասնաւորաբար այդ Դատի քարոզչական մարզերուն վերաբերեալ աշխա-
տանքներու շրջագծին մէջ: Յատկապէս մեր օրերուն՝ մշակութային մակար-
դակ, մշակութային դիմագիծ եւ մշակութային կարողականութիւն հիմնական
դեր ունին իրաւատէր ժողովուրդներու ազգային-ընկերային արժանաւորու-
թիւնը ինքնապարտադիր ուժի վերածելու համար՝ յաջս միջազգային հանրա-
յին կարծիքի:**

լուծէ՛ արդէն մեր Դատը, եւ, հետեւաբար, մենք կրնանք անվրդով մեր գլուխները դնել բարձին վրայ ու մրափել»...: Ընդհակառակն, Հայաստանի մէջ պարզուող պատկերը պէտք է մղէ մեզ յաւելեա՛լ ճիգերու եւ աշխատանքի, որովհետեւ, աւելի քան երբեք այսօ՛ր, հայուլթեան հաւաքական պայքարով միայն երաշխաւորուած է հետապնդումը Հայոց իրաւատիրութեան եւ ո՛չ

ոքի կրնանք վստահիլ պաշտպանութիւնն ու լուծումը Հայ դատին:

Պիտի հետապնդենք այդ Դատը, առանց ժամանակի կամ ժամկէտի հարց յուզելու. պիտի հետապնդենք ազգովի՛ն, անկարելի զոհողութեանց ու զոհաբերութեանց գինով, ի հարկին՝ ինքնուրացման ճամբով, որ, ի դէպ, «լաւագոյն ուղիներէն» մէկն է:

Պիտի հետապնդենք այդ Դատը, առանց ժամանակի կամ ժամկէտի հարց յուզելու. պիտի հետապնդենք ազգովի՛ն, անկարելի զոհողութեանց ու զոհաբերութեանց գինով, ի հարկին՝ ինքնուրացման ճամբով, որ, ի դէպ, «լաւագոյն ուղիներէն» մէկն է:

Սրբագրելի թերացումները

Հ.- Սրբագրելի կամ դարմանելի ի՛նչ թերութիւններ կը գտնէ՞ մեր կազմակերպական կեանքին մէջ: Ինչպէ՞ս սրբագրել, կարելի՞ է սրբագրել:

Պ.- Եթէ ձեր հարցումը տարասփիւռ հայութեան հանրային-կազմակերպական կեանքին մասին է՝ «յոռետեսութիւն» մի՛ վերագրէք ինծի, եթէ ըսեմ որ կ'ապրինք կազմակերպականօրէն ամէնէն անփառունակ շրջանը յետեղեռնեան մեր տարեգրութեանց մէջ: «Թերութիւն» բառով բնորոշելի տկարութիւններէ շա՛տ աւելի անդին ենք, կազմալուծման ու քայքայումի գառիթափի մը վրայ...

Ձեր իրաւունքն է պահանջել, որ հիմնաւորեմ իմ հաստատումը, սակայն կ'ուզեմ նկատել տալ, որ նման հարկադրանքի մը պարագային, համապարփակ ծաւալումի եւ պատճառաքննական խորացման ստիպողութիւնը անխուսափելի է:

Կը գոհանամ քանի մը արագ արտորոշումներով: Նախ՝ աններելի թերացումներու մէջ գտնուած են ազգային-եկեղեցական կեանքի պարունակին մէջ գործող օրէնսդիր մեր ժողովներն ու մարմինները, հանրային ղեկավարութեան մաս կազմող հոգեւորական թէ՛ աշխարհական դէմքեր՝ աստիճանաբար տկարացնելով Ազգային սահմանադրութեամբ պայմանաւոր հանրային-կազմակերպական կառույցը, մանաւանդ անոր հիմնական հինգ-վեց կանոնները, որոնք անփոփոխելի են:

Հ.- Ո՞ր սկզբունքներու մասին է խօսքը:

Պ.- Կ'ակնարկեմ Ազգային սահմանադրութեան էութիւնը պարզաբանող «Հիմնական սկզբունք» բաժնի վեց յօդուածներուն: Անոնց մէջն է, որ կը ճշգրտին ազգին եւ անհատին

փոխյարաբերութիւնները՝ ժողովրդավարական հիմունքներու վրայ: Ասոնք, ըսի, անփոփոխելի պէտք է մնան:

Եղեռնէն մազապուրծ մնացորդացը, իր նոր կայքերուն մէջ իբրեւ ընկերային կեանքի կարգապահական ըմբռնումներուն ծառայելու կոչուած գիտակից մարդիկ, բայց մանաւանդ պետականութենէ զուրկ ժողովուրդի մեր ներազգային պայմաններուն խորագիտակ հաւաքականութիւն, շատ աւելի կենսականօրէն կը կարօտէր ազգ-անհատ փոխադարձ իրաւունքներու եւ պարտականութեանց ճանաչումը ունենալու: Կը գիտակցինք անշուշտ այն բացասական ազդակներուն եւ աննպաստ իրադրութեանց, որոնք ակամայ դժուարութիւններու դէմ-յանդիման դրին մեր պատասխանատու մարմինները, սակայն կը մերժենք ընդունիլ «անկարելիութեան» առասպելը: Արտասահմանեան (չեմ ուզեր «գաղթական» բառը գործածել) բեկորներու, յաճախ հեռընկէց կոտորակներու վերածուելէ ետք՝ մեր առաջին նպատակներէն մէկը պէտք է ըլլար մայրենի լեզուի, ազգային դաստիարակութեան, ոգեպաշտական եւ գաղափարական իմացումներու ենթահող ստեղծող ու նոր սերունդներու մէջ գոյատեւումի կամքը կռանելու կոչուած կրթական ճիգերու կողքին նա՛եւ հաւաքական ուժ դառնալ կարենալու «գիտութիւնը» ջամբել երէցներուն ու կրտսերներուն: Ըրի՛նք այդ փորձը, սակայն շատ մասնակի չափերով ու շատ անբաւարար թափով ու տարողութեամբ:

Անոնք, որ 1820-էն մինչեւ 1860-ական թուականներ մաշեցան Ազգային սահմանադրութեան հիմնական կանոններն ու յարակից հարիւր յօդուածները մշակելու, ապա նա-

եւ արեւմտահայ հանրային-կազմակերպական կեանքը դնելու համար ժողովրդավարական հիմերու վրայ, Հայց. եկեղեցին անխախտ պահելու համար աշխարհավարական իր նկարագրին մէջ՝ լուկ թրքահայութիւնն ու անոր 1800-ական տարիներու ընկերային պահանջները մեկնակէտ չունէին. շատ աւելի հեռաւոր հորիզոններու եւ տեսիլքներու սեւեռած էին: Դժբախտաբար, Սահմանադրութիւն կերտող սերունդը չունեցաւ իր ժառանգին արժանաւորութիւնը ցոյց տուող յետնորդներ. սերունդէ սերունդ՝ ընկրկեցանք, քայլ առ քայլ նահանջեցինք հակալիւթ եւ հաշուետուութենէ խոյս տուող եկեղեցականներու առջեւ, չըմբռնեցինք սահմանադրական սկզբունքներու անեղ եւ անկորուստ պահպանութեան էական նշանակութիւնը եւ «որբացուցինք» անփոխարինելի հարստութիւն մը: Եթէ յաջողէինք տէր կանգնիլ անոր եւ համաձայն նոր պայմաններու եւ ժամանակի պահանջներուն ընէինք անհրաժեշտ փոփոխութիւնները վարչական-մատակարարական բնոյթ ունեցող յօդուածներու մէջ, անխախտ պահէինք հիմնական սկզբունքներն ու կանոնները, սակայն ի հարկին հիմնովին նոր յօդուածներ բանաձեւէինք հոն ի մի ամփոփուած 99-100 տրամադրութեանց տեղ, այսօր չէինք անդամալուծուել իբրեւ համայնական միութիւն ու կազմակերպութիւն: Կրթական, ընկերային, մշակութային ու տնտեսական առումով առողջ հաւաքականութիւն կ'ըլլայինք՝ փոխանակ խոցելի եւ հիւանդկախ համրանքի...

Թէ ինչո՞ւ այժմու քայքայուն կացութեան մատնուած ենք՝ կրնանք մէկիկ-մէկիկ թուել պատճառներն ու ազդակները, սակայն թերացումներն ու աններելի ձեռնթափութիւնները:

Սակայն, ըսի արդէն, ծաւալելու հարկադրանքը կրնայ ծագիլ:

Անհատական համոզումս է: Այսօ՛ր ալ, տակաւին, կարելի է շատ բան շահիլ, եթէ սահմանադրական ոգին, հանրային կազմակերպումն ու օրէնքներու գործածութիւնը դաւանինք նո՛յնքան կենսական եւ անյետաձգելի, որքան ազգային գոյատեւման սատար նկատուած որե-

Այսօ՛ր ալ, տակաւին, կարելի է շատ բան շահիլ, եթէ սահմանադրական ոգին, հանրային կազմակերպումն ու օրէնքներու գործածութիւնը դաւանինք նո՛յնքան կենսական եւ անյետաձգելի, որքան ազգային գոյատեւման սատար նկատուած որեւէ առաջադրանք կամ նպատակ: Իրաւատիրական պահանջ ունեցող ժողովուրդ մը ամէն բանէ առաջ հանրային կազմակերպումի եւ տնտեսական ինքնաբաւութեան կը կարօտի:

ւէ առաջադրանք կամ նպատակ: Իրաւատիրական պահանջ ունեցող ժողովուրդ մը ամէն բանէ առաջ հանրային կազմակերպումի եւ տնտեսական ինքնաբաւութեան կը կարօտի:

Երկրորդ գլխաւոր պատճառը կազմալուծման վտանգին՝ կամովին կամ ակամայ տարտղնումն է մեր ժողովուրդին:

Սփիւռք էինք 1922 – 1952 երեսնամեակին. «փոշի ազգ» դառնալու թեկնածու ենք այսօր: Եւ պատճառը աշխարհագրական ցրուումը չէ այնքան, որքան նոր գաղութներու միջավայրային չարաղէտ անդրադարձը հայկական կոտորակներու կենցաղային բարքերուն, ազգային մթնոլորտին, մղումներուն, պահանջներուն, ազգը իր ազգային կլիմայով գոյատեւման ընդունակ դարձնող ձգտումներու վրայ: Որքան ալ կորսնցուցած չըլլանք ինքնութեան զիտակցութիւնը, ի՛նչ չափով ալ որ պայքարինք ձուլման երախներու դէմ՝ օտարութեան կոհակներուն դէմ մեր դիմադրութիւնը տկարացած է: Ներագգա-

Ներագգային մեր կեանքին մէջ գաղափարականութիւն, հանրային մտածողութիւն, ներընտանեկան ու յարաբերական վերաբերումներ եւ բարոյական արժէքներու հանդէպ մեզի համար անհրաժեշտ կեցուածք՝ աստիճանաբար կը նուաղին, կը մաշին կամ կը հիւծին, որովհետեւ կ'ապրինք ճարտարարուեստականացած քաղաքակրթութեան մը մէջ՝ ենթակայ դրամատիրական երկիրներու յատուկ ընկերային ըմբռնումներու, գործնապաշտութեամբ եւ առեւտրականամիտ հետաքրքրութիւններով առաջնորդուող ընկերութեան մը մէջ, ուր նիւթը, տնտեսական կարողականութիւնը ու փոխադարձ շահախնդրութիւնները բախտորոշ ուժեր են:

յին մեր կեանքին մէջ գաղափարականութիւն, հանրային մտածողութիւն, ներընտանեկան ու յարաբերական վերաբերումներ եւ բարոյական արժէքներու հանդէպ մեզի համար անհրաժեշտ կեցողածք՝ աստիճանաբար կը նուազին, կը մաշին կամ կը հիւժին, որովհետեւ կ'ապրինք ճարտարարուեստականացած քաղաքակրթութեան մը մէջ՝ ենթակայ դրամատիրական երկիրներու յատուկ ընկերային ըմբռնումներու, գործնապաշտութեամբ եւ առեւտրականամիտ հետաքրքրութիւններով առաջնորդուող ընկերութեան մը մէջ, ուր նիւթը, տնտեսական կարողականութիւնը ու փոխադարձ շահախնդրութիւնները բախտորոշ ուժեր են: Չեմ խօսիր մասնաւորաբար արեւմտեան ժողովրդավարութիւններու կողմէ պաշտպանուող անհատական ազատութիւններու չափազանց թոյլատու հետեւութիւններուն մասին. գո՛նէ մեզի համար՝ որոշ պահանջողականութիւն մը անհրաժեշտ է, բայց մենք, մանաւանդ մեր զաւակները, մէկ օրէն միւսը ազատութիւններու այդ ծովուն մէջ վտանգաւոր յորձանքներու կը յանձնուինք...

Ապաստումի սպառնալիքը հեռանկար մը չէ այլեւս. հաւանականութիւն մըն է, թերեւս արդէ՛ն իսկ իր աւերը զգալի դարձնող փաստական իրողութիւն մը: Մտաւորապէս վաթսուն տարի առաջ, Շահնուր առիթով մը կ'ահագագէր. «Կը նահանջե՞նք»...: Աղեկտուր այս կանչը հիմա հազիւ փողոց մը հեռուէն կը հասնի... Հանրային բազմութիւններ առհասարակ իրենց առօրեայ հեւքի ճնշումին տակ են, հետեւաբար ժամանակ չունին խանութին կամ գրասենեակին դրամարկղէն վեր վերցնելու իրենց աչքերը եւ հետաքրքրուելու, թէ ի՛նչ տեղի կ'ունենայ գաղթաշխարհի մերձաւոր թէ հեռաւոր անկիւններուն մէջ. «Ի՞նչ կը բանի» հայութիւնը: Ազգին որպիսութեամբ հետաքրքրուելու պարտականութիւնը մտքի մարդոց ձգուած է... աւանդօրէն, բայց անո՛նք ալ, վերջին քսան տարիներուն, յոգնութեան ու ճանճրոյթի նշաններ ցոյց կու տան: Հայ մտաւորականութեան պատկանելի մէկ մասը բացակայ է հայկական ծովու փարոսներէն ու կը մերժէ դիտարան բարձրանալ՝ ստուգելու համար, թէ փոթորիկը ո՛ր ծագէն կը պայթի, մրրիկը ո՛ր կողմէն կու

գայ ու Ազգին նաւակը ո՛ր ջուրերուն մէջ է, ո՛ր խարակներուն մերձ կամ ո՛ր աւազուտքին մօտիկ...

Ե՞ս, ինձի նման հինգ կամ տասը հոգի՞ պիտի ըլլան եղբրամայրերը, որպէսզի հարցազրոյցի մը առիթով կամ պարագայական արտայայտութիւններով հանրային եւ մամուլը բեմերէ՛ գործեն... սխալը կամ անշրջահայեցողութիւնը յայտարարելու, թէ կը դանդաղինք, կը տատանինք, կ'ընկրկինք...

Հ.- Ի՞նչ են արդեօք այս երեւոյթին տուն տուող պատճառները. ինչո՞ւ մտաւորականներու պատկանելի զանգուած մը կրաւորական կեցողածք ի յայտ կը բերէ հանրային-համայնական մեր կեանքին հանդէպ: Կը բացակայի գործի, յանձնառութեանց ու պայքարի ձակատէն: Ի՞նչ են, կը կարծէք, պատճառները այս երեւոյթին:

Պ.- «Մտաւորական» եւ «մտաւորականութիւն» բառերը, ի՛մ համոզումով, ամէն բանէ առաջ ու ամէն բանէ վեր կ'ենթադրեն պատասխանատուութեանց յանձնառութիւն, ինչպէս նաեւ քաջութիւն՝ պայքարելու դասալքութեան, զանցառութեանց, սխալներու եւ թերացումներու, ընկերային-համայնական մեր կեանքի ախտաւոր բոլոր երեւոյթներուն դէմ:

Ձեր կողմէ յիշատակուած իմ ակնարկութիւնը ուղղուած էր, հետեւաբար, երէց թէ կրտսեր սերունդներու մաս կազմող «մտաւորականութեան»՝ իրենց դերը արժեւորելու, մտքի իրենց պատրաստութիւնը գործի վերածելու կոչուած այն տարրին, որոնք կա՛ն իբրեւ սոսկական անհատներ, սակայն չկան՝ իբրեւ հաւաքական գործօններ եւ իմաստասիրական բացատրութեամբ մը՝ չեն «իրագործեր իրենք զիրենք»: Մեկուսացած են փողոսկրեայ աշտարակներու մէջ, վերէ՛ն կը նային մեր կեանքին եւ... կը հաճին արտայայտուիլ միայն ա՛յն պարագային, երբ քննադատելի կամ դատապարտելի երեւոյթներ կան, երբ կարելի է քննադատել քննադատութեա՛ն սիրոյն:

Մտաւորականներու այս դասին անգործութիւնն ու բացակայութիւնը սփիւռքեան առօրեայ կեանքի հանրային ճակատներէն՝ միակ պատճառ ունի հանրային-հաւաքական

գործունէութեան անատակութիւնը: Կարելի չէ ժխտել այն իրողութիւնը, որ մտքի պատրաստութեամբ, մասնագիտական պատրաստութեամբ եւ կարողականութեամբ հարուստ ամէն անհատ ընդունակ չէ խմբական-հաւաքական աշխատանքի. մեծ թիւ կը կազմեն անոնք, որոնց համար խմբական աշխատանք կատարելու, հանրային-ժողովական գործունէութեանց մասնակից դառնալու յանձնառութիւն մը յաճախ... «ժամավաճառ» ըլլալու, անլսելի մնալու, անձնական արժանապատուութեան վիրաւորանքի, դառնութիւններու եւ խրտչումի հարց կը ստեղծէ: Աւելին չեմ ըսեր: Գործողը գիտէ:

Հայ կեանքի մէջ դերակատար դառնալու ամէն պատրաստակամութիւն ենթակային կը պարտադրէ գիտակցիլ թէ ազգային կամ հանրային գործունէութեան մարզերու վրայ «վարդերը» առատ չեն, «փուշերն» են առատ, թէ ո՛չ ոք զիրենք պիտի ծափահարէ կամ պատուէ, երբ դրական որեւէ գործ կը կատարեն: Միւս կողմէ, պիտի գիտնան թէ ամէն ոք զիրենք պիտի մեղադրէ, դատապարտէ կամ քննադատէ, երբ մարդկօրէն կը սխալին...: Հայ իրականութեան մէջ, յանձնառութիւններու ընդունակ եւ պատրաստակամ մարդը անընդունակ կը դառնայ հանրային դերակատարութեան, եթէ չունի ատակութիւնը ներազգային մեր իրականութեան մէջ անխուսափելի նման երեւոյթներու հետ հաշտուելու: Քաջութիւնը գործելու կարողականութեամբ եւ յանձնառութեան տրամադրութեամբ միայն բացատրելի տուեալ մը չէ. հարկ է ունենալ նա՛եւ տոկալո՛ւ, պայքարելո՛ւ, մարդոց մեծ ու փոքր թերութիւններէն աւելի՛ հաւաքական նպատակներ, հաւաքական շահեր, հաւաքական իրագործումներ ապահովուած տեսնելու վճռակամութիւնը: Հո՛ս է մտաւորականին տարբերութիւնը... «աղայականութենէն»:

Ձեր հարցումը, միւս կողմէ, կը պարտադրէ չանտեսել նաեւ հետեւեալ կէտը՝ պատճառական քննութեան մէջ: Ձեռնթափ կամ անտարբեր մտաւորականներէ ոմանց վերապահութիւնը կամ խրտչումը հետեւանք է ազգային, հանրային եւ կազմակերպչական կեանքի մէջ այսպէ՛ս կոչուած «դեկավարական» դասու, իրաւասու ժողովներու եւ մարմիններու կողմէ յաճախ ի յայտ բերուած բացայայտ անփութութեանց անձրագիր եւ պարագայական կեցուածքի, սիրոյ եւ գուրգուրանքի, հոգածութեան ու յարգանքի, երբեմն նոյնիսկ տարրական նրբանկատութեան պակասի...

Ըսել կ'ուզեմ, թէ արդար պիտի չըլլայ մի՛շտ դատապարտել մտաւորական այն դասը,

որ կը տկարանայ եւ կ'ընկրկի, երբ նկատուաներ կը տեսնէ ու կ'ընդզգի, իշխանատենչական ձգտումներ կը նշմարէ եւ կը պայքարի, սխալներ կը գտնէ ու կը քննադատէ: Եթէ մտաւորականէն ծառայութիւն, գործակցութիւն, պայքար ու քաջութիւն կ'ակնկալուի՝ էական է, որ հաւաքականութիւնն ալ հանդուրժողութիւն ցոյց տայ քննադատութեան հանդէպ, լսելի գիտնայ, յարգել գիտնայ, գնահատել գիտնայ ի հարկին...:

Հ.- Լաւ, վերադառնալով մեր խօսքի առաջին մասին...

Պ.- Կասկած չունինք առողջ բնագրին, սուր հոտառութեան եւ անվրէպ ախտաճանաչումին վրայ ժողովրդային այն ճղճիմ փոքրամասնութեան, որ աչքերը սեւեռած կը պահէ հայ իրականութեան մութ ու պայծառ հորիզոններուն: Երբ կը խօսիմ մեր նահանջին մասին, մի՛ ենթադրէք, որ ի մտի չունիմ նաեւ այն տարրը, որ կը շարունակէ յամառօրէն Հայը փնտռել, հետաքրքրուիլ, թէ ի՛նչ կ'ընէ ան, ո՛ւր է, դէպի ո՛ւր կը դիմէ, պէտք չունի՞ արդեօք իրեն, կը տեսնէ՞ արդեօք իր գոյութիւնը...

Այո՛, մենք ունինք երէցներու դաս մը, որ լաւատես նկատուի թէ յոռետես, տեսնելու դերի մը մէջ է ի վերջոյ: Սեւեռած է սփիւռքեան իրականութեան ու յաճախ գլուխը ափերուն մէջ առած՝ կը փորձէ ամէն ինքնախաբէութենէ եւ հաւանական անձնականութենէ զերծ՝ դրական եւ բացասական երեւոյթները զատորոշել, կշռադատել, կարծիք ու տեսակէտ ունենալ, ըստ այնմ ապրիլ...

Ունինք մանաւանդ դաս մը երիտասարդներու, դեռ նոր դալարած պատանիներու, որոնք յանձնառութեան ու պայքարի առաջին գիծերուն վրայ են: Շատերը անոնցմէ, իրենց նկարագրով, ոգիով, մտաւոր պատրաստութեամբ, հայաճանաչումով ու ծառայութեան յօժարակամութեամբ, վստահօրէն փնտռել պիտի չտային անվերադարձ մեկնողները: Ո՞վ կրնայ ժխտել, թէ վերջին 15-20 տարիներուն Սփիւռքը երիտասարդութեան իր ա՛յս դասով արիւն կը հասցնէ մեր սրտին, կենսատո՛ւ արիւն, նոր ու անխառն արիւն:

Բայց մասնակի կապոյտները՝ ամպամած երկինքներու վրայ, արեւու ապահովութիւն չեն կրնար տալ: Մերօրեայ Սփիւռքը միտիթարութիւններով չ'ապրիր, պէտք ունի լման գոհացումներու, տարերային զօրաշարժի, արմատական եւ ազդու նախաձեռնութիւններու, հիմնական բարեշրջումներու: Եւ երկունքի ձայները, որոնց վրայ կը դառնանք յաճախ յեղափոխական ու ծայրայեղական նախաձեռ-

նույն ժամանակներում, ա՛յս է որ կ'ըսեն: Ո՞ւր է շօշափելի փաստը տարասփիլո հայութեան ամբողջական սթափումին, գործո՛ւն մասնակցութեան մեր այն բոլոր ճիգերուն, որոնք կը միտին գոյատեւման կռուանները ամուր եւ անառիկ դարձնել: Օ՛, գիտենք...: Ունինք ազգային մեր կուսակցութիւնները, հանրային-եկեղեցական մարմինները, ուսումնական-կրթական մեր յարկերը, մշակութային միութիւնները, թերթերը, մտաւորականները եւ ասոնց շուրջ բոլորուած հաւատաւոր, զոհաբերութեան պատրաստ ժողովրդային խաւեր: Յետո՞յ: Յետոյ ի՞նչ...

Ի՞նչ է համեմատութիւնը Ազգին ծառաներով եւ հաստատութիւններով մտահոգ մարդոց: Եւ եթէ հինգ առ հարիւրէն աւելի չէ համրանքը գործնապէս մասնակից հասարակութեան, ինչպէ՞ս կարելի է արդիւնաւորել անոնց քրտինքն ու աշխատանքը: Եթէ Միացեալ Նահանգներու մէջ ապրող հայերու թիւը 400 000 է կամ աւելի, ո՞վ կրնայ պնդել, թէ հայ իրականութեան ներազգային մարզերուն մէջ գոնէ 20 000 կամ 25 000 հոգի ամբողջական յանձնառութեամբ տրամադրուած է հանրային, քաղաքական, մշակութային մարզերու մէջ դրամագլուխ դառնալու հաւաքական նախաձեռնութեանց:

Բայց մատնանշեմ վերահաս ամէնէն ճակատագրական վտանգներէն գոնէ մէկ քանին՝ հիմնաւորած ըլլալու համար միայն հաստատումը, թէ շատ ո՛ւշ մնացած ենք մեր թերացումները, հանրային կազմակերպումի մարզին մէջ վերջին 20-30 տարիներու ընթացքին հետզհետէ աղէտալի հետեւութիւններով ծաւալող ինքնագոհութեան ու քաղքենիացման քայքայիչ անդրադարձումները խափանելու

համար: Հիմա շօշափելի իրողութիւն է «օտարացման» սպառնալիքը սփիւռքեան զանգուածներու համար, եւ եթէ մերթեմք հաւատալ հրաշքներու կարելիութեան, չենք կրնար հաւատալ նաեւ փրկութեան մը յոյսին:

Սիտնիէն մինչեւ Պոլիս, հայկական արտա-

Ո՞ւր է շօշափելի փաստը տարասփիլո հայութեան ամբողջական սթափումին, գործո՛ւն մասնակցութեան մեր այն բոլոր ճիգերուն, որոնք կը միտին գոյատեւման կռուանները ամուր եւ անառիկ դարձնել: Օ՛, գիտենք...: Ունինք ազգային մեր կուսակցութիւնները, հանրային-եկեղեցական մարմինները, ուսումնական-կրթական մեր յարկերը, մշակութային միութիւնները, թերթերը, մտաւորականները եւ ասոնց շուրջ բոլորուած հաւատաւոր, զոհաբերութեան պատրաստ ժողովրդային խաւեր: Յետո՞յ: Յետոյ ի՞նչ...

սահմանի անխտիր բոլոր գօտիներուն մէջ, առաւել կամ նուազ տարողութեամբ, սակայն մի՛շտ մտահոգիչ բնոյթով, մայրենի լեզուն վտանգուած է: Հարցը այն չէ այլեւս, թէ ի՞նչ են պատճառները, որո՞նք են պատասխանատուները, ինչո՞ւ հոս հասանք: Հարցը այն չէ նաեւ, թէ օտարախօս հայը կրնա՞յ հայ մնալ, թէ՞ ոչ, նուա՞զ հայրենասէր է, թէ՞ ոչ...: Հարցը ա՛յն է, որ առանց մայրենի լեզուի ազգ գոյութիւն չունի, առանց հայերէնի հայ գոյութիւն չի կրնար ունենալ: Մէկ կամ երկու սերունդի հարց է: Հայալեզու մօր թոռը կիսահայ դառնալու դատապարտուած է, իսկ ծոռը՝ վստահօրէն իբրեւ յիշատակ միայն կրնայ գիտակցիլ իր հայութեան...: Այս ճակատագիրը փաստաբանութեան չի տոկար:

Երբ արտաճանաչումի հարց կայ՝ ճշմարտութիւնները կէս չեն կրնար ըսուիլ. անպարարութիւնը... դարմանումի հնարաւորութիւն չ'ստեղծեր, ընդհակառակն, մեղապարտ կեցուածք ու վերաբերում կ'ենթադրէ: Երբ վերահաս մայրամուտը կը տեսնենք ու

Հարցը այն չէ այլեւս, թէ ի՞նչ են պատճառները, որո՞նք են պատասխանատուները, ինչո՞ւ հոս հասանք: Հարցը այն չէ նաեւ, թէ օտարախօս հայը կրնա՞յ հայ մնալ, թէ՞ ոչ, նուա՞զ հայրենասէր է, թէ՞ ոչ...: Հարցը ա՛յն է, որ առանց մայրենի լեզուի ազգ գոյութիւն չունի, առանց հայերէնի հայ գոյութիւն չի կրնար ունենալ: Մէկ կամ երկու սերունդի հարց է: Հայալեզու մօր թոռը կիսահայ դառնալու դատապարտուած է, իսկ ծոռը՝ վստահօրէն իբրեւ յիշատակ միայն կրնայ գիտակցիլ իր հայութեան...:

կ'ըսենք, թէ մուժը կամ խաւարը անխուսափելի է, ո՛չ ոք թող պնդէ թէ... տասներկու ժամ ետք վերստին արեւու լուսանք պիտի կարենանք ընել: Ազգերն ու ազգային ստորոգելիները «օրերու» հետ չեն ծնիր եւ յաճախ կ'աճիւնանան, երբ սերնդագործումը իբրեւ բնախօսական երեւոյթ միայն կը շարունակուի:

Ողբաճայն աւաղումները գաղութէ գաղութ լսելի՛ կը դառնան արդէն. «հանրութեան 30, 40, երբեմն 50 կամ 60 առ հարիւրը հայերէն չի խօսիր, հայագիր չէ», թրքերէն կը խօսի, յունարէն, ռումաներէն, պուլկարերէն կը խօսի. արաբերէն, ֆրանսերէն, անգլերէն, սպաներէն կը խօսի...: Հայկական վարժարաններու աշակերտութիւնը կամ ուսանողութիւնը տարուէ-տարի կը նուազի. պիւտճէական անձկութիւններ կը հարկադրեն, որ կարգ մը դպրոցներ փակուին կամ սահմանափակեն ուսուցման իրենց ծրագրերը: Հայ թերթերը նիւթական լուրջ դժուարութիւններու մատնուած են, որովհետեւ ընթերցող հասարակութեան թիւը կը պակսի տարուէ-տարի: Նիւթական տագնապը անհնարին կը դարձնէ ինքնաբաւութեան ամէն ճիգ: Խմբագրական աշխատանքի տրամադիր ուժեր չկան, գրաշարներ չկան, աշխատակիցներ չկան...: Հայ գիրքը «չուկայ» չունի: 100-200 օրինակ... հազուադէպօրէն 500-800 օրինակ: Օտար թերթն ու օտար գիրքը շատ աւելի կը փնտուռին: Հայ մշակութային նախաձեռնութիւնները բաւարար ունկնդիր կամ հանդիսատես չունին, ազգային տօնակատարութեան սրահներ յաճախ պարապութեամբ կը յօրանջեն...

Իմաստուններո՛ւ դաս մը բոլոր այս ընկրկումներուն մէջ հանրային ղեկավարութիւններու, ուսումնական հաստատութիւններու եւ ուսուցիչներու, թերթերու խմբագրութեանց եւ աշխատակիցներու, գիրքերու անբովանդակ որակի եւ... սղութեան, մշակութային միութիւններու թերութեանց եւ առհասարակ գործողներու, ծառայողներու, պայքարողներո՛ւ մէջ կը գտնէ վայրէջքի ու ձախողանքի պատճառները:

Ոչ ոք կ'անգիտանայ անոնց բոլորի՛ն ալ

որոշ տկարութիւնները, սխալները կամ անհաւասար մակարդակը: Սակայն աղէտը կը բխի ո՛չ թէ իրականութենէն, այլ այդ իրականութեան հող պատրաստող եւ այդ իրականութեան աղէտալի համեմատութիւն տուող վերաբերումէն, որ կը կոչուի դասալքութիւն, ձեռնթափութիւն, ինքնագոհութիւն, անտարբերութիւն, չտեսութիւն... մէկ խօսքով՝ քաղքենիացում:

Զխօսեցա՛նք տակաւին օտար ամուսնութիւններու յարաճուն համեմատութեան մասին, հայ ընտանեկան կեանքի աստիճանական քայքայման յանգող հակումներու եւ մտայնութեանց մասին: Զխօսեցա՛նք աժան, հասարակ, յաճախ նաեւ գռեհիկ խրախճանքներու, հաճոյամոլական հաւաքոյթներու, «մշակութային-գեղարուեստական» մէկտեղումներու, «երգարուեստի» ծաղրանկարային ձեռնարկներու մասին...

Ասոնք, այս բոլոր երեւոյթներն ու իրականութիւնները փլուզումի մը չարագուշակ նախանշաններն են: Ո՛չ մեղադրանք կը բանաձեւենք, ո՛չ ալ բամբասանք կը հիւսենք: Ու կը վերադառնանք հարցումին. եթէ հանրային կազմակերպութիւն ունենայինք այդ բացատրութեան լրիւ առումով, կ'ունենայինք նաեւ բարոյական հեղինակութիւն, հաւանօրէն կը տոկայինք ժամանակի եւ պայմաններու հետեւանք տկարութիւններու, մեր ազգային կազմակերպութիւններն ու մշակութային գործօնները ընդունակ կը դարձնէինք աւելի արդիւնաւոր նախաձեռնութիւններու եւ գոյատեւման մեր կռուանները հիմնականօրէն անվտանգ պահած կ'ըլլայինք:

Դարմա՞ն:

Մահաքունի դատապարտուած հիւանդն անգամ դարման յուսալու իրաւունքը ունի, ուր մնաց ժողովուրդ մը, որ մահաքունէ դէպի վերապրում եւ վերականգնում անցած ըլլալու փորձառութիւնը ունի: Եթէ փոխանակ գիրար մերժելու ախտագին տրամադրութեան, զիրար ամբողջացնելու ձգտումը ապրում ու գործ դառնայ, եւ բռնի պատասխանատու առումովը յանձնառու հաւաքականութիւն ըլլանք՝ ո՛վ գիտէ, թերեւս սրբագրութեան ուղի հարթուի:

Զխօսեցա՛նք տակաւին օտար ամուսնութիւններու յարաճուն համեմատութեան մասին, հայ ընտանեկան կեանքի աստիճանական քայքայման յանգող հակումներու եւ մտայնութեանց մասին: Զխօսեցա՛նք աժան, հասարակ, յաճախ նաեւ գռեհիկ խրախճանքներու, հաճոյամոլական հաւաքոյթներու, «մշակութային-գեղարուեստական» մէկտեղումներու, «երգարուեստի» ծաղրանկարային ձեռնարկներու մասին...



Մամուլի սպասարկումն եւ մեր մամուլը

Հ.- Իբրեւ խմբագիր, հայ մամուլի մօտաւոր անցեալին մէջ ի՞նչ երեւոյթները գրաւած են ձեր ուշադրութիւնը: Ի՞նչ դժուարութիւններու դէմ-յանդիման կը գտնուին խմբագրութիւնները: Ինչպէ՞ս կրնա՞ք ներկայացնել հայ մամուլի վիճակը ներկայի մէջ եւ ո՞րքան յուսատու հեռանկարներ կան ապագայի համար:

Պ.- Ձեր հարցումին առաջին մասը («Ի՞նչ երեւոյթներ գրաւած են ձեր ուշադրութիւնը հայ մամուլի մօտաւոր անցեալին մէջ») զիս կրնայ մղել առօրեայ պարբերական մամուլի ժամանակակից պատմութեան առնչուող հիմնական կարգ մը հարցեր արծարծելու, արտայայտուելու մասնաւորաբար 1880 – 1930 եւ 1930 – 1980 յիսնամեայ երկու տարբեր ժամանակաշրջաններու

մէջ յատկապէս օրաթերթերու դիմագծութեան միջեւ գոյութիւն ունեցող տարբերութեանց ու նմանութիւններու մասին: Փո՛րձ մը՝ որ ծաւալումի եւ խորացման դուռ կը բանայ ու ինծի համար թերեւս սիրելի ու միշտ այժմէական, սակայն հարցազրոյցի մը պարտադրած սահմաններէն դուրս կը մնայ: Կը խուսափիմ հետեւաբար, նկատի ունենալով մանաւանդ որ ձեր հարցումի մնացեալ մասը կը պարտադրէ ծանրանալ աւելի՛ խմբագրական-վարչական մտահոգութեանց եւ անձկութիւններու վրայ, քան հայ մամուլի առաքելութեան, նկարագրին ու առանձնապատկութիւններուն աղերսուող ընկերային-պատմական խնդիրներու:

Թողունք ուրեմն ա՛յլապէս հետաքրքրական ու լուրջ «երեւոյթներու» քննարկումը, եւ, աղօտ ու ընդհանուր հաստատումէ մը ետք մօտաւոր անցեալի շրջադարձային բնոյթ ունեցող հրապարակագրային փուլի մասին, կեդրոնանանք ձեր հարցումներէն թելադրուող կէտերու վրայ:

Կը կարծեմ սխալած չըլլալ, «մօտաւոր

անցեալ» բացատրութեան ժամանակային սահմանումը տեղաւորելով 1930 – 1980 թուականներուն միջեւ, երբ Արեւմտահայ ճակատի վրայ Պոլիսն ու Իզմիրը չկան իրենց հին փառքով: Եղեռն, տարտղնում, ապա նաեւ քեմալական իշխանութեամբ ըմբռնելի շնչահեղձութիւն. իսկ տարասփիւռ համրանքի կեանքին մէջ՝ վերապրումի պայքար, գոյատեւման վճռակամութիւն, համայնական վերակազմակերպում: Արեւելահայ ճակատի վրայ չկան Թիֆլիսը եւ հայութեամբ եռուն երբեմնի բոյներու կենսունակութիւնը: Խորհրդային կարգերու հաստատումը մեր մամուլը վերածած է քարոզչական չոր ու ցամաք բեմի, «պարտիական» փողի: Կ՛ուզեմ ըսել, որ հայ մամուլի մօտաւոր անցեալին

Մօտաւոր անցեալին, թերթը տակաւին «դպրոց» մըն էր մեզմէ շատերուն համար եւ այսօր ալ ժողովրդային լայն խաւերու համար համահայկական իրականութեան հետ հաղորդուելու գլխաւոր միջոցն է. բայց սփիւռքեան համայնապատկերը հիմնական փոփոխութիւններու ենթարկուած է, եւ, ինչ որ աղբիւրն է հայ թերթին վերապահուած մերօրեայ անսրբագրելի վիճակներու, հայ օրաթերթը կամ չաբաթաթերթը դադրած է հայ տան ու հայ մարդուն ընկերը ըլլալէ: Պատճառը միայն այն չէ, որ պատկերասփիւռ, ձայնասփիւռ եւ օտար հրատարակութիւններ խեղդած են մեզ. պատճառը մանաւանդ այն է որ մեր ժողովուրդի ճնշիչ մեծամասնութիւնը չ՛ուզեր կարդալ, չ՛ուզեր վճարել գրքին ու թերթին համար, եթէ նոյնիսկ տան մէջ ռատիօ կամ թի-վի չունի եւ օտար որեւէ թերթ ալ չի ստանար...

մէջ պատմականօրէն նշելի «երեւոյթը»՝ շրջադարձային այս փոփոխութիւնն է՝ ե՛ւ արեւմտեան ե՛ւ արեւելեան հատուածներուն համար:

1930-էն մինչեւ 1980, Հայութեան երկու թեւերը՝ Հայաստան եւ Սփիւռք, իրենց աշխարհաքաղաքական, ընկերային, ներագգային ու մշակութային պատկերով եւ այդ իրաւ վիճակներէն թելադրուող նոր պահանջներով ու մղումներով՝ մինչեւ 1930-ի աւանդութիւններուն, հետաքրքրութեանց եւ հակումներուն հետ զուգահեռի բերուելիք շատ քիչ բան ունին, եւ, ինչ որ կ՛ուզեմ ընդգծել ձեր

հարցումին առնչաբար, պատշաճած են շրջապատային, յարաբերական ու կենցաղային մեր նոր պայմաններուն, ամէնօրեայ իրենց հրատարակութիւններու լրագրային-տեղեկատու բնոյթին վրայ կեդրոնացնելով իրենց ուշադրութիւնը: Ձէր կրնար այդպէս չըլլալ:

Անշուշտ, աւանդութիւններէ բոլորովին խզուած չեն հայ թերթերը: Կը պահեն հանրային

դաստիարակութեան իրենց առաքելութիւնը, մշակութային եւ գրական հետաքրքրութիւնները, լեզուական-քաղաքական մեր ճակատագրին առնչուող շահագրգռութեանց եւ ազդակներուն մօտիկ մնալու փոյթը. սակայն, տարուէ տարի, այդ յամառութիւնը տեղի կու տայ ժամանակին ու պայմաններուն առջեւ: Մօտաւոր անցեալին, թերթը տակաւին «դպրոց» մըն էր մեզմէ շատերուն համար եւ այսօր ալ ժողովրդային լայն խաւերու համար համահայկական իրականութեան հետ հաղորդուելու գլխաւոր միջոցն է. բայց սփիւռքեան համայնապատկերը հիմնական փոփոխութիւններու ենթարկուած է, եւ, ինչ որ աղբիւրն է հայ թերթին վերապահուած մերօրեայ անսրբագրելի վիճակներու, հայ օրաթերթը կամ շաբաթաթերթը դադարած է հայ տան ու հայ մարդուն ընկերը ըլլալէ: Պատճառը միայն այն չէ, որ պատկերասփիւռ, ձայնասփիւռ եւ օտար հրատարակութիւններ խեղդած են մեզ. պատճառը մանաւանդ ա՛յն է որ մեր ժողովուրդի ճնշիչ մեծամասնութիւնը չ'ուզեր կարգալ, չ'ուզեր վճարել գրքին ու թերթին համար, եթէ նոյնիսկ տան մէջ ռատիօ կամ թի-վի չունի եւ օտար որեւէ թերթ ալ չի ստանար... Դուք եւ ուրիշներ, կրնաք համակարծիք չըլլալ ինծի: Իմ համոզումս այն է, որ սփիւռքեան հայութեան ջախջախիչ մեծամասնութիւնը գրքով ու թերթով հետաքրքրուած չէ, պահանջ չունին. ու ամէն անգամ որ խօսք անցնի այս մասին, կ'ապաւինի կա՛մ չհաւանութեան եւ քննադատութեան կա՛մ արհամարհանքի: Այժմեան օրաթերթերու, շաբաթաթերթերու, պարբերականներու եւ գիրքերու «գնորդ» զանգուածին համեմատութիւնը 2 կամ 3 առ հարիւրը չ'անցնիր արտասահմանի մէջ, մինչ անկարելի է որ մեր ազգային յաւակնութիւններով ապրող ժողովուրդ մը (Սփիւռքի ամբողջ տարածքին վրայ հայ ընտանիքներու թիւը համարելով 300 000 ու այս թիւին կէսը նկատելով օտարախօս կամ օտարամոլ, անտարբեր կամ ուժացած) 3-5 առ 100 իսկական «ընթերցող» ունենար, այսինքն մեր բոլոր տեսակի հրատարակութիւնները 4500 – 7000 գնորդ ունենային: Իրաւունք կու տամ ձեզի, որ առարկէք այս ակնկալութեանս դէմ ու դիտել, տաք որ յիշատակած թիւերս վիճելի են. սակայն արդար եւ ընդունելի ի՛նչ նկատողութիւններ ալ որ ունենաք՝ իրողութիւն ըլլալէ չի դադրիր փաստը,

Հայ թերթը հայերէնի կը կարօտի, հայագիր խմբագիրներու եւ գրաչարներու պէտք ունի, հայերէնին ընտանի ընթերցողներով կրնայ շնչել, – չենք ուզեր խօսիլ խմբագրական կոչումի, հանրային ճանաչումի, հրապարակագրային վարուցանի մասնայատուկ կարողութեանց ու տակաւին տարբեր տուեալներու մասին:

հայ թերթերու միջին սպառումը, բաղադատաբար տուեալ շրջանի հայութեան թուական պատկերին եւ ընկերային-կենցաղային մակարդակին, 2 առ հարիւրը չ'անցնիր:

«Ի՞նչ դժուարութիւններու դէմ յանդիման կը գտնուին խմբագրութիւնները», – հարց կու տաք ինծի:

Դժուարութիւններէն մէկ քանին յիշատակելէ առաջ՝ հիմնական կը նկատեմ շեշտել, որ հայ թերթը հաւանօրէն հիմնական ոչ մէկ դժուարութիւն ունենար, եթէ միայն ընթերցող հասարակութիւն ունեցած ըլլար: Մեր դժուարութիւնները, գրեթէ բոլորն ալ, հետեւանք են տնտեսական անարիւնութեան: Մօտաւոր թէ հեռւոր անցեալին ալ նիւթական կարողականութենէ զուրկ ենք եղած միշտ, սակայն դէպի ողբերգութիւն չէ զարգացած այդ անձկութիւնը: Հազարաւոր թերթեր կէս ճամբան մնացած են, հազարաւոր հրապարակագիրներ եւ խմբագիրներ իրենց պատառը թշուառութեան մէջ թաթխած են, սակայն հայ մամուլը ապրա՛ծ է, որովհետեւ զայն ապրեցնող մարդու շրջան ունեցած ենք միշտ: 1950 – 1960-ական թուականներէն սադիւն պատկերը կը փոխուի աստիճանաբար, որովհետեւ գաղութային իրականութիւնը, ընկերային միջավայրը, կենցաղային բարքերը, տնտեսական պահանջներու անհամեմատ ծանրաբեռնումը, մանաւանդ օտարացումը, օտարամոլութիւնը, քաղքենիացումը եւ նոր սերունդներու կարեւոր մէկ համեմատութեան աննախընթաց հնարաւորութիւնները մասնագիտանալու եւ կլանուելու իրենց անմիջական շրջապատին մէջ՝ մեզ աղքատացուցած են նա՛եւ մարդու թի տեսակէտով: Արժէքներ չունի՞նք, ուժեր եւ տաղանդներ չունի՞նք, գործելու տրամադիր եւ ընդուն-

ակ թեկնածուներ չկա՞ն, որպէսզի գրաչար, խմբագիր, հրապարակագիր ու աշխատակիցներ ալ ունենանք: Ունի՛նք անշուշտ: Սակայն քիչ անդին արագօրէն յիշատակուած պատճառներու եւ ազդակներու հետեւանքով՝ անոնք մեզի հետ չեն: Հայ թերթը հայերէնի կը կարօ-

տի, հայագիր խմբագիրներու եւ գրաշարներու պէտք ունի, հայերէնին ընտանի ընթերցողներով կրնայ շնչել,– չենք ուզեր խօսիլ խմբագրական կոչումի, հանրային ճանաչումի, հրապարակագրային վարուցանի մասնայատուկ կարողութեանց ու տակաւին տարբեր տուեալներու մասին: Հայ թերթը տպարանային սարքաւորումի համար արտակարգ գումարներու կը կարօտի: Կը կարօտի, հետեւաբար, ո՛չ միայն մարդուժի, այլե՛ւ մեքենականութեան: Աշխատանքային պայմաններու հիմնական փոփոխութիւն կայ ե՛ւ խմբագրական, ե՛ւ վարչական մարզերու մէջ: Սակայն տնտեսական անարիւնութիւնը հետզհետէ կ'անդամալուծէ բոլորն ալ: Ո՞վ կ'ուզէ խմբագրական աթոռներու վրայ մաշիլ այսօր, եւ ո՞վ կրնայ իրաւունք զգալ մեղադրելու մեր նոր ուժերը, երբ անոնք, մոռալ հեռանկարներու առջեւ կռնակ կու տան հայ խմբագրատան:

Կ'անդրադառնաք թերեւս, որ տակաւին ոչինչ ըսի առտնին դժուարութիւններու մասին: Այսինքն չխօսեցայ խմբագրական յարկերու ներքին ճակատին վրայ մտքի ու գրչի մարդը ընկճող բարոյական ազդեակներու մասին: Նկատի ունեցե՛ք որ մեր 14 կամ 15 օրաթերթերէն եօթն կամ ութն կազմակերպական պաշտօնաթերթեր են, առեւտրականամիտ հաստատութիւններ չեն,– եթէ նոյնիսկ ուզեն ըլլալ՝ չեն յաջողիր, իսկ եթէ վճռեն ամէն գնով յաջողիլ՝ հարկադրանքի տակ են համակերպելու նախաձեռնութեանց, որոնք չեն հաշտուիր իրենց սկզբունքներուն հետ: Հայ մամուլը բարոյական հաստատութիւն է՝ գոնէ՛ հայութեան ծառայելու առաջադրանքով գործի դաշտ իջած մարդոց եւ կազմակերպութիւններու համար եւ միջոցներու մէջ խտիր չգնելու ամէն հակում՝ անհամատեղելի է իր այդ կոչումին հետ: Կը մնայ ականալել որ այսպէս կոչուած «ընթեր-

ցող հասարակութիւնը» թեւ ու թիկունք դառնայ իրեն... առանց հրաւերի, առանց մասնաւոր կոչերու, առանց բարոյական նուաստութեանց հող պատրաստելու: Անձնական նախաձեռնութեամբ թէ կազմակերպական որոշումով մամուլի ասպարէզին սպասարկող մեր թերթերու խմբագրական թէ վարչական պատասխանատուները մեր օրերուն աննախընթաց տագնապ մը կ'ապրին տնտեսական թէ բարոյական առումով՝ ի տես գործնական կարելիութիւններու անձկութեան եւ բարոյական վերաբերումներու խեղդուկ, ճնշիչ, անդամալուծող անդրադարձումներուն...

Եթէ հարց տրուէր ինծի թէ ո՞վ է, ովքե՞ր են մեր ժամանակներու հերոսները՝ անվարան մատնանիչ պիտի ընէի հայ խմբագիրները, հայ հրապարակագիրները, հայ թերթի պատասխանատու վարիչները, հայ գրաշարները:

«Հեռանկա՞ր»:

Չեմ ուզեր ըսել աւելին, այլ միայն հաստատել որ հայ մամուլը իր վերջին, 10-15 տարիներու փուլով լաւատեսութիւն չի ներշնչեր ինծի, եւ սխալ է արժէքներու, կարողութեանց, ուժերու, նուիրումի եւ տակաւին այլ արժանիքներու չգոյութեան վերաբերել աստիճանական աւազախրումը: Ուժերը կա՛ն, սակայն այդ մարդուժը բացակայ է մամուլ դաշտէն, որովհետեւ տարբեր բան է գրկանքով ապրիլ ու բոլորովին տարբեր՝ նուաստութեան մատնուիլ: Եթէ հրաշք մը չպատահի եւ տարասփիւռ համբանքի կրթական-դաստիարակչական, աշխարհաքաղաքական, ընկերային, ներազգային ու տնտեսական կեանքին մէջ հիմնական շրջումներ տեղի չունենան մատուցման եւ պահանջի տեսակէտով՝ հայ մամուլը ամբողջական որբացումի ճակատագրին թեկնածու է:

Մեր գիրն ու գրականութիւնը՝ խորհրդային կարգերու տակ

Հ.– Ի՞նչ մասնաւորութեամբ կը բնորոշէի Հայաստանի 1950 – 1980 երեսնամեակը՝ բաղդատմամբ մինչեւ 1950-ական թուականներու մշակութային կեանքին:

Պ.– Թուականային ձեւ սահմանաւորումը կ'ընդգրկէ այսպէս կոչուած «անձի պաշտամունքի» շրջանին, այսինքն՝ սթալինեան երեսնամեայ բռնատիրութեան յաջորդող վերջին երեսուն տարիներու ժամանակային տեւողութիւնը: 1953-էն ասդին խորհրդային իրականութիւնը անկասկած այն է, ինչ որ 1924-էն մինչեւ 1953 էր՝ մարդկային իրաւունքներու

եւ տարրական ազատութեանց վրայ ի գործ դրուած դաժանութեանց եւ աններողութեան տեսակէտով:

Թիւրիմացութիւններու տեղի չտալու համար ճշգրեմ, որ խորհրդային կուսակցատիրական կարգուսարքին մէջ ո՛չ մէկ փոփոխութիւն կայ: Եթէ այսօրուան իշխանաւորները սթալինեան երեսնամեակը «անձի պաշտամունքի շրջան» կ'որակեն, նման բնորոշումի մը պատճառը այն է, որ խորհրդային համայնավարութեան համար ԱՆՁԵՐՆ ԵՆ ՄԻԱՅՆ ԽՈՅԵԼԻ, ՄԵՂԱՆՁԱԿԱՆ ԵՒ ԴԱՏԱՊԱՐՏԵԼԻ, եւ եթէ սթալինեան

երեսնամեակի ընթացքին անյուր հայաժանքի, չարչարանքներու, նաեւ հաւաքական աքսորի կամ սպանութեանց դրուագ մը հիւսուեցաւ սովեթ «ընկերվարական» աշխարհի պատմութեան մէջ, կոմունիստ կուսակցատիրութիւնը կամ Քրեմլի աւագանին որեւէ դեր ունեցած չեն այդ եղբրապատումին մէջ: Սահմանափակուելով Հայաստանի ծիրին մէջ, պէտք է ուրեմն հաւատանք, թէ 1936 – 1937-ին եւ 1948 – 1949-ին հարիւրաւոր մտաւորականներու, գիտնականներու եւ հանրային գործիչներու «հաշուեյարդարը» կարգուսարքէն կամ Համայնավար կուսակցութեան կողմէ պարտադիր հռչակուած կենցաղային, գաղափարական եւ ստեղծագործական կարգախօսներէ բխող բարքերու, վերաբերումներու կամ պետական-օրինական ըմբռնումներու հետեւանք չէր, այլ միայն ու բացառապէս Սթալինի անձէն թելադրուած չարիք ու աղէտ: Բայց թէ ո՞վ բերաւ Սթալինը բացարձակատիրական իշխանութեան մը աթոռին, ինչո՞ւ «անձի պաշտամունքը» անօրինակ աճումով մը արիւնխտում դաժանութեան հասաւ անոր մէջ եւ ինչպէ՞ս կարելի չեղաւ խափանել ոճիրը, այդ մասին ո՛չ մէկ խօսք...

Անոնք, որ չեն գիտեր կամ առիթ չեն ունեցած գիտնալու, թէ Խրուշչովի եւ Զարոբեանի օրերուն Կոմկուսը ի՞նչ պարսաւագրեր, ի՞նչ ահաւոր դատապարտագրեր բանաձեւած է Սթալինի եւ անոր անմիջական խորհրդականներու կամ գործակիցներու հասցէին, իր համագումարներուն անունով ի՞նչ մանրամասնութիւններ տուած է շրջանի համամիութենական ժողովներուն ու մարմիններուն մէջ գործող դէմքերու դաւակցութեան մասին, բնականաբար նոյնութեամբ կ'իւրացնեն ներկայ իշխանաւորներու այն սրտառո՛ւչ վկայութիւնը, թէ... եղածը «արկած» մըն էր, շեղո՛ւմ մըն էր Բոլշեւիզմի մարդկայնական, ազնիւ, բա՛րձր սկզբունքներէն. Սթալիններու, Բերիաներու եւ Կիրպոտիններու անձնական մե՛ղքը:

Այսօրուան համեմատական հանդուրժողութիւնը տեսնող ուրախ մարդուն համար պէտք է յստակ ըլլայ, թէ հիմնական ոչ մէկ փոփոխութիւն կայ խորհրդային համայնավարութեան ընկերային-գաղափարական վարքագծին մէջ եւ թէ, հետեւաբար, վերջին քսան տարիներու մշակութային (մասնաւորաբար գրական-ստեղծագործական) համեմատական ազատութիւնները, պէտք է ըսել թերեւս թեւումները, թուիչքները, անխափան պիտի շարունակուին: Սթալին չկայ հիմա, սակայն «սթալինականութիւնը» ոչ միայն չբացած է, այլեւ վաղը կրնայ արթննալ վերստին: Խորհր-

դային Միութիւնը պատճառներ ունի անշուշտ դէպի արիւնտ անհանդուրժողութիւն որեւէ վերադարձ չընելու, ներկայիս հաստատելի «բարելաւումը» կը պարտինք արտաքին եւ յարաբերական ստիպողութիւններու, եւ կրնայ ըլլալ, որ այդ նոյն ազգակները պահեն իրենց պարտադիր ուժը նա՛եւ վաղուան համար:

Կ'ուզեմ ակնարկել մարդկային իրաւունքներու պաշտպանութեան ի խնդիր ստեղծուած միջազգային շարժումին: Խորհրդային կուսակցատիրութիւնը բարոյական ճնշումին տակ է համաշխարհային հանրային կարծիքին եւ ի՛ր իսկ երկրին մէջ գիտական եւ մտաւորական շրջանակներու հալածանքի ու բռնամիջոցներու դէմ հակազդեցութեան: Որքան ալ հետեւողական մնան գաղափարական եւ ընկերային-տնտեսական իրենց հիմնական սկզբունքներուն, ներկայ դեկավարները կը ջանան ետդարձ չընել նախախրուշչովեան շրջանի դաժան անհանդուրժողութեան:

Հայաստանի մէջ եւս ակներեւ է մթնոլորտի ընդհանուր փոփոխութիւն մը: Գաղտնիք չէ, որ Աղասի Խանջեանի օրերուն իրերամերժ խմբակցութիւններ կային հանրային-կուսակցական եւ գրական-մտաւորական դասերուն մէջ, ու կարգ մը փոխադարձ վերապահութիւններ կը շարունակուին մինչեւ այսօր. անխուսափելի չարիքը՝ տիրող կարգերուն եւ բարքերուն: Հո՛ւն, ուր բացարձակ բռնատիրութիւն կայ ու մարդիկ կը մեծնա՛ն կամ կը փոքրանան համաձայն օրուան իշխանաւորներուն հանդէպ «հաւատարմական» (ստրկամիտ) վերաբերումին, փոխադարձ սէրերն ու ատելութիւնները, կասկածամտութիւններն ու քսութիւնները ընթացիկ երեւոյթ են:

Բաղդատամբ մինչեւ 1950-ական թուականներու կացութեան, վերջին քսանամեակը, սակայն, ի յայտ կը բերէ անհամեմատօրէն մխիթարական, չըսելու համար հրճուառիթ ներդաշնակութիւն մը:

Կ'ուզեմ կեդրոնանալ ձեր հարցումի «մասնաւորութիւն» բառով բնորոշելի երեւոյթին վրայ, որ, իմ կարծիքով, հայրենի մտաւորականութեան թեւումն է դէպի քննադատական ազատութիւն ու ստեղծագործական արգելարչաւային սլացք:

– Ի՞նչ ըսել կ'ուզե՞ք արգելարչաւային բառով:

– Հայրենի գրողը իր առջեւ ցցուած կը գտնէ բազմաթիւ արուեստական արգելքներ, որոնք կը բխին, ընդհանրապէս, տիրող կարգերէն: Իրեն կը մնայ, իր սլացքին մէջ, յաղթահարել այդ արգելքները, առանց զանոնք «տապա-

լիլու», եւ ատկէ ալ՝ իր արուեստի գործին որեւէ վնաս հասցնելու:

Այստեղ, այս ընդհանուր ընդգծումին մէջ, պարզաբանումի կարօտ երկու կէտեր կան՝ «քննադատական ազատութիւն» եւ «ստեղծագործական արգելարչաւային սլացք», որոնցմէ կը մեկնիմ Հայաստանի մշակութային կեանքի 1950 – 1980 երեսնամեակին հաստատելի անօրինակ ծաղկումն ու ստեղծագործական բարձրորակ վաստակի իրագործումը գուգահեռի բերելու համար 1932 – 1936 տարիներու նոյնատարր, բայց մասնակի ոգեկան զարթօնքին հետ:

Թերեւս աւելորդ է յիշեցնել, թէ խորհրդային կարգերու տակ, ինչպէս կեանքի, աշխատանքի եւ արդիւնաբերութեան բոլոր մարզերը, նաե՛ւ արուեստ եւ գրականութիւն, մշակոյթով ըմբռնելի բոլոր գործունէութիւնները ենթակայ են «մարքս-լենինեան ուսմունքին» եւ «կոմունիզմի կառուցման» հիմնական նպատակին: Մտքի մարդուն, արուեստագէտին, գրագէտին ու մտաւորականին ազատութիւնը, որուն կը դաւանինք մենք, խորհրդային ծիրէ դուրս ապրող բոլոր մարդոց հետ, ոչ միայն մերժելի իմացում է, այլեւ դատապարտելի յաւակնութիւն, բուրժուական հասկացողութիւն: Այսպէս էր 1921 – 1937, այդպէ՛ս մնաց նաեւ 1937 – 1952 եւ այդպէս է նաեւ այսօ՛ր: Հիմնականօրէն ոչինչ փոխուած է ի զօրու կարգախօսերու մէջ ու գրականութիւն եւ արուեստ դեկավարեալ գործունէութիւններ կը մնան սովետական իրաւակարգի տակ:

Բակունց, Չարենց, Մահարի, Թոթովենց, Մկրտիչ Արմէն նուազ համասեռ խառնուածքով ու մտածողութեամբ, ազգայինը միջազգայնականին եւ մարդկայնականը ցեղայինին ներդաշնակող «թեմայական» վարպետութեամբ օժտուած արձակագիրներ ու քերթողներ չէին, որքան եղան, շատ աւելի բարձրաձայն ու շատ աւելի մերկապարանոց ձեւով, Սերօ Խանգաղեանները, Համօ Սահեանները, Խաչիկ Դաշտենցները, Հրանտ Մաթեոսեանները ու մինչեւ Գէորգ Էմին, Հրաչեայ Յովհաննիսեան, Սարգիս Խարազեան, Արամայիս Սահակեան հասնող երէց, միջին, նոր ու նորագոյն սերունդներու խօսնակները:

Ինչպէս անցողակի ակնարկեցինք, միայն 1932 – 1936 տարիներուն հայրենի արձակագիրներէ եւ քերթողներէ յայտնի քանի մը անուններ, պարտադիր գրական առաջադրանքներէ, այսինքն՝ Խորհրդային համայնավար կուսակցութեան համագումարներէն բխող

որոշումներէ զգալի շեղումով մը, իրենց արձակին ու բանաստեղծութեան առանցք դարձուցին շեշտօրէն անհատական ու մանաւանդ նախասովետական հայ կեանքի ազգային-ոգեկան իմացումներէն թելադրուած ապրումներ, վերապրումներ, դէմքեր ու դէպքեր, որոնց հետեւանքով ալ հետագային պատասխանատուութեան կոչուեցան ու քաւեցին իրենց «մեղքը» անլուր հալածանքներով...:

Աւելորդ կը նկատեմ մանրամասնութիւններու մէջ մտնել՝ անուններ, գործեր, թուականներ ու ողբերգական դրուագներ յիշատակելու համար: Եթէ ըսի այսքանը, ուղեցի պարզապէս դիտել տալ, թէ նոր երեւոյթ է մերօրեայ ստեղծագործական վաստակին մէջ տեսնել արուեստագէտին կամ գրողին անքակտելի եղբայրութիւնը իր ժողովուրդի անժամանցելի, խորարմատ, արիւն ու մորթ դարձած ազգային, պատմական, ոգեկան ու նկարագրային հակումներուն հետ՝ իբրեւ իր գործին էատարր, մեկնակէտ ու սեւեռելի հեռանկար:

Խորհրդային կարգերու յաճախ ճնշիչ սահմանափակումներուն եւ մշակութային եւ գրական-ստեղծագործական ի զօրու կարգախօսերուն հակառակ՝ Հայաստանի մտքի, գրչի, արուեստի ու գրականութեան մարդը առաջին օրէն իսկ ցեղին ձայնով ձեւակերպեց իր գործը, մնաց անխառնօրէն հայ ու անշեղօրէն մտաւորական, չդաւաճանեց իր ինքնութեան ու տուլա «կայսեր բաժինը՝ կայսեր եւ Աստուծոյ բաժինը՝ Աստուծոյ»: Բակունց, Չարենց, Մահարի, Թոթովենց, Մկրտիչ Արմէն

նուազ համասեռ խառնուածքով ու մտածողութեամբ, ազգայինը միջազգայնականին եւ մարդկայնականը ցեղայինին ներդաշնակող «թեմայական» վարպետութեամբ օժտուած արձակագիրներ ու քերթողներ չէին, որքան եղան, շատ աւելի բարձրաձայն ու շատ աւելի մերկապարանոց ձեւով, Սերօ Խանգաղեանները, Համօ Սահեանները, Խաչիկ Դաշտենցները, Հրանտ Մաթեոսեանները ու մինչեւ Գէորգ Էմին, Հրաչեայ Յովհաննիսեան, Սարգիս Խարազեան, Արամայիս Սահակեան հասնող երէց, միջին, նոր ու նորագոյն սերունդներու խօսնակները, որոնց գործերու բնորոշ գիծերուն պիտի անդ-

րադառնամ քիչ ետք:

«Նախ քաղաքացի, ապա բանաստեղծ» տարազին կը հաւատար Բոլշեւիզմը: Ու պէտք է ընդգծել՝ 1920 – 1950 մեր քերթողներն ու արձակագիրները լեռնակուտակ վաստակ դիզած են իրենց «քաղաքացիական» հաւատարմութիւնը հաստատելու համար՝ տուած են «յարդին» բաժինը, զոր քամին պիտի տանի. սակայն տուած են նա՛եւ «ցորենը»՝ որա՛կը, որ բաժինն է տաղանդին, արեան, ոգիին, ստեղծագործական ազատութեան: Տարբեր խօսքով՝ յաջողած են խիզախել այն բոլոր պատնէշներուն, արգելակներուն եւ խոչընդոտներուն դէմ, զորս օրուան կարգերն ու պարտադիր կարգախօսները ցցած էին իրենց առջեւ: Ա՛յս իմաստով էր, որ քիչ առաջ կը հաստատէի, թէ 1950 – 1980 երեսնամեակի սերունդը շատ աւելի ծաւալուն եւ ԱՆՀԱՄԵՄԱՏ ԹԱՓՈՎ ՇԱՐՈՒՆԱԿԵՑ «ԹԵՒԵԼ» ԴԵՊՒ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՆԿԱԽՈՒԹԻՒՆ ՈՒ «ԱՐԳԵԼԱՐՇԱԻԱՅԻՆ ՍԼԱՅՔՈՎ ՄԸ» ՏՈՒԱԻ ԽՈՐՀՐԴԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՄԷՆԷՆ ԲԱՐՁՐՈՐԱԿ ՀՈՒՆՁՔԸ:

Վերջին երեսուն տարիներուն հաստատելի «մասնաւորութիւնը» կը կայանայ «թեմայական» այն ակներեւ «վարքագիծին» մէջ, զոր իբրեւ «ազգային եւ համամարդկային երանգների միահիւստում» ներկայացուցած էր Հայաստանի գրողներու միութեան վարչութեան առաջին քարտուղար Վարդգէս Պետրոսեան, գրողներու ութերորդ համագումարին ներկայացուած իր ընդարձակ գեկուցագրով, երբ կ'արտայայտուէր խորհրդահայ մերօրեայ քերթողութեան զարգացման ընթացքին ու Գէորգ էմինի բանաստեղծական վաստակին մասին (1981 մայիսին):

Յատկանշական է, որ Պետրոսեանի այդ գեկուցագիրը «Գրական թերթ»-ի 8 մայիս 1981 թիւին մէջ, կը կրէր «Արտայայտել մեր ժամանակը՝ իր ողջ վեհութեամբ եւ դրամատիզմով» խորագիրը: Պէտք է ուշադրութեամբ կարդալ շաբաթաթերթի մեծադիր լրիւ երեք էջերը գրաւոր մանրագիր այդ վաւերաթուղթը՝ ըստածէն անդին տեսնելու պատասխանատուութեան զգացումով մը: Արդի արձակն ու քերթողութիւնը, ինչպէս գրական միւս սեռերը, յատկապէս թատերգութիւնը, մեկնելով հանդերձ «համամարդկայինէն», փաստօրէն հուն կը բանան «ազգայինին», կը միտին հայ գիւղացիի, աշխատաւորի, հին ու նոր գինակիրներու, կռուի հերոսի թէ մարդկային ազատագրումի համար պայքարի դաշտ իջած հայկական տիպարներու մէջ ողջունելու մեր առհաւակն իմաստասիրութիւնը՝ ամբողջական ինքնուրացման, անսակարկ ընծայումի, ազգային արժանապատուութեան եւ ամէն կարգի ճնշումի ու բռնութեան դէմ ըմբոստացումի, որքան մարդկային, նո՛յնքան ինքնայատուկ մղումը հայ նախատիպին: 1930-ական թուականներուն ալ, ու մի՛շտ, այս գիծը ներկայ է եղած հայրենական վաստակին մէջ, սա տարբերութեամբ, որ յիսուն տարի առաջ հետեւողական, սուր, յաճախ նաեւ «հարթիչ» աններողութեամբ հալածանքի առարկայ էր այդ մղումը: Այսօր, ժամանակի եւ պայմաններու փոփոխութեամբ, խորհրդահայ գրականութիւնը կը թօթափէ արուեստական, թանձրօրէն քարոզչական իր բնոյթը ու կը ձգտի ըլլալ հա՛յ գրականութիւն:

Այս տեսակէտով ուշագրաւ էր դա՛րձեալ Վարդգէս Պետրոսեանի մէկ նշումը՝ Երեւանի «Գրական թերթ»-ի յիսուներորդ տարեդարձին

1982 մայիս 14-ին, Հայաստանի գրողներու միութեան նախագահը, բացումը կատարելով Գրողներու տան սրահին մէջ տեղի ունեցած յօբելենական հանդիսութեան եւ ներածական իր խօսքին մէջ յիշատակել էտք «Գրական թերթ»-ի առաջին թիւին հրատարակութեան թուականը՝ 23 փետրուար 1932, հայրենիքի խորհրդայնացումէն տասներկու տարի ետք գրական ու մշակութային ճակատի վրայ պարզուող պատկերը կը ներկայացնէր հետեւեալ պարբերութեամբ. «Մենք ժառանգութիւն էինք ստացել հերոսական ու դրամատիկ մի պատմութիւն, որն իմաստաւորուած էր մեր ժողովրդի լաւագոյն որդիների անձնուէր, անանձնական մաքառումով՝ յանուն մեր ժողովրդի ինքնութեան, նրա լեզուի ու մշակոյթի: Ամայութեան մէջ չէր որ խմորուում էր սովետահայ գրականութիւնը: ՆԱ ԾՆՈՒԵՑ ԻԲՐԵՒ ՕՐԻՆԱԿԱՆ ԺԱՌԱՆԳ ՄԵՐ ԲԱԶՄԱԴԱՐԵԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ, որն առաջին անգամ երջանիկ հնարաւորութիւն էր ստացել ծաղկել ու պտուղներ տալ՝ պետականութեան պայմաններում, հայրենի հողի վրայ»:

առիթով գրի առնուած ուղերձի մը մէջ:

1982 մայիս 14-ին, Հայաստանի գրողներու միութեան նախագահը, բացումը կատարելով Գրողներու տան սրահին մէջ տեղի ունեցած յօբելեանական հանդիսութեան եւ ներածական իր խօսքին մէջ յիշատակելէ ետք «Գրական թերթ»-ի առաջին թիւին հրատարակութեան թուականը՝ 23 փետրուար 1932, հայրենիքի խորհրդայնացումէն տասներկու տարի ետք գրական ու մշակութային ճակատի վրայ պարզուող պատկերը կը ներկայացնէր հետեւեալ պարբերութեամբ. «Մենք ժառանգութիւն էինք ստացել հերոսական ու զբամատիկ մի պատմութիւն, որն իմաստաւորուած էր մեր ժողովրդի լաւագոյն որդիների անձնուէր, անանձնական մաքառումով՝ յանուն մեր ժողովրդի ինքնութեան, նրա լեզուի ու մշակոյթի: Ամայութեան մէջ չէր որ խմորուում էր սովետահայ գրականութիւնը: ՆԱ ԾՆՈՒԵՅ ԻԲՐԵՒ ՕՐԻՆԱԿԱՆ ԺԱՌԱՆԳ ՄԵՐ ԲԱԶՄԱԴԱՐԵԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ, որն առաջին անգամ երջանիկ հնարաւորութիւն էր ստացել ծաղկել ու պտուղներ տալ՝ պետականութեան պայմաններում, հայրենի հողի վրայ» (ՏԵՍ «Գրական թերթ», 21 մայիս 1982, Ա. էջ, Ա. սիւնակ):

Այս ողջմտութիւնը... անհամատեղելի էր սթալինեան բռնատիրութեան երեսնամեայ շրջանին՝ 1924 – 1953, երբ խորհրդահայ գրապատմական հասկացողութեամբ՝ հայոց «բազմադարեան գրականութիւնը» գուգորդել 1920 – 1950-ական տասնամեակներու «սովետահայ գրականութեան»՝ աններելի սայթաքում ու «հակայեղափոխական» տրամադրութիւն կ'ենթադրէր...

Մերօրեայ հայրենական գրականութիւնը եւ առհասարակ մշակութային հոլովոյթը կը յատկանշուին ակնբախ անկիւնադարձով մը՝ թանձր «պարտիականութիւնէ» դէպի մարդկային ու մարդկայնականը, գրագէտին ազատագրումը քարացած ու մոլեռանդական այլամերժութենէ, որոնումը Հայուն իսկատիպ եւ հարազատ էութեան: Այս փոփոխութիւնը տեսնելու եւ անոր տարողութիւնը անսխալ ճշդելու հնարաւորութիւնը ունին յատկապէս անո՛նք, որ խորհրդահայ գրական-մշակութային կեանքի 1920 – 1950-ական երեսնամեակի հոլովոյթներուն լաւատեղեակ են եւ կրնան պատմական կարգ մը փաստերու լոյսին տակ հաստատել յետսթալինեան տասնամեակներու աստիճանական դարձը դէպի գրականութեան, արուեստի ու մշակոյթի անխաթար հասկացողութիւն:

Այս առթիւ կը յիշատակեմ յատկանշա-

կան մէկ դէպք միայն՝ 1948 թուականէն, երբ շրջանի համայնավար դատախազներէն Արամայի Կարապետեան, Մոսկուայի գրական «Լիտերատուրնայա կազետա» թերթի 31 յուլիս 1948-ի թիւին մէջ հրատարակուած գրաքննադատական ընդարձակ տեսութեամբ մը, անդրադառնալով Հայաստանի գրողներուն ու պատմագիտական, բանասիրական եւ իմաստասիրական աշխատասիրութեանց հեղինակներու «ազգայնական վնասակար ձգտումներուն», նաե՛ւ կը դատապարտէր անոնց հակումները դէպի անցեալ՝ նախասովետական շրջան, եւ յականէ-յանուանէ յիշատակելով այդ օրերու վարչապետ Սահակ Կարապետեանի, Յովհ. Շիրազի, Սողոմոն Տարօնցիի, Խաչիկ Դաշտենցիի, Մ. [Մկրտիչ] Ներսիսեանի, Մանուկ Աբեղեանի, Դերենիկ Դեմիրճեանի եւ շարք մը այլ բանաստեղծներու, արձակագիրներու եւ պատմագիրներու գործերուն մէջ իր կարծիքով «հակամարքսիստ, ազգային-ազատական, բուրժուա-կայուածատիրական, յետադիմական, կղերամոլական եւ հակայեղափոխական» տրամադրութիւններ, կը կեղբոնանար [Ռուբէն] Զարեանի եւ [Մկրտիչ] Մկրեանի հեղինակութեամբ հրատարակուած եռահատոր դասագրքի մը շեղումներուն վրայ՝ նկատել տալու համար, որ աններելի վերաբերում ցոյց տրուած է «ամբողջ հայ գրականութեան ընթացքը ներկայացնելով որպէս մէկ միութիւն, ՈՐՊԷՍ ՄԻԵՒՆՈՅՆ ԱՄԲՈՂՁՈՒԹԵԱՆ ԱՍՏԻՃԱՆԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ»:

Արամայի Կարապետեան զայրացած էր նաեւ, որ Շիրազ Հայաստանի լեռները նմանցուցած է «Տիգրան Մեծի յաւիտենական վրաններուն», Սողոմոն Տարօնցի իր «Կրակի ճամբաներով» հատորին մէջ փառաբանած է Տիգրան Բ.՝ իբրեւ «իր ժողովրդի ոգին անայլայլ պահող բանաստեղծ», Խաչիկ Դաշտենց եւ Դերենիկ Դեմիրճեան ազգային եւ կրօնական զգացումներով տարուած են իրենց գործերուն մէջ, «իտէլականացուցած են ճորտատիրական կարգերն ու եկեղեցին»:

Լեռնակուտակ փաստ գոյութիւն ունի խորհրդային եւ խորհրդահայ մամուլի մէջ՝ հաստատելու համար, որ սթալինեան իշխանութեան տարիներուն ոճիր կը նկատուէր հայութեան նախասովետական անցեալին ու սովետական ներկային մէջ գրականութեան, մշակոյթի ու պատմութեան միութիւն մը տեսնել, զարգացման շարունակականութիւն մը գտնել...

Այսօ՞ր...

Հարկ չկայ անուններ ու գործեր յիշատակելու՝ նկատել տալու համար հիմնական այն

փոփոխութիւնը, որ կայ 1955 – 1980 թուականներուն հրատարակուած գործերու մէջ: Նոյն Դաշտենցին կը պարտինք «Ռանչպարների կանչը»: Խորհրդային նոյն կարգերուն տակ է, որ Սերօ Խանգաղեանները, Մուշեղ Գալչոյեանները, Հրանտ Մաթեոսեանները, Գէորգ Էմինները, Պերճ Զէյթունցեաններն ու միւսները դէպի «արմատ» կ'իջնեն, կը պեղեն հայ ժողովուրդի հոգին, պատմութիւնը, տոհմական ինքնայատուկ իմացումները, մարդկայնական ձգտումները եւ կը դիմեն դէպի ակունքը

անհատական ապրումներու թէ ազգային տեսիլքներու:

Մինչեւ 1950-ական տարիներու խորհրդահայ գրական վաստակին մէջ տաշեղն ու թեփը աւելի ծանր կը կշռեն, քան արուեստի եւ ստեղծագործական տաղանդի անկաշկանդ ճառագայթումը: 1953-էն սուրին գրեթէ հիմնովին շրջուած է պատկերը. մեր գրականութիւնն ու մշակոյթը վկայութիւնն են մեր ժողովուրդի կենսունակութեան ու անմեռ ոգիին:

Լեզու եւ ուղղագրութիւն...

Հ.- Ի՞նչ պիտի ուզէիք ըսել արեւմտահայ եւ արեւելահայ «լեզուներու» մասին: Հնարաւոր կը գտնէ՞ք լեզուական միութիւն մը եւ ուղղագրական միակերպութիւն մը: Կարելի՞ է ակնկալել որ հայրենիքի մէջ ներկայիս ի զօրու «ուղղագրութիւնը» փոխուի՝ ի նպաստ մետրոպեան ուղղագրութեան վերահաստատումին:

Պ.- Նախ պատասխանեմ ձեր հարցումի մասնաւորուած բաժնին՝ միութեան, միակերպութեան, ուղղագրութեան առնչուող կէտերուն. մնացեալը, այսինքն՝ ընդհանրացումը, կու գայ հաւանօրէն ինքնաբերաբար:

Ձեր առաջին հետաքրքրութիւնը՝ «լեզուական միութեան» հնարաւորութեան խնդիրը, կու գայ շատ հինէն, 1890 – 1900-ական թուականներէն եւ հրապարակային իր առաջին արծարծումը կը գտնէ 1909 – 1911 տարիներուն, Պոլսոյ «Ազդակ»-ին, ապա մասնաւոր «Ազատամարտ»-ի շուրջ բոլորուած հայ մտաւորականութեան կողմէ: Լեզուական հոլովոյթին առնչուող այս դրուագին անդրադարձած եմ լայնօրէն «Հայրենիք»-ի մէջ շաբթէ-շաբաթ հրատարակուած իմ մէկ աշխատասիրութեանս մէջ, որ հաւանօրէն վրիպած չըլլայ ձեր ուշադրութեանէն:

«Ազատամարտ»-ի խմբագրութեան կողմէ շրջանի հայ մտաւորականներուն ուղղուած

հարցումներէն մէկը ա՛յս էր՝ «Կարելի՞ է ձուլում մը՝ արեւելահայերէնի եւ արեւմտահայերէնի»:

Հիմա կը խոսափիմ մէկուն ու միւսին թեր, դէմ կամ... ճկուն արտայայտութեան մասին խօսելէ, սակայն եթէ կը յիշատակեմ պատմական փաստը, կ'ուզեմ շեշտել պարզապէս, որ նոր կնճիռ մը չէ ասիկա հայ մարդուն, մասնաւոր մտքի ու գրչի մարդոց մտածման մէջ: Հասկնալի է ո՛չ միայն աշխարհագրական ցրուածութեան իրավիճակի լոյսին տակ, հոգեբանօրէն եւ ազգային, մշակութային ու լեզուա-

կան ըմբռնումներու մեկնակէտով, այլեւ մասնաւոր անոր համար, որ ազգային միութեան երաշխիքներէն մէկը լեզուական միութիւնն է:

1911-ին հրապարակային հարցախոյզին (անքէթ) առթիւ խմբագրութեան ուղղած իրենց պատասխաններուն մէջ, «Կարելի չէ», «Կարելի է՝ եթէ՛»-ներու կարգին կա՛ր նաեւ Արշակ Չոպանեանի այն տեսակէտը, թէ «ձուլումի» մասին պէտք չէ մտածել, որովհետեւ արեւմտահայերէնը կորուս-

տի դատապարտելի հարստութիւն մը չէ:

Հիմա կրնամ տալ ի՛մ պատասխանը:

Լեզուական միութեան կամ լեզուական ձուլումի մասին անիմաստ է ամէն բանավէճ. անիմաստ՝ ԱՐԴԻԻՆՔԻ՝ կամ ՀԵՏԵՒՈՒԹԵԱՆ

տեսակէտով: Որքան ատեն որ հայուլթեան երկու հատուածներու ֆիզիքական-աշխարհագրային միութիւնը չէ իրականացած՝ արեւմտահայերէնը եւ արեւելահայերէնը անջատաբար պիտի շարունակեն իրենց գոյութիւնը, որովհետեւ զանոնք կենդանի պահող յաջորդական սերունդները կ'ապրին: Լեզուական միութիւնը իրագործելի է ազգային-ֆիզիքական միաւորումով: Միութիւն ուղղուներու թէ չուղղուներու կամքէն անկախ՝ «միացեալ հայութիւն - միացեալ հայրենիքը» բնական ճամբով, լեզուական հոլովոյթի անխափանելի ճանապարհով կ'իրականացնէ այդ միութիւնը:

Հայրենադարձ արեւմտահայութիւնը, կը շարունակենք յուսալ, որ մը իրեն հետ հայրենի հողին պիտի յանձնէ զայն: Տարուէ-տարի մասնակի պատուաստումներով, փոխազդեցութիւններով, հնչաբանական, շարահիւսական-ձեւաբանական եւ այլ փոփոխութիւններով՝ արեւելահայերէնի եւ արեւմտահայերէնի աստիճանական միաձուլումով՝ արեւելահայերէնը պիտի կոչուի ազգային լեզու դառնալու իր իրաւունքին:

Բաղձանքներով, ծրագրերով, արուեստական մշակումներով եւ կարկտանային նորաբանութիւններով կարելի չէ լեզուական միութիւն ստեղծել. ազգերու եւ ժողովուրդներու կեանքէն աւել կը ստանայ որեւէ լեզու պատկան հաւաքականութեան համատեղ շնչառութենէն, ընկերային-կենցաղային, քաղաքակրթական եւ առօրեայ միջավայրէն:

Այս հաստատումէն ետք է, որ կրնամ ընդառաջել ձեր հարցումի առաջին հարցականին, թէ «ի՞նչ պիտի ուզէի ըսել արեւմտահայ եւ արեւելահայ լեզուներու մասին»... Պիտի ու-

սակայն նո՛յն ճակատագրին ենթարկուելու հոլովոյթով մը կը յատկորոշուին վերջին քսան տարիներուն: Աղճատման ճակատագրին է որ կ'ակնարկեմ... Լեզուաբանական որեւէ բժախնդրութիւն կը հարկադրէ, որ հիմնաւորեմ հետզհետէ բացայայտ դարձող վտանգի մը ներկայութիւնը հայրենի թէ տարասփիւռ իրականութեան մէջ: Սակայն հոս, հարցազրոյցի մը պարտադրած սահմաններուն մէջ, չեմ ուզեր տարածուիլ: Կը գոհանամ դիտել տալով, որ ՄՓԻԻՌԻ մէջ, ուր արեւմտահայութիւնն ու արեւմտահայերէնը տիրական են, վերջին 20-25 տարիներուն իրենց աւերը կը գործեն.

1. Հայ լեզուի ուսուցման եւ հայերէնագիտութեան ակամայ նահանջը, հետեւանք՝ հմուտ ուսուցիչներու նուազումին ու մանաւանդ դասապահերու եւ ծրագրային սահմանափակումներու,

2. Ընտանեկան յարկերու մէջ տեղական լեզուներու յաճախակի գործածութիւնը եւ ծնողներու կողմէ մայրենի լեզուի հանդէպ յայտնաբերուող անտարբերութիւնը,

3. Օտարալեզու կրթութիւնը,
4. Առօրեայ յարաբերութիւններու, քաղաքացիական կեանքի բոլոր մարզերուն մէջ տեղական լեզուներու գործածութիւնը անախընթաց ծաւալումով,

5. Խառն ամուսնութիւնները,
6. Օտար կամ տեղական հրատարակութեանց (թերթերու, հանդէսներու, գիրքերու) խոժոժմը հայ տուներէ ներս՝ անտեսումով հայալեզու հրատարակութեանց:

Հանրային-կազմակերպական կեանքի առնչութեամբ ձեր կողմէ ինձի ուղղուած հարցումի պատասխանիս մէջ ըսած եմ մնացեալը...

Յի շ ա տ ա կ ա ծ
հինգ-վեց կէտերէս անջատ, կ'ուզեմ շեշտել գաղութային մէն մի շրջանի տեղական լեզուին անուղղակի ներգործութիւնը նա'եւ գրական աշխարհաբարին վրայ:

Այսօր, աւելի քան ո՛րեւէ ժամանակաշրջան, սփիւռքեան կեանքի 1920 – 1980 վաթսուս տարիներու խօսակցական թէ գրական աշխարհաբար կը մատնէ տեղական-շրջանային օտար լեզուներէ կապկուած եւ հայերէնի իւրայատուկ բառակազմական, շարահիւսական եւ ոճական ձեւերուն հետ անհաշտ արտայայտութեան կերպեր: Ունինք թրքատիպ հայերէն, ֆրանսատիպ եւ անգլիատիպ հայերէն, արաբատիպ եւ սպա-

Ամէն բանէ առաջ, թէ Հայրենիք եւ Սփիւռք ատենը եկած պէտք է համարեն արեւելահայերէնն ու արեւմտահայերէնը զերծ պահելու խորթացման, դիմագեղծումի եւ լեզուական ապաստանումի վտանգէն, որուն մատնուած են անոնք ներկայիս:

զէի ըսել, ամէն բանէ առաջ, թէ Հայրենիք եւ Սփիւռք ատենը եկած պէտք է համարեն արեւելահայերէնն ու արեւմտահայերէնը զերծ պահելու խորթացման, դիմագեղծումի եւ լեզուական ապաստանումի վտանգէն, որուն մատնուած են անոնք ներկայիս:

Այս առաջին նկատողութիւնս կը վերաբերի մասնաւորաբար գրական լեզուներուն, որոնք տարբեր ազգակներու ներգործութեամբ,

նատիպ հայերէն...: 19-րդ դարուն ու մինչեւ 1950-ական թուականներ՝ արեւմտահայերէնը գտելու եւ հայացնելու համար մեր մտաւորականութիւնը պայքար յայտարարած էր օտար

րու գրական աշխարհաբարին որակային բարձրութեան վրայ: Ունինք տասը մատներու վրայ հաշուող նորագոյններ, որոնք ակնկալելի նոր լեզուատարներ աւելցուցած են իրենց հայերէնին վրայ. կ'ուզեմ

Այսօր, աւելի քան ո՛րեւէ ժամանակաշրջան, սփիւռքեան կեանքի 1920 – 1980 վաթսուն տարիներու խօսակցական թէ գրական աշխարհաբարը կը մատնէ տեղական–չրջանային օտար լեզուներէ կապկուած եւ հայերէնի իւրայատուկ բառակազմական, շարահիւսական եւ ոճական ձեւերուն հետ անհաշտ արտայայտութեան կերպեր: Ունինք թրքատիպ հայերէն, ֆրանսատիպ եւ անգլիատիպ հայերէն, արաբատիպ եւ սպանատիպ հայերէն...:

ըսել՝ թարմ, մշտանորոգ եւ մեր ժամանակներու պահանջներուն յարմարելով գիտականօրէն ամուր եւ գեղարուեստականօրէն հարուստ մնալու ընդունակութիւնը տուած են անոր: Սակայն, ընդհանուր առումով նահանջի մը

րաբանութեան դէմ՝ օտար բառերու որգեգրումին, օտարածեւ լեզուական կառոյցներու, թարգմանութիւն բուրոյ իւրացումներու դէմ: 1906 – 1914, «Ազգակ»-ի, «Ազատամարտ»-ի, «Բագին»-ի, «Բարձրավանք»-ի ու «Մեհեան»-ի նման պարբերականներու շուրջ բոլորուած գրագէտներ, արուեստագէտներ ու լեզուի մշակներ գորաշարժ հռչակած էին՝ գեղագիտական հանգանակներ եւ ոգեպաշտական իմացումներ արեւմտահայ գրական լեզուին համար աւել զարձնելու առաջադրանքով: Երբ կը հակիք 1830-էն մինչեւ 1930 հարիւրամեայ շրջանին հրատարակուած առօրեայ մամուլի, պարբերականներու եւ գրական հունձքի էջերուն վրայ եւ լեզուական առումով բազմաթիւ քննարկումի կ'ենթարկէք արտայայտութեան միջոցներն ու արուեստի յատկանիշերը 1830-ի, 1850-ի, 1870-ի, 1900-ի եւ 1910 – 1930-ական տարիներու արեւմտահայ գրական աշխարհաբարին, ձեր ուշադրութեանէն չի կրնար վրիպիլ ներկայ գրականին ընկրկումը, յաճախ նա՛ եւ աղճատումը:

իրականութիւնը փաստ է մերօրեայ գրական աշխարհաբարին մէջ: Գրականութիւն, լրագրութիւն, գրաւոր արտայայտութեան հետ կապ ունեցող ամէն կարգի հրատարակութիւն՝ լեզուականօրէն խոցելի են առհասարակ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ մէջ, ուր արեւելահայերէնը բացարձակօրէն տիրական լեզուն է,– ու թերեւս «օրինականօրէն» ազգային լեզու յայտարարուած է մեր բանասէրներուն ու լեզուաբաններուն կողմէ,– վերջին վաթսուն տարիներուն իր աւերը գործեց մարքս–լենինեան «ուսմունքը», Համայնավար կուսակցութեան «լեզուական դրոյթը»...: Խորհրդային լեզուաբանական բաւիղներուն մէջ չմխրճուելու համար շեշտակի կ'ուզեմ հաստատել, թէ 1920-ական թուականներու արեւելահայերէնը ԲՌՆԱԲԱՐՈՒԱԾ է ուսերէնի հեղեղային խուժումովը եւ ներելի է ՍՈՎԵՏԱՀԱՅԵՐԷՆ նկատել զայն այսօր:

Չեմ ժխտեր ներկայութիւնը հրապարակագիրներու, քերթողներու, արձակագիրներու, գրչի մարդոց, որոնք անհատաբար կը մնան մինչեւ 1908 – 1930-ական թուականներ

Օտար բառերու ներկայութիւնը աշխարհաբարի երկու ճիւղերուն մէջ նոր երեւոյթ է: Բոլորս ալ գիտենք, թէ միջնադարեան ժամանակաշրջաններէ մինչեւ ներկայ, թաթարերէնին, թրքերէնին, ռուսերէնին, ֆրանսերէնին եւ օտար լեզուներու բառամթերքէն որոշ տարրերու ներկայութիւնը ընդհանուր իրողութիւն է: Այսօր ալ, տակաւին, հարկին տակ ենք որոշ

ՀԱՅԱՍՏԱՆԻ մէջ, ուր արեւելահայերէնը բացարձակօրէն տիրական լեզուն է,– ու թերեւս «օրինականօրէն» ազգային լեզու յայտարարուած է մեր բանասէրներուն ու լեզուաբաններուն կողմէ,– վերջին վաթսուն տարիներուն իր աւերը գործեց մարքս–լենինեան «ուսմունքը», Համայնավար կուսակցութեան «լեզուական դրոյթը»...: Խորհրդային լեզուաբանական բաւիղներուն մէջ չմխրճուելու համար շեշտակի կ'ուզեմ հաստատել, թէ 1920-ական թուականներու արեւելահայերէնը ԲՌՆԱԲԱՐՈՒԱԾ է ուսերէնի հեղեղային խուժումովը եւ ներելի է ՍՈՎԵՏԱՀԱՅԵՐԷՆ նկատել զայն այսօր:

բառեր որդեգրելու, որովհետեւ համագործակցող չունինք: Պահպանողականութիւնը պէտք է հասցնել նեղմտութեան եւ այլամերժութեան: Որքան ատեն որ իմաստային ու լեզուական առումով անսխալ ու հարազատ համագործակցող չունինք մայրենի լեզուի մէջ, պիտի իւրացնենք օտարինը: Այս պարտադրանքին տակ են բոլոր լեզուները:

Պարագան նոյնը է Հայրենիքի մէջ: Անոնք, որ հետեւած են խորհրդային կեանքի վերջին վաթսուն տարիներու մշակութային կեանքին, գիտեն, որ լեզուն ազգային աւանդկամ նկարագիր յատկանշող որեւէ արժէք է համայնավարութեան համար եւ, որովհետեւ «պարտիայի» այս վերաբերումը իր անմիջական անդրադարձը ունի թէ՛ խօսակցական, թէ՛ գրական լեզուներու վրայ, ուստի էն ծալապատիկ նստած է այսօր արեւելահայերէնի անդաստաններուն մէջ, մասնաւորաբար լրագրային լեզուի նորօրինակ պատկեր մը (չըսելու համար վիժուկ մը) ստեղծելով:

Ողբերգութիւն է տեսնել, որ հայրենաբնակ լեզուաբաններէն ոմանք հարկադրաբար «լեզուական աննախընթաց հարստութիւն» նկատեն ուստի էն բառերու ներխուժումը հայերէնի մէջ, կամ ուստի էն արմատներով կառուցուած հայաձեւ ստեղծումներով ոգեւորուին, եզրակացնելու համար, որ խորհրդային կարգերու տակ հայոց ազգային լեզուն բոլորած է իր ամէնէն վերանորոգ մէկ շրջանը: «Մեր լեզուի շինարարական հսկայական աշխատանքի մէջ յատկապէս պէտք է ընդգծել ուստի էն նուաճումները լրիւ չափով օգտագործող մամուլի խոշորագոյն դերը: Պարտիական, հրապարակախօսական ոճի, մարքսիզմ-լենինիզմի կլասիկները նպատակասլաց ու հարուստ լեզուի արտայայտչական միջոցների ակտիւ ներգործութեամբ՝ մեր մամուլը, մասնաւորապէս պարտիական մամուլը, ամէն օր ու ամէն ժամ մշակում ու կատարելագործում է գրական հայերէնը, այն աւելի ու աւելի մօտեցնելով ժողովրդական լայն զանգուածներին եւ դարձնելով մասսաներին սոցիալիստական շինարարութեան մէջ ներգրաւելու եւ կոմունիզմի ոգով դաստիարակելու հզօրագոյն միջոց», կը գրէ լեզուաբան Սերոբ Ղազարեան իր «Հայոց լեզուի համառօտ պատմութիւն» գործի վերջին գլուխին մէջ (էջ 462): Մենք կ'ըմբռնենք անշուշտ, որ հայ գիտնականին շրթունքնե՛րն են միայն, որ տուն կու տան նման եզրակացութիւններու: Սակայն արեւելահայերէնի խոշտանգումը չի դադրիր փաստական իրողութիւն ըլլալէ...

Միւս կողմէ հրճուառիթ է հաստատել, որ

Հայաստանի խորհրդայնացման թուականէն մինչեւ այսօր, լեզուական բռնարարութեան բոլոր փորձերուն եւ գործնական նախաձեռնութեանց դէմ պայքար ու ընդդիմութիւն յայտարարած է հայրենի մտաւորականութիւնը:

Երկու ճակատի վրայ հայոց լեզուի ինքնապաշտպանութեան կռիւն, է որ կը մղուի 1920-ական տարիներէն ի վեր: Առաջինը՝ այսպէ՛ս կոչուած «ուղղագրական փոփոխութեան» լեզուական բարբարոսութեան հանդէպ հայ գրագէտներու, լեզուաբաններու եւ գիտնականներու կրաւորական կեցուածքով, նա՛եւ մասնակի հակայարձակողականով կը բնորոշուի: Երկրորդը՝ արեւելահայերէնի ուսուցման ընթացքին հանդէպ նախ վերապահութեամբ, ապա բարձրաձայն հակազդեցութիւններով կ'արտայայտուի:

Ձեր հարցումին պատասխանելու համար կ'ողբեմ քանի մը անցուղարձեր մատնանշել ամփոփ կերպով (լեզուական այս բոլոր հարցերուն մանրամասնօրէն անդրադարձած եմ «Հայրենիք»-ի 1978 ապրիլէն մինչեւ 1982 փետրուարի շաբաթօրեայ թիւերուն մէջ. այստեղ կը խոսափիմ տարածուելէ, որովհետեւ չունիմ այդ իրաւունքը):

Մեսրոպեան ուղղագրութեան «Աբեղեանական ուղղագրութեան» անցումի պաշտօնական նախաձեռնութիւնը հրամանագրուած է 1922 մարտ 4-ին, պետական «դեկրէտով» եւ «բարեփոխութեան» սկզբունքով, կիրառման դրուած է 1922 հոկտեմբեր 2-էն սկսեալ, ապա պարտադիր հռչակուած է 1923 յունուար 1-էն սկսեալ:

Սկզբնական այդ օրերուն, ինչպէս նաեւ նոր «ուղղագրութեան» կիրարկումի յաջորդող անմիջական տարիներէն մինչեւ այսօր, ուրեմն վաթսուն տարիէ ի վեր, Հայաստանի մտաւորականութեան ջախջախիչ մեծամասնութիւնը ընդդիմացած է, գործնապէս բողոքած ու պայքարած է, եւ, հարկ է արձանագրել, աննշան կարգ մը բարեփոխումներու ալ մղած է պատկան իշխանութիւնը. սակայն հիմնական ոչ մէկ զիջում «պարտիականներու» կողմէ, որոնք կոմկուսի համագումարներուն կողմէ նուիրագործուած «լեզուական դրոյթին» դէմ կը նկատեն Մեսրոպեան ուղղագրութեան վերադառնալու ամէն քայլ:

– «Ժողովրդականացնել լեզուն»՝ ա՛յս է ընդդիմութեան պատրուակը: Մեսրոպեան ուղղագրութիւնը բարդ է, դժուարիմաց, անգործնական... «Ամէն հնչիւնի համար մէկ տառ», ա՛յս է մեկնակէտը:

Տարբեր խօսքով, լեզուին հիմնական պահանջները, լեզուաբանական գիտական ըմբռ-

նումները եւ ակունքային-ծագնումային կարգ մը անգանցառելի պարտադրանքները իմաստ չունին՝ իրենց համար:

Վերջին քսան տարիներուն ե՛լ լեզուական «մաքրութեան» (գտումի), ե՛լ ուղղագրական ճշմարիտ բարեփոխումներու պահանջները շեշտուած են: Պարբերաբար գումարուող ժողովներու մէջ, երբեմն նաեւ հրապարակային ելոյթներով, հայ գրողներ ու լեզուաբաններ կը պահանջեն թօթափել օտար բառերը, արդէն իսկ մայրենի լեզուի ածուններուն մէջ տուն-տեղ եղած տատասկներ կամ եղիճներ փրցնել-նետել, գոյութեան իրաւունքը ճանչնալ անոնց հայերէն, գտարիւն համագօրններուն: Տակաւին վերջերս, 1982-ի մարտ ամիսէն մինչեւ մայիս, խորհրդահայ մամուլի մէջ տեղ գտան այս իմաստով արտայայտութիւններ:

Կազմուած է արդէն մասնաւոր «տերմինաբանական յանձնաժողով» մը, որ պիտի զբաղի օտար կարգ մը բառերու հայերէնները գործածութեան կոչելու աշխատանքով:

Կ'ուզենք ըսել, թէ ե՛լ «սովետահայ» ուղղագրութեան, ե՛լ օտար բառերու գործածութեան դէմ պայքարը տկարացած է: Եւ որքան ատեն, որ այս շարժումը ներկայ է հայրենիքի մէջ՝ իրաւունք չունինք եզրակացնելու, որ կացութիւնը անյոյս է...

Անձնապէս, չեմ ակնկալեր, որ Մեսրոպեան ուղղագրութիւնը «վերահաստատուի». սակայն կը հաւատամ, որ հայ ակադեմականութիւնը երբեք պիտի չհամակերպի «նոր ուղղագրութեան» եւ պիտի գոհանայ հաւանօրէն որոշ դարձով մը դէպի դասական ուղղագրութիւնը:

Աւելի՛ յուսատու է օտար բառերու գործածութեան դէմ մղուող պայքարը: Խորհրդահայ գրականութեան մէջ, արդարեւ, արեւելահայ լեզուն կը պահէ իր ազգային ինքնութիւնը եւ կ'ընծայէ ամէն ապահովութիւն, որ պիտի չստրկանայ ապահայ աղճատ ու այլանդակ օտարաբանութիւններու:

Ինքզինք պատմող, իրմով մարդկայնութենէն վկայութիւն մը բերող, մարդկային իրականութենէն դէպի անհատական ներաշխարհ սեւեռող ու, փոխադարձաբար, անձէն դէպի համամարդկային տազնապանք, որոնում, խուզարկութիւն ու ճանաչում դիմող ամէն արուեստագէտ, ամէն գրող առնուազն «ընկալչութիւն» մը կ'ակնկալէ հաղորդութեան արարքի մը կը սպասէ:

Հ.- Ի՞նչ կը մտածէի հայ գրականութեան ներկայիս ու ապագայիս մասին՝ հայրենիքի թէ Սփիւռքի մէջ:

Պ.- Հարցումին պատասխանելէ առաջ՝ թիւրիմացութիւններ կանխելու համար, կ'ուզեմ հաստատում մը ընել:

«Հայ գրականութեան ներկան», եւ «Հայ գրականութեան ապագան» բացատրութիւնները, իմ հայեցողութեամբ, կ'առնչուին նախ հայալեզու գրական վաստակի, ապա նաե՛ւ այդ վաստակի ընկալումին:

Ոմանց համար հայ գրական գործերու ներկայութեան փաստը բաւարար տուեալ է հաւատալու, թէ հայ գրականութիւնը ապահով ընթացքի մէջ է: Գրական-ստեղծագործական տաղանդ, առաւել գրական հունձք՝ հաւասար են «գրականութեան»...

Վճռական հերքումի կամ ժխտումի իրաւունք չեմ զգար, սակայն անձնապէս տեսականօրէն միայն անվրէպ ու ամբողջական կը նկատեմ այս հաւատքը: Իմ կարծիքով, մշակութային որեւէ վարուցան կամ իրագործում՝ իւրացումով, առնուազն ընկալումով պայմանաւորուած է, մանաւանդ երբ կը գտնուիմ դէմ-յանդիման հարցումի մը, որ հայ գրականութեան «ներկան» ու «ապագան» խնդրոյ առարկայ կը դարձնէ:

Առարկայական իրականութենէն կը մեկնիմ, միտքս հասկնալի դարձնելու համար:

Հայրենիքի մէջ հայ գրականութեան ներկան ամէն ապահովութիւն կ'ընծայէ ինձի, թէ ապագան ալ նո՛յնքան ու աւելի «փայլուն» պիտի ըլլայ, որովհետեւ այդ գրականութիւնը ո՛չ միայն տաղանդներու, ստեղծագործական կարողականութեան շօշափելի հունձքի մը փաստն է, այլե՛ւ ժողովրդային լայն խաւերու կողմէ ընկալուած եւ իւրացուած ըլլալու իրողութեան վկայութիւնը:

Ամէն ստեղծագործութիւն, որակական իր առաւել կամ նուազ արժէքով, կ'ենթադրէ ընկալում մը, այսինքն՝ «ստեղծումի» եւ «ստեղծուածով» հաղորդուելու յարաբերականութիւն

մը: Արուեստի եւ մշակոյթի բոլոր ճիւղերուն համար գոյութեան իրաւունք ունի այս ակնկալութիւնը:

Ինքզինք պատմող, իրմով մարդկայնութենէն վկայութիւն մը բերող, մարդկային իրականութենէն դէպի անհատական ներաշխարհ

սեւեռող ու, փոխադարձաբար, անձէն դէպի համամարդկային տազնապանք, որոնում, խուզարկութիւն ու ճանաչում դիմող ամէն արուեստագէտ, ամէն գրող առնուազն «ընկալ-չուլութիւն» մը կ'ակնկալէ հաղորդութեան արար-

պաշտական ծանծաղումներէ եւ խորացում՝ անհատական, ազգային ու մարդկայնական-համամարդկային տազնապանքներու, ապրում-ներու, իմացապաշտ սեւեռումներու ընկերային հարցադրումներու մէջ: Ձեր նախորդ կարգ մը

հարցումներուն առիթով ըսած եմ արդէն հիմնականը. հետեւաբար, չեմ ուզեր կրկնու-թիւններու մէջ մխրճուիլ: Հայրենի հողի վրայ, ի՛նչ որ ալ ըլլան տիրող պայմանները եւ

Սփիւռքի մէջ հայ գրականութեան ներկան լաւատեսու-թիւն չի ներշնչեր ինծի՝ թէ ապագան կրնայ աւելի «փայլուն» ըլլալ, որովհետեւ թաւալող ամէն մէկ տարուան հետ, սփիւռքեան գրականութեան հանդէպ տարասփիւռ մեր ժողովուրդի «ընկալումի» տրամադրութիւնը կը նուազի, կը սահմանա-փակուի անհամեմատօրէն...:

ն'ըքան ալ «ղեկավարեալ գրականութեան» մը յատուկ պարագայական դժուարութիւններ ու անպատեհութիւններ ստեղծուին, հայ գրակա-նութիւնը, երբեմն ընկրկելով ու նահանջելով, սակայն անխափան ապրելով, ի վերջոյ պիտի պարտադրէ ինքզինք, դառնալով վկայութիւնը ե՛ւ ստեղծագործ տաղանդներու, ե՛ւ մեր ժողո-վուրդի ընդհանրական ապրումներուն, մտա-ծողութեան, աշխարհայեացքին, ներագալիին ինքնայատուկ ձգտումներուն ու համամարդ-կային տենչերուն, մարդկութիւնը յուզող ու մարդ էակը անհատաբար տազնապեցնող հար-ցականներուն:

քի մը կը սպասէ: Եթէ հաւատամ անոնց, որոնք կը պնդեն, թէ ոչինչ կը սպասեն ընկերութե-նէն, ապա ուրեմն պէտք է հաւատամ նաեւ, թէ ստեղծագործումը անիմաստ, գոյութեան իրա-ւունքէ զուրկ արարք մըն է:

Սփիւռքի մէջ հայ գրականութեան ներկան լաւատեսութիւն չի ներշնչեր ինծի՝ թէ ապա-գան կրնայ աւելի «փայլուն» ըլլալ, որովհետեւ թաւալող ամէն մէկ տարուան հետ, սփիւռքեան գրականութեան հանդէպ տարասփիւռ մեր ժո-ղովուրդի «ընկալումի» տրամադրութիւնը կը նուազի, կը սահմանափակուի անհամեմատ-օրէն...:

Տաղանդներ չեն պակսիր. ընդհակառակն, նոր ու նորագոյն սերունդներու մէջ ստեղծա-գործական թափը եւ որակային կշիռը կը շեշտ-ուին աւելի: Կա՛յ գրական հունձքը, կա՛յ բարձ-րորակ վաստակը, բայց, իմ հայեցողութեամբ, գրականութիւնը իր ներկայով ու հաւանական ապագայով որբացումի դատապարտուած է...

Ձեր հարցումը կը հարկադրէ, որ այս կէտէն անդին նաե՛ւ ընդհանրական քանի մը հաստա-տումներ ընեմ:

Հայրենիքի մէջ հայ գրականութիւնը վեր-ջին քսանամեակին կը դիմէ ազատագրում՝ քարոզչական, վարդապետական եւ օգտա-

Սփիւռքի մէջ, ներկայիս, մեր գրակա-նութիւնը իբրեւ ստեղծագործական տաղան-դի արտայայտութիւն, կը հաշուէ տասը-քսան քերթողներ ու արձակագիրներ, որոնք իրա-ւունք կու տան ինծի հաստատելու, թէ անմիջա-կան հայ գրականութիւնը աննախընթաց որակ մը արձանագրած է անոնց վաստակով: Մենք տաղանդներու տազնապ չունինք. մենք գրա-գէտներու անձկութիւն չունինք. մենք ամուլ չենք գրականօրէն: Սակայն սփիւռքեան գրա-կանութիւնը լուրջ տազնապի մը մատնուած է եւ եթէ պակսի այն ընկալումը, որուն կ'ակ-նարկէի քիչ առաջ, չեմ հաւատար, որ ապագան

Սփիւռքի մէջ, ներկայիս, մեր գրականութիւնը իբրեւ ստեղծագործական տաղանդի արտայայտութիւն, կը հաշուէ տասը-քսան քերթողներ ու արձա-կագիրներ, որոնք իրաւունք կու տան ինծի հաստատելու, թէ անմիջական հայ գրականութիւնը աննախընթաց որակ մը արձանագրած է անոնց վաստակով: Մենք տաղանդներու տազնապ չունինք. մենք գրագէտներու անձկութիւն չու-նինք. մենք ամուլ չենք գրականօրէն: Սակայն սփիւռքեան գրականութիւնը լուրջ տազնապի մը մատնուած է եւ եթէ պակսի այն ընկալումը, որուն կ'ակ-նարկէի քիչ առաջ, չեմ հաւատար, որ ապագան ապահով նկատելու որեւէ ինք-նախաբէութիւն ներելի կրնայ համարուիլ...

ապահով նկատելու որեւէ ինքնախաբէտութիւն ներելի կրնայ համարուիլ...

Մէկուկէս միլիոնէ աւելի համրանք ունեցող Սփիւռքի մէջ հազի՛ւ 500-1000 սպառու մ

«Դար մը գրականութիւն» եւ անկէ անդին

Հ.- Տեղեակ եմ, որ այս օրերուն հրատարակուեցաւ ձեր «ԴԱՐ ՄԸ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ» գործի Բ. հատորին երկրորդ տպագրութիւնը՝ 1920 – 1980 թուականներու սփիւռքեան գրականութեան մասին: Պիտի փափագէիմ լսել, թէ ե՛րբ ու ինչպէ՛ս ձեռնարկեցիք այս գործին, ի՞նչ դժուարութիւններու հանդիպեցաք, ի՞նչ ընդունելութիւն գտաւ Ա. հատորը, ե՛րբ սկսաք վերանայումի աշխատանքի, ե՛րբ պիտի հրատարակուի Գ. հատորը, որ, ըստ նախատեսութեան, յատկացուած պիտի ըլլայ Հայաստանի 1920 – 1980 վաթսուամեայ շրջանի գրականութեան: Ունի՞ք հրատարակելի այլ գործեր:

Պ.- «ԴԱՐ ՄԸ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ»-ը մասնաւոր առաջադրանքով մը եւ համապատասխան ծրագրումով ծնած գործ է: Կ՛ուզեմ ըսել, թէ գրապատմական աշխատասիրութեան մը բնոյթն ու տարողութիւնը չունի: Պարագայականօրէն համադրուած գրական-վերլուծական ակնարկներու շարք մըն է՝ դասագրքային խորացումով, որուն առաջին տպագրութեան նախաձեռնութիւնը կը պատկանի հոգեւոյս Զարեհ Ա. կաթողիկոսին Մեծի տանն Կիլիկիոյ:

1947 – 1956 թուականներուն, Հալէպի Քարէն Եփփէ ճեմարանի տնօրէնութեան տարիներուս, միաժամանակ միջնադարեան բանաստեղծութեան եւ ժամանակակից ու արդի գրականութեան դասաւանդութիւնը կը կատարէի բարձրագոյն երեք կարգերու ուսանողութեան, որոնց տրամադրելի դասագիրքեր գոյութիւն չունէին, եղածներն ալ գրքունակ, կաղապարատիպ գործեր էին: Կ՛օգտագործէինք Յակոբ Օշականի «ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ» հատորը, որ, իմ կարծիքով, նպատակայարմար միակ ուղեցոյցը կրնար ըլլալ, պայմանաւ, որ ուսուցիչը, իր կարգին, գործին պատմական բաժինը «մարսելի» դարձնէր...

Ուրեմն, մեկնակէտ ունենալով Օշականի գրչով թանձրօրէն խտացած, սակայն համապարփակ ներկայացուած գրապատմական բաժինը, դասապահները լրիւ կը յատկացնէին գրական շրջաններու ընկերային, մշակութային, լեզուական, հրապարակագրային, ազգային-քաղաքական պայմաններու մասին պատմա-վերլուծական դասախօսութիւններու, ապա նաեւ տուեալ ժամանակաշրջանի ընթացքին ապրող եւ ստեղծագործող դէմքերու կեան-

ունեցող գրական գործերով՝ հայկական արտասահմանը չի կրնար յաւակնիլ, թէ ապագայ ունի հայ գրականութեան մէջ...

Քին ու գլխաւոր գործերու մասին բնորոշիչ վկայութիւններու: Ուսանողութեան պարտականութիւնն էր լսել, նկատելով, որ մէն մի շրջանի համար ծրագրուած դասախօսութիւններու շարքը լրացնելէ ետք, առանձնաբար իրենց կը տրամադրէի նաեւ ամփոփումը հինգ կամ տասը օրերու նիւթերուն:

Մեքենագրուած, դասաւորուած, ապա նաեւ ընդհանուր վերատեսութեամբ մը լրումի հասցուած այս դասախօսութիւններն էին, որ հետագային, Զարեհ եպիսկոպոսի նախաձեռնութեամբ ու երկու հատորներով հրատարակուեցան Գահիրէի «Յոսաբեր» հրատարակչականին կողմէ՝ 1955-ին եւ 1956-ին, Տիթրոյթէն տէր եւ տիկ. Փօլ Մարանեաններու եւ Գոմոյէն (Իտալիա) տէր եւ տիկ. Օննիկ Մանուկեաններու նիւթական ձեռնտուութեամբ:

Ձեր հարցումը, թէ «ե՛րբ ու ինչպէ՛ս ձեռնարկեցիք այս գործին»՝ պատեհ առիթ է անգամ մը եւս ընդգծելու, թէ «ԴԱՐ ՄԸ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ»-ը պէտք է նկատել անոր հեղինակին անհատական նախասիրութիւններով, հետեւաբար նաեւ բացարձակօրէն անձնական գրական-արժեւորումի չափանիշներով խմբագրուած աշխատասիրութիւն մը: Օգտապաշտական, «ծառայողական» մղումէ մը թելադրուած, հայ ուսանողութեան գրական հետաքրքրութիւններուն ընթացք տալու ուսուցչական կոչումէն բխած գործ մըն է, որ հաւանօրէն գոհացում կու տայ նաեւ հայ գրականութեան պատմական հոլովոյթով ու գլխաւոր դէմքերու կեանքով ու վաստակով հետաքրքրող գրասէր հասարակութեան:

Այս կէտը շեշտելու հարկ տեսած եմ միշտ, որովհետեւ հաւատացած եմ, թէ որեւէ վաստակի անանձնական գնահատումը ընելու կոչուած առաջին անձը հեղինակն իսկ է, եւ զայն հանրութեան ներկայացնող մարդուն պատասխանատուութիւնն է յաւելեալ յաւակնութիւններէ խոսափիլ: Տարբեր ծաւալ, մշակումի տարբեր ձեւ, խորացման տարբեր տարողութիւն, հաւանաբար նաեւ սեւեռումի բերուած դէմքերուն ու անոնց գրական վաստակին մասին շատ աւելի բացարձակապաշտ արժեւորումներու պահանջ կրնար տեսնել ան, եթէ ուզէր ու կարենար նուազ ուսուցիչ ու աւելի... դատախազ ըլլալ, նուազ դասաւանդ ու աւելի քննադատ:

«Ի՞նչ դժուարութիւններու հանդիպեցաք», – հարց կու տաք ու ձեր հարցումով իսկ կը հաստատէք արդէն «դժուարութիւններու» անխուսափելի իրականութեան մը փաստը: Ձեզ հետաքրքրողը «ինչն» է:

Այս պարագային, թերեւս իմ իրաւունքը չէ արտայայտուիլ, որովհետեւ ինչպէս նշեցի, հրատարակութեան նախաձեռնութիւնը ինձմէ աւելի կը պատկանի պարզ, համեստ, համակ նուիրում, հոգեւորականի գիտակցութիւն, անհատական համոզումներու տէր կանգնելու քաջութիւն եւ հանրային ծառայութիւնը գերագոյն գոհացում դաւանող այն մարդուն, որ հոգեւորյա Զարեհ Ա.ը եղաւ: Սակայն մնա՞ց հայ իրականութեան մէջ գիտակից ոեւէ անհատ, որ չկարենայ գուշակել, թէ հայ գրողի մը, մտքի կամ գրչի մարդու մը «դժուարութիւնները» ի՞նչ կրնան եղած ըլլալ...: Աւելորդ է խօսիլ այդ մասին: Պէտք չէ այդ «դժուարութիւններուն» անդրադառնալու առիթը ստեղծել հայ հեղինակին համար...

Գործին առաջին տպագրութիւնը ընդունելութիւն գտա՛ւ. հարկ չեմ տեսներ որեւէ վերադիր գործածելու, որովհետեւ էականը այդ ընդունելութիւնն է սփիւռքեան կեանքի մէջ: Փաստն այն է, որ սպառեցան հրատարակուած 1500 օրինակները, եւ աւելի՛ յատկանշականը՝ թաւալող մէկ երկու տասնամեակներու ընթացքին նորանոր պահանջներու դէմ-յանդիման գտնուեցայ:

1977-ին միայն գտայ այդ հնարաւորութիւնը եւ 1978-ին գրեթէ անփոփոխ հրատարակուեցաւ Ա. հատորի (1850 – 1920) երկրորդ տպագրութիւնը՝ Հ.Բ.Ը.Միութեան Ալեք Մանուկեան մշակութային հիմնադրամի 10 000 տոլարի յատկացումով:

Հրատարակուած 1500 օրինակներէն 1300-ը սպառած է արդէն, ու մնացեալ 200-ը «անձեռնմխելի» պահուած է իմ կողմէ՝ որոշ մտահոգութիւններով:

Ուշացաւ Բ. հատորի (1920 – 1980) հրատարակութիւնը քանի մը պատճառներով:

Նախ՝ հիմնական փոփոխութեան պահանջը: Առաջին հատորի 1955-ի տպագրութիւնը, 500 էջերու ծաւալով մը կը պարփակէր 1920 – 1950 երեսնամեայ շրջանի սփիւռքեան եւ հայրենական գրականութիւնը: Երկրորդ տպագրութիւնը, որ լոյս կը տեսնէ այս օրերուն, 700-ի մօտ իր էջերու ծաւալով, յատկացուած է միայն սփիւռքեան գրականութեան 1920 – 1980 ժամանակաշրջանին: Հարկ չեմ տեսներ պարզելու, թէ ինչո՞ւ ծագեցաւ պահանջը Հայաստանի գրականութեան բաժինը անջատելու: 1950

– 1980-ի արտասահմանեան հայ գրականութիւնը իր երկու գլխաւոր «Վերայայտնութեան սերունդ» եւ «Անմիջական սերունդ» ստորաբաժանումներով, արժանի է միշտ սեղմ, բայց համապարփակ ներկայացման: Այդ փորձն է որ կատարած եմ, որովհետեւ, իմ կարծիքով, մասնաւորաբար 1955 – 1975 յայտնուող նորագոյն տաղանդներու գործը, գրական իր որակով եւ սեւեռումի հորիզոններով, ինքզինք կը պարտադրէ: Կ'արժեւորէ հայ գրականութեան նոր դիմագծութիւնը ե՛ւ արձակի, ե՛ւ քերթողութեան մէջ՝ հինգ-տասը բացառիկ նորերու գործով:

Երկրորդ՝ հրատարակութեան պարտադիր ծախսերու արտասովոր սղութիւնը:

Ա. հատորի երկրորդ տպագրութիւնը արժեց մօտաւորապէս 13 000–14 000 տոլար. Բ. հատորի տպագրութիւնը (1978-էն չորս տարի ետք) արժեց 24 000 տոլարէն աւելի...: 1500 օրինակ եւ... 24 000 տոլար: Յիմարութիւն չէ՞ հայ գրականութեան վերապահուած պայմաններու մէջ հայ գիրք հրատարակել: Ու ի՞նչ յուզիչ բառ պէտք է գտնել նման անհաշիւ յանդուժութիւններ արդարացնելու համար...

Եւ սակայն, եղան երկու, երեք, չորս ու աւելի մարդիկ, որոնք «անտրամաբանական» տրամաբանական հետեւութեան հասցուցին: Սան Փառլոյէն (Պրագիլիա) արուեստագիտուհի հայուհի մը՝ տիկ. Էլպիս Էպլիդաթեան, ինքնաբեր պատրաստակամութեամբ, իր ողբացեալ քրոջ յիշատակին աւելի քան 12 000 տոլարի գումար մը տրամադրեց. ծանօթ լրագրող Լեւոն Քէշիշեան եւ իր զաւակը՝ Հայկազուն, իրենց ողբ. կնոջ եւ մօր յիշատակին տրամադրեցին 5000 տոլար: Ուրիշ քանի մը բարեկամներ ալ, որոնց լրիւ ցանկը կ'երեւի Բ. հատորի վերջին էջին վրայ՝... եւ հատորը լոյս կը տեսնէ, ահա-լաստիկ, վերջին վաթսունամեայ շրջանի ամփոփ պատմութեամբ՝ ընկերային, ազգային, մշակութային, լեզուական ու գրական մեր կեանքի հոլովութային զարգացման մասին սեղմ հաստատումներով, սփիւռքեան արձակագիրներու եւ քերթողներու գրեթէ ամբողջական ցանկով, գաղութային գօտիներու յատուկ մասնաւորութիւններով եւ 85 դէմքերու կեանքին ու գործին նուիրուած մենագրային ակնարկներով. պատկերազարդ, լաթակազմ եւ յաւելուածաբար՝ Ա. եւ Բ. հատորներու մէջ յիշատակուած անձնանուններու, առօրեայ թերթերու եւ պարբերականներու անուններու ցանկերով (index):

– «Երրորդ հատո՞ր»...

Ձեր հարցումը կրնայ ըսել տալ ինծի բաներ, որոնք կը մտածուին, կ'ապրուին, սա-



Գոհար եւ Մինաս Թէօլէօլեաններ՝ իրենց տան մէջ, 1982 օգոստոսին, Պոսթըրն

կայն... Թող թին տրուելու համար կը կարօտին արտակարգ քաջութեան, նուաստացուցիչ հաստատումներու եւ ճնշիչ վկայութիւններու: Կը խուսափիմ այդ բոլորէն: Այժմեան պայմաններու մէջ եւ հաւանական նոր սղութիւններու հեռանկարով՝ գոնէ սա պահուս անհնարին կը համարեմ նման որեւէ արկածախնդրութիւն: Թողո՛ւնք կեանքին, որ երբեմն իր հաճելի անակնկալներն ալ ունի...: Աշխատանքի, տքնութեան եւ ընթացիկ տաղտուկներու դէմ պայքարելու տրամադրութիւնը չի պակսիր: Դիտել տուած եմ ամէն առիթով, որ ինծի համար յաւիտենական ուսանողութիւնն է գրչի կապուած ամէն յոգնութիւն, պրպտում, ճիգ եւ վարուցան, ու մտահոգութեան հարցը այն չէ, թէ ինչպէ՛ս կ'իրագործուի որեւէ վաստակ, այլ թէ ինչպէ՛ս կարելի կրնայ ըլլալ այդ վաստակը հասցնել անո՛նց, որոնք տրամադիր են հնճելու...

– Մեր այս գրոյցը անաւարտ պիտի մնար եթէ առիթէն օգտուելով եւ ձեր բազմահարիւր աշակերտներուն, ընթերցողներուն եւ գործակիցներուն անունով չշնորհաւորէի ձեր գրական-հասարակական գործունէութեան յիսնամեակը եւ չմաղթէի ձեզի արեւշատութիւն, որպէսզի միշտ նոյն շերմեռանդութեամբ շարունակէք Բանին սպասարկութիւնը:

Նաեւ, յոյսս է, որ սոյն գրոյցը դառնայ ՀՐԱԻԷՐ մը բոլոր անոնց, որոնք կը սիրեն ձեզ, այլեւ կը սիրեն հայ գրականութիւնը. հրաւեր՝ յառաջացնելու համար անհրաժեշտ նիւթական պայմանները, ՈՐՊԷՍՁԻ ՁԵՐ ՄԵԾ ՈՒ ԿԱՐԵՒՈՐ ԳՈՐԾԸ ԻՐ ԼՐՈՒՄԻՆ ՀԱՍՆԻ, որպէսզի հրատարակութեան արժանանայ «ԴԱՐ ՄԸ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ» Գ. հատորը՝ հայաստանեան գրականութեան նուիրուած:*

ԳՐԱՍԷՐՆԵՐ, ՇԱՐԺԵՑԷՔ:

* Ափսո՛ս, այդ մէկը իրականացնելու պատեհութիւնը չունեցաւ Մինաս Թէօլէօլեան:

Ուսուցիչը

Գարոցական տարիներէն ետք, նոյնիսկ անոնց ընթացքին՝ բայց դասարաններէն դուրս, ունեցած եմ երկու ուսուցիչներ, որոնց դասերը դրոշմուած կը մնան մտքիս մէջ՝ հակառակ անոր, որ անոնց ուսուցչական ասպարէզին ընթացքին չեմ աշակերտած իրենց, չեմ վայելած իրենց դասաւանդութիւնները:

Այդ ուսուցիչներէս մէկը ընկ. Մինաս Թէօլէօլեանն էր, որ նոր հրաժեշտ առաւ այս անցողիկ կեանքէն, միւսը՝ ընկ. Բենիամին Թաշեանն էր, որուն ֆիզիքական ներկայութեան գրկուած ենք շուրջ քառորդ դարէ ի վեր, բայց որուն ոգեկան ներկայութիւնը մեզի հետ պիտի մնայ նուազագոյնը մեր կեանքի ընթացքին, եթէ ոչ անկէ ալ անդին:

Որքան ուրախ եմ, որ անցեալ ամառ վերջին անգամ մը եւս կարողացայ այցելել ընկ. Մինասին եւ իր տան կռնակի հովասուն ու կանաչազա՛րդ պատշգամին վրայ այնպիսի հաճելի զրոյց ունենալ իր եւ ընկհ. Գոհարին հետ՝ այսպէս, ասկէ-անկէ, մտերմիկ զրոյց:

Այդ հաճոյքը կը փնտռէի ամեն անգամ որ Պոսթըն այցելէի, կամ Գէյփ Գոտի ճամբուն վրայ՝ Պոսթընէն անցնէի, որովհետեւ միայն Թէօլէօլեաններուն հետ գտնուիլը, իրենց զբաղատ-թերթաշատ տան մթնոլորտին մէջ թէկուզ պահ մը կայք առնելը, սնուցիչ, հոգեպարար բան մը ունէր, որմէ չէի ուզեր զրկուիլ, չէի՛նք ուզեր զրկուիլ այր ու կին, յաճախ նաեւ ընտանիքով՝ մեր զաւակներուն հետ: Հաղորդութիւն մըն էր, որ կը ստանայինք իւրաքանչիւր այցելութեան...

Բայց Թէօլէօլեան ամուլին հաճելի խօսակից ըլլալը կը յիշեմ պատանեկութեանս իսկ օրերէն, երբ տարիով մը անոնք Գահիրէ եկան-հաստատուեցան ու ծնողքս ընտանեկան յարաբերութիւն սկսաւ մշակել անոնց հետ: Չեմ մոռնար երբեք ինչպէս կը կախուէի-կը մնայի իրենց բերանէն, երբ անոնք մեր հացը կը բաժնէին մեր տան սեղանին վրայ կամ «Գազինօ տէ փիժօն»-ի ծառայատ պարտէզներուն մէջ՝ Նեղոսի ափին:

Գալով ընկ. Մինասի հմտութեան,- ջրվէժի պէս կը հոսէր խօսքը իր բերնէն,- առաջին անգամ գայն ընկալեր էի այդ տարիներուն, նոյնիսկ անկէ ալ առաջ, երբ ան հրաւիրուած էր Եգիպտոս՝ դասախօսութիւններու երկար շարքով մը ներկայացնելու մէկ դար գրականութիւնը, որ երկհատոր գիրք եղաւ ու լոյս տեսաւ «Յուսաբեր»-ի տպարանէն: Այնքան հմայուած էի իր խօսքէն, որ ակնդէտ կը սպասէի յաջորդ ելոյթին:

Յետոյ, աւելի ուշ, «Հայրենիք»-ի մէջ վերագտայ ընկ. Թէօլէօլեանը, օրաթե՛րթ «Հայրենիք»-ին, որուն իւրաքանչիւր համարը խմբագրականով մը կ'օժտուէր, հայ կեանքը յուզող բազմապիսի նիւթերու շուրջ, յատկապէս մշակութային հարցերու նուիրուած: Իսկ շաբաթօրեայ թիւերը, կրկնակ ծաւալով՝ ութ մեծադիր էջերով, ընթերցանութեան համար անփոխարինելի պարզեւներ էին, կը զգայինք, որ կիրքով, սիրով, նուիրումով ու հաճոյքով կը պատրաստուէին «Հայրենիք»-ի թիւերը ընկ. Մինասի խմբագրութեան օրով: Մասնաւոր ուշադրութեամբ կը հետեւէի հայկական միջնադարեան կրթական-մշակութային կեդրոններուն նուիրուած իր երկար շարքին, եւ կ'ափսոսայի,- ու տակաւին կ'ափսոսամ,- որ առանձին հատորի չվերածուեցաւ այդ շարքը: Պիտի գտնուի՞ արդեօք գիտակից, գրասէր բարերար մը...

Ընկ. Թէօլէօլեանի հայրական ազդեցութիւնը վայելցի սակայն անկախ իր մեզի ընծայած մտաւոր սնունդէն: Ան ամբողջ կեանքը սէր ու գուրգուրանք սնուցեց մեզի՝ նորերու հանդէպ, եւ չվարանեցաւ հրապարակաւ ալ իր քաջալերանքը յայտնելու: Ահա հատուած մը աւելի քան քսանամեակ մը առաջ գրած իր մէկ խմբագրականէն, «Հայրենիք»-ի մէջ մեզմէ ոմանց գրութիւնները իր իսկ ձեռքով հրատարակելուն առթիւ.

«Ահաւասիկ գրական ու գիտական մասնագիտութեան տէր կանաչ գրիչներ, որոնք դաշտ կ'իջնեն հերկ ու ցան կատարելու համար. յանձնառութենէ չեն խուսափիր ու կ'ուզեն որ ուրիշներ ալ,- իրենց նման պատրաստութեան տէր,- լսելի դարձնեն իրենց ձայնը: Իսկ ինչ որ բարենշան երեւոյթ է՝ կը հաւատան բարեշրջումի նամբով յեղաշրջում ստեղծելու էական կարեւորութեան:

Գիտակ ըլլալով հանդերձ մեր դժուարութիւններուն ու տկարութեանց՝ կը մերժեն համակերպումի ամէն տրամադրութիւն: Կ'առաջադրեն ու կ'առաջարկեն ծրագիրներ՝ որոնք կրնան վիճելի կամ «ցնորական» նկատուիլ ումանց կողմէ եւ որոնք սակայն կրնան մեկնակէտ դառնալ հաւաքական ֆննութեան ու վերջնական ձեւակերպումի» («Նուիրումը չի բաւեր. – նիւթական կոուսնի կը կարօտին», «Հայրենիք», 11 յունուար 1977):

Իր այդ համոզումը եւ ակնկալութիւնները ընկ. Մինաս Թէօլէօլեան պահեց մինչեւ կեանքին վերջը: Ատոր անհերքելի ապացոյցը կը հանդիսանայ իր վերջին գրութիւններէն մէկը, մահէն քանի մը շաբաթ առաջ գրուած, ուր միշտ նոյն լաւատես ակնկալութեամբ ան կը դրդէր երիտասարդները իրենց խօսքը լսելի դարձնելու.

«Իսկապէ՞ս անկարելի է զօրաշարժ մը յայտարարել գրիչ բռնելու ընդունակ երիտասարդներու եւ յուսալու, որ անոնք զգացնեն իրենց ներկայութիւնը հայ մամուլի մարզերուն մէջ, ուր կրնան թարմութեան շունչ մը բերել, կարծիք ու տեսակէտ բանաձեւել՝ ո՛չ թէ անառարկելի վիճակներ արձակելու պարտաւորութենէ մը մղուած, այլ վիճելի, անհատական մտածումներ տալու համար թուղթին. շարժում եւ հետաքրքրութիւն ստեղծելու համար անպայման»:

Եւ իր եզրափակիչ տողերով ան ցոյց կու տար նաեւ ի՛ր մինչեւ վերջին շունչ պատնէշի վրայ մնալու, հանրային մարդու իր կոչումին հաւատարիմ մնալու յանձնառութիւնը.

«Դիտեցնէսի լապտերով հայ կեանքի իջած ենթացումը՝ յամա՛ն խրատատուններու կողմէն համեստ աշխատակիցներ գտնելու համար» («Ո՞ւր էք, տղա՛ք...», «Հայրենիք» 3 ապրիլ 1997, «Հորիզոն», 2 յունիս 1997):

Նկատի առէք, – կ'ըսէ, – «Իջած ենք», այսինքն ի՛նք իջած է, ու դեռ կո՛չ կ'ուղղէ մեզի: Յոգնիլ չգիտցող, գէնքերը վար չդնող, ձեռնթափ չեղող անխոնջ մարտիկը գազափարի...»

Կ'ուզեմ աւարտել յարգանքի ու սիրոյ այս քանի մը տողերը հանրութեան սեփականութիւնը դարձնելով 14-ամեայ պատանիիս յուշամատեանին մէջ իր մեզի ժառանգ ձգած իմաստութիւնը, որ ապացոյցը կը հանդիսանայ ազգային թէ՛ մարդկային արժէքներու նկատմամբ իր անխախտ համոզումներուն.

«17/7/54 – Քեզի ըսուած բոլոր գեղեցիկ խօսքերէն անդին՝ կան գեղեցիկ իրականութիւններ. լսէ՛ խօսքը, բայց փնտռէ՛ իրականութիւնը, որուն պէտք է հասնիս քու սեփական ուժերովդ, քու անհատական երազներուդ եւ իտէպներուդ համարով: Եթէ պատանիի ու երիտասարդի մարտիկան կարենաս գերծ պահել խաբուսիկ ու երեւութական երանութիւններէն (հանոյքներէն ու հեշտանքներէն)՝ կրնաս հաւատալ թէ չես դաւանանք քու մարդկային արժանիքներուդ եւ կարելիութիւններուդ. եւ, վստահ եղի՛ր, քու անհատականութեամբդ կ'արժեցնես քու անունդ («Արմէն»-ութիւնդ)՝ որուն կը հաւատամ ես. – Մինաս Թ.»:»

ՎՐԷԺ-ԱՐՄԷՆ
«Հորիզոն», 7 յուլիս 1997

Մոնթրեալ – Montréal

Առցանց հրատարակում – publication en ligne

<https://collections.banq.qc.ca/document/9AJNnQ3bIiv26Y0K1Qc1ZQ>